

ՎԱՂԻՆԱԿ ԲՅՈՒՐԱՏ



ԸՆՏԻՐ ԷԶԵՐ

ՅԱԳՃՅ յԿՏՆՆ • ՏՊԵՐԱՅԻՆ ԿՆՆՈՒՄԻՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ

**ՎԱՂԻՆԱԿ ԲՅՈՒՐԱՏ**

**ԸՆՏԻՐ ԷԶԵՐ**

Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ – 2002

ՀՏԴ 891.981-8 Բյուրատ  
ԳՄԴ 84Հ7  
Բ 758

**Գիրքը տպագրվում է  
«Բյուրատ» մշակութային կազմակերպության  
հովանավորությամբ**

Հրատարակության պատրաստեց  
*Մ. ԵՂԻԱՉԱՐՅԱՆԸ*  
Խմբագիր՝ *Հ. ԲԱԽՉԻՆՅԱՆ*

Կազմի գծանկարը՝ *Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆԻ*

*Բյուրատ Վաղինակ: Ընտիր էջեր: Արձակ, դրամատիկա-  
կան և հուշագրական գործեր (Վաղինակ Բյուրատ, – Եր.,  
ԳԱԹ, 2002, 176 էջ):*

Գիրքն ընդգրկում է գրող-հրատարակիչ, մշակութա-  
յին գործիչ Վաղինակ Բյուրատի գեղարվեստական գոր-  
ծերի և հուշագրության ընտիր մտւոններ: Բնագրերի մե-  
ծագույն մասը տպագրվում է առաջին անգամ:

Բ  $\frac{4702080106}{841(01)-2002}$  2002

ԳՄԴ 84Հ7



Վաղիգյան Բյուրատ  
(1886 – 1972)

Նվիրվում է Մեծ եղեռնի  
անմեղ զոհերի հիշատակին

## ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

1999 թվականին Թանգարանը հրատարակեց եղեռնամահ գրող Սմբատ Բյուրատի որդու՝ Վաղինակ Բյուրատի «Իմ կյանքի հուշերից» անտիպ հուշագրությունը: Այժմ ընթերցողին է ներկայացվում նույն հեղինակի երկերի սույն հատորը, որն ընդգրկում է «Թեզպիհը» պատմըվածքը, «Ծեյխի որդին» վիպակը, «Արյունոտ թաշկինակը» պիեսը և էջեր հեղինակի հուշապատումից:

Հիշյալ գեղարվեստական գործերը հայ ժողովրդի դեմ կազմակերպված Մեծ եղեռնի վերաբերյալ մեզ հասած արժեքավոր վավերագրերից են: Ականատես մտավորականի զգայուն հոգու և ապրած ցավի ինքնատիպ արտացոլքն են դարձել նրա այդ գրությունները, որոնք գեղարվեստական արժեք դառնալուց առաջ գալիս են մեկ անգամ ևս հավաստելու այն մեծ ոճրի իրականացումը, որ XX դարի սկզբին իրագործվեց հայ ազգի բնաջնջման միտումով:

Վ. Բյուրատն անձնապես է կրել մահատակ հոր և հարազատների կորստի ծանրությունը: Այդ պատճառով էլ նրա գեղարվեստական գործերն ունեն ընդհանուր խորագիր՝ «Դրվագներ 1915 թ. հայկական եղեռնեն»:

Այս իմաստով հեղինակի այդ գործերը կարելի է որակել նաև որպես փաստավավերագրական երկեր:

Բոլոր ստեղծագործությունները՝ հեղինակի ինքնագրերով, պահպանվում են Սմբատ և Վաղինակ Բյուրատների միացյալ ֆոնդում և ընթերցողին ներկայացվում են առաջին անգամ:

Նշված ֆոնդում պահպանվում են նաև Վ. Բյուրատի ինքնագիր հուշերը արևմտահայ գրողների և արտիստների մասին: Այդ տետրերից ընտրված են միայն ամենաանշանավոր դեմքերին վերաբերող հուշերը՝ ոչ հուշալից հատվածների կրճատմամբ:

Զբաղվելով հրատարակչական, մանկավարժական և հասարակական եռանդուն գործունեությամբ՝ Վ. Բյուրատը բախտ է ունեցել այս կամ այն չափով հաղորդակցվելու արևմտահայ մտավորականության ամենախոշոր դեմքերի հետ: Այդ պատճառով, ինչպես նաև մեծանուն հորը շրջապատած ընտիր միջավայրի շնորհիվ, նրա հուշապատումը դարձել է ժամանակի յուրօրինակ հայելին:

Որքան էլ հեղինակի շարադրանքը երբեմն անհարթ է ու ճապաղ, ամբողջության մեջ, սակայն, հուշապատումը հաջողված է և յուրովի լրացնում է եղեռնի թեման շոշափող գեղարվեստական գործերը:

Հուշերը, բացառությամբ հոր՝ Սմբատ Բյուրատի մասին տպագրված հատվածի, նույնպես առաջին անգամ են ներկայացվում մեր ընթերցողին:

Հատորն ընդգրկող գործերի մի մասը արևմտահայերեն է, մյուս մասը՝ արևելահայերեն, ինչը հեղինակի ապրած աստանդական կյանքի արտացոլքն է:

Որքան էլ արևմտահայերենին անհարիր, սակայն արևմտահայ բնագրերը ներկայացրել ենք արդի արևելահայերեն ուղղագրությամբ ու կետադրությամբ՝ պահպանելով հեղինակի հիմնական գրելաձևը: Վերջինիս ըստ ամենայնի ներկայացնելու համար հատորի սկզբում զետեղել ենք նրա ֆոնդում պահպանվող ինքնակենսագրությունը:

Կարծում ենք՝ սույն հատորը յուրատեսակ հուշարձան կլինի Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

## ԻՆՔՆԱԿԵՆ ՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ որդին եմ պատմավիպագիր, Ապրիլյան եղեռնի զոհ Սմբատ Բյուրատի. ծնած Կիլիկիո Զեյթուն գավառակը 1886 թվի օգոստոսի 10/22-ին: Զեյթունի մեծ հրդեհին՝ 1887 թվին, հրո ճարակ լինելով հորս նորակերտ բնակարանն ալ, կը փոխադրվինք Կ. Պոլիս և աստանդական կյանք մը անցնելե վերջ, 1896 թվի վերջերին կը փախչինք Եգիպտոս: Նախնական կրթությունս՝ հորս հիմնած 1898 թվի Կահիրե Կեդրոնական կրթարանին մեջ, 1901–1903 թվերին՝ Աղեքսանդրիա՝ Ecole suisse, հուսկ ուրեմն՝ Վենետիկ՝ Մուրատ-Ռափայելյան լիցեն:

1909 թվի առաջին ամսին Կ. Պոլիս հիմնած եմ «Ժամանակակից մատենաշարը»՝ նվիրվելով հրատարակչության. մինչև 1914 թվի աշնան հրատարակած եմ 32 անուն պատմական, ռեոլյուցիոն վեպեր, մեծամասնությամբ հորս ազգային պատմավեպերը: Անիծյալ տարիներուն տպարանս և հրատարակություններս Իթթիհատ թուրք կառավարության կողմե բռնազրավված են: 1920–1924 թվերին նորեն բաց անելով հրատարակչական գործս՝ մինչև 1924 թվի աշնանը հրատարակություններուս թիվը հասավ 53-ի, վերջինը՝ Ալֆոնս Դոդեի «Ճեքը»:

Առաջին քրդական ասպտամբության ժամանակ թարգմանը եղած եմ ֆրանսիական “Matin” օրաթերթի պատասխանատու խմբագիր Լյուդովիգ Նոդոյի, որը պատերազմական օտար թղթակից էր: Ամբողջ վեց նահանգները՝ շարքի վիլայեթները, շրջած եմ բանակին առընթեր...

1936 թվին Լիբանանի մայրաքաղաք Բեյրութ նորեն

վերականգնեցի սիրական հրատարակչական գործս և մինչև 1941 թվականը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմը, մատենադարանիս թիվը հասավ 94-ի: Հրատարակած եմ Ավ. Իսահակյանի «Աբու Լալա Մահարին»՝ նկարազարդ գեղարվեստական հրատարակություն, Ալեքսանդր Դյումայի «Մոնտե Բրիստո» վեպի շարունակությունը եղող «Մոնտե Բրիստոյի որդին» վեց հատոր հսկա գործը իմ թարգմանությունը և ուրիշ թարգմանական վեպեր:

1946 թվին Ավ. Իսահակյանի, որը մեր ընտանիքի մտերիմն էր, միջամտությունը պետական հրամանով արժանացա հայրենիքս տեղափոխվել:

Քսան երկար տարիներու տքնաջան աշխատանքով պատրաստած եմ «Պան թուրանիզմ և քեմալական շրջան» աշխատությունը՝ օգտվելով Կ. Պոլսո Պատրիարքարանի արխիվներեն: Այս գործս Հայաստանի պետական թանգարանը որպես արխիվային նյութ վերցուց, ինչպես նաև «Իմ հուշերը Արևմտահայ գրողներու մասին» գործս:

1960 թվականից կենսաթոշակառու եմ և կը զբաղիմ գրականություն:

22 մայիսի, 1963 թ.

ԹԵԶՊԻՀԸ

ԴՐՎԱԳ ՄԸ 1915 Թ. ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԵՆ


7(29)

Հարկում Ա. Դյուրան

==

«Ժողովրդ» Շ

Միայն Շ 1915 թ. հայ-խառն եղբայրներ



«Թեզպիհը» պատմվածքի ինքնագրի անվանաթերթը  
(ԳԱԹ, Վ. Բյուրատի ֆոնդ, թիվ 7)

Շեյխ էլ Հուվեյթի իսկն թուլա Ահմատ էլ Խալաֆ ապու Իպրահիմը ազդեցիկ անձնավորություն էր Շամիայի\* մեջ:

Անիկա Հյուսիսային Սուրիայի Ռաքքա գյուղաքաղաքի միահեծան տերն ու տիրակալն էր:

Ո՞վ էր այս շեյխը. թող պատասխանեն: Առաջին համաշխարհային պատերազմեն վերապրող մեր թուրքահայ տառապյալները, որոնք ցմրուր ըմբոշխնած են ահավոր Սպանդի լեղի բաժակը:

Կ'ըսեն, թե շեյխ Ահմատ էլ Խալաֆ, որդոց որդի, Հուվեյթի աշիրեթին երեսնամյա ցեղապետն էր: Անիկա ուներ հսկա հարստություն՝ հարյուր հազարավոր օսմանյան ոսկեդրամներու հասնող և անհատնում, անծայրածիր բերրի հողեր Եփրատ գետի եզերքին: Ռաքքա գյուղաքաղաքեն 18 կմ հեռու դեպի արևելք՝ Թահլա գյուղի իր ապարանքը կը բնակեր՝ մեկ հատիկ զավկին՝ Իպրահիմ պեկի հետ:

Անիկա թիկն տված դամասկյան մետաքսահեռ սրնդուսե և թռչուններու աղվամազերեն պատրաստված բարձերուն՝ կը ծխեր ոսկեդրվազ հախճապակե թանկագին նարկիլեն, որուն քուլա-քուլա ծուխը, բերնեն դուրս ժայթքելով, կը խոկար և ձեռքի թեզպիհը կը տրորեր երազկոտ...

Կ'երագեր 1915 թվականը... այն երանելի օրերը, երբ ինքը հրոսպետ մըն էր՝ արժանի ըսվելու քաջ, սակայն այն ժամանակ քառասունհինգ տարեկան էր:

\* Շամիան Դամասկոսեն Բաղդադ երկարող անապատի ճանապարհն է:

Շամիրան կտրող-անցնող կարավանները անպայման պետք է հանդիպում ունենային շեյխ Ահմատ էլ Խալաֆի օսլան և հետո շարունակելու իրենց ճամբան... Հակառակ պարագային, իր ահարկու աշիրեթի հրոսակները հաշիվը կը մաքրեին այն կարավանին, որը աչքաթող էր ըրած իրենց մեծ շեյխը:

Շեյխ Ահմատ էլ Խալաֆը շատ անգամներ արշավանք կազմակերպելով՝ կը հարձակեր մինչև իսկ ըումի թուրքերուն վրա և ճոխ ավարով ետ կը վերադառնար: Այդ ժամանակ իր քաջերեն մեկ քանի տասնյակներ կ'ամուսնացներ:

Այդ շրջանին, վերապրող հայ խլյակները սարսուռով կը հիշեն այդ մարդ-գաղանին անլուր շահատակութունները, անհաշիվ ոճիրները, Եփրատ գետի եզերքը քայլող կարավաններուն, որոնք Շամիրայի ճանապարհով կ'երթային մահաքաղաքը՝ հանրածանոթ Դեյր էզ Զոր՝ այնտեղ հալվելու և ջնջվելու, իրենց թարմ տարիքին մահանալով, անլուր չարչարանքներու ենթարկվելե վերջ:

Այս հրեշի աչքեն չէր վրիպած, կ'ըսեն, ո՛չ մեկ գեղանի և թարմատի անմեղ հայուհի: Անոր հարեմը մտած և մահացած են ավելի քան երեք հարյուր կույսեր, չորս հարյուր օրերու ընթացքին՝ մինչև 1916 թվականի ամռան...

Արյունով էր ներկված այս վամպիրին հարեմը:

Անոր պիրկ բազուկներուն մեջ ճգմված էին ազգիս անմեղունակ հրեշտակները, լլկվելե, պղծվելե, հրեշին կիրքը հագեցնելե վերջ, անոր օսլային մեկ հեռավոր անկյունը պատրաստված այրած կիրի հորին մեջ նետվելու էին՝ ողջ ողջ կամ դաշունահար եղած:

Եվ հիմա, շեյխ Ահմատ էլ Խալաֆ իր շահատակութուններու ծրարը կը քակեր երազկոտ աչքերով, հազիվ թե շրթունքները իրար կպչեին, կարծես կ'աղոթեր բարձրյալն աստված՝ մրմնջելով և դողացող ձեռքին մեջ թեզ-պիհը քաշելով ջղաձգորեն:

Ինչպե՞ս ելլեր այս անելին մեջեն. իր մե՛կ հատիկ դա-

վակը սպառնացած էր ինքնասպան ըլլալ, եթե իր իղձը անկատար մնար...

Ջավակը խենթի նման սիրահարված էր շեյխ Սապրի էլ Ճասըմի, որը Փատուլա աշիրեթի ցեղապետն էր, մեկ հատիկ, միամոր հուրի մեկը աղջկանը՝ Շեմա էլ Նիհարին։

Որքան որ անվանի աշիրեթապետ մը չէր Սապրի էլ Ճասըմը և սակայն հավիտենական ոխերիմ թշնամիներ էին իրարու...

«Ո՛վ տեր մեծագոր աստված, ինչպե՞ս ընեմ, որ իմ և անոր սիրտը գրավեմ, քանի որ դեռ մեր մեջ կը մնա արյան վրիժառությունը. իրարու արյուն խմելու պատրաստ ենք, սակայն ինչպե՞ս գիմանամ զավկիս՝ մեկ հատիկ սիրական Իպրահիմիս աղերսին...

Եվ միթե այսպես չե՞մ եղած հիսուն տարիներ առաջ, աննշան շեյխի մը՝ Մավվուշ էլ Բուրհանի աղջկան չէի՞ սիրահարված, այն աղջիկը՝ ճեննեթեն փախած, ոչ հողածին արարածին, որուն սլացիկ իրանը՝ բարդիի հանգույն, հրաբորբոք կուրծքը՝ այն երկու գնդիկ նարնջածաղիկները, որոնք դուրս էին պոթկացած ձյունաթույր լայն կուրծքին վրա, այդ հրաշագեղ Շաֆիքան, որմե մերժվելուս վրա, կատաղած, այդ հուրի մեկերին կուրծքը մխեցի երկսայրի դաշույնս՝ անշունչ դիակը ձգելով եփրատի եզերքին՝ ավազը ներկելով անմեղ աղջկան արյունով և ջուրով լեցուն կուծն ալ դիակի կողքին...

Որքան որ Մավվուշ էլ Բուրհանի շեյխը կասկածիլ սկսավ, թե իր սիրական աղջկանը ոճրագործը ես եմ, սակայն կասկածը մնաց սոսկ կասկած. իմանալով իմ հոգեկան տառապանքս, ողբալս և հիվանդանալս, մինչև իսկ անձնասպանություն փորձելս Շաֆիքայիս սիրուն՝ կասկածը փարատած, մինչև իսկ հիվանդատեսի գալով մոտս, ինձ մխիթարած էր...

Եվ ալլահը հիմա ինձ պատժել կ'ուզե ոճիրիս համար, որուն վրայեն կես դար է անցած... Այս անգամ տարբեր է. զավակս ինձ պես փոխանակ սիրածին սպանելու, կ'երդնու ինքնասպան ըլլալ. դեռ երեկ ինձ ըսավ. «Հա՛յր,

պետք է խնամախոս երթաս և գիտցա՛ծ եղիր, եթե ձեռն-  
ուռնայն վերադառնաս, ինքզինքս կը սպանեմ Շեմս էլ Նի-  
հարիս սիրույն»:

Վերջապես շեյխը վերջ կուտա երազանքին. կը նստի  
իր ուսվան ձին, որը Մուհամմետի առասպելական ձնե-  
նեթի պորաճ նժույգեն վար չէր մնար, նժույգին վրա  
նետված խուրճինի երկու խորշերուն մեջ չորս տուրակ  
հազարանոց, չորս հազար օսմանյան ոսկեդրամ լեցրած,  
արշավասույլ սուրաց դեպի Ջամմուն գյուղը՝ շեյխ Սապ-  
րի էլ Ճասըմի օպան:

Շեյխը տեսնելով դեպի իր օպան սուրացող Հուվելթի  
աշիրեթապետին՝ անմիջապես տաք ավազին վրա բորեկ  
ոտքերով կը վազե. հասնելով նժույգին՝ կը բռնե պա-  
րանեն, կ'օգնե անոր՝ ձինն վար իջնելուն: Իրարու ուս  
համբուրելի, պայմանական «ի վերա ձեր, աստվածաշնորհ,  
բարի և հաղթանք, հրամեցեք» ըսելով՝ կ'առաջնորդե հյու-  
րասենյակ: Անմիջապես ավանդական լեզի սուրճը՝ Շեմենի  
կանաչավուն, մանրահատիկ, մեկ քանի անգամ իրար վրա  
հրամցվելի վերջ, շեյխ Ահմատ էլ Խալաֆ այսպես կը խոսի.

— Ո՛վ շեյխ Սապրի էլ Ճասըմ, ասկե վերջ թող անիծվի  
մեր աշիրեթներուն մեջ տիրող խուլ թշնամանքը, բարի  
նպատակով եմ եկած: Իմացի՛ր, որդիս Իպրահիմ պեկը  
խենթի նման սիրահարված է միամոր աղջկանդ, ալլահը  
պահե, հուրի մեկեք Շեմս էլ Նիհարին: Մի՛ մերժեր, թող  
բարին կատարվի, և երկու սիրահար զույգերը երջանկա-  
նան: Գիտցի՛ր, որ մերժումիդ պարագային սուգը իջնելու  
է օպայիս վրա... Մեկ հատիկ զավակս անձնասպան պիտի  
ըլլա, և անոր մահվան կը հաջորդե ի՛մս: Խղճա՛ վրաս,  
յոթանասուն տարիքս անցած է. տե՛ս աղջկանդ արնա-  
գինը գնահատել եմ չորս հազար բումի տեհեպ ուշատի.  
բոլորն ալ նոր՝ թըրթըրը վրան: Եթե այդ բավարար չէ,  
պահանջե՛, ավելին տայու պատրաստ եմ. մի՛ մերժեր ծե-  
րուկիս, ոտքդ եմ եկեր:

Շեյխ Սապրի էլ Ճասըմ վայրկեան մը լու՛ռ խոկալե  
վերջ այսպես կը պատասխանե.

– Ո՛վ մեծ շեյխ, աղջիկս դեռ փոքր է, ամուսնացնել  
չէ՛մ ուզեր:

Մերժումը համազոր էր դաշույնի հարվածին, շեյխ Ահ-  
մատ էլ խալաֆ՝ սրտեն զարնված, իր օպան վերադառնա-  
լով, հուզված, լալով կը պատմե իր ձախորդությունը,  
զավկին կը հրահրե փոխանակ անձնասպան ըլլալու, վրեժ  
լուծել այդ տմարդի, փոքրոգի շեյխեն:

Իպրահիմ պեկ, իր մեծագոր շեյխ հորը նվաստանալը  
տեսնելով, գիշեր ժամանակ՝ լիալուսնին, դարանակալ կը  
սպասե և տեսնելով շեյխ Սապրիին ձիու վրա՝ դեմը կտրե-  
լով մավզեր հրացանը կուրծքին ուղղած՝ կը գոռա.

– Ո՛վ շեյխ, անարգանքդ չկրցա մարսել, մեռի՛ր, – և  
կը քաշե՝ ուղիղ կուրծքեն զարնելով թե՛ շեյխը և թե՛  
անոր նժույզը՝ որպես նախատինք:

Նույն գիշերը՝ երկուստեք կարճատև կռիվ մը կը լինի,  
և հետևանքը՝ երկու կողմեն տասնյակ մը զոհեր...

Անմիջապես վրա կը հասնին ֆրանսական հոգատար  
պետութեան հարյուրի չափ զինված սպահիներ: Կը ցրվեն  
կռվողները, մեկ քանի հոգի ալ ձերբակալելով՝ կը փակեն  
խնդիրը:

Իպրահիմ պեկ փախուստ էր տված կռվի տաք պահուն  
և մեկ տարի վերջ կը հայտնվի Ռաքթա՝ նորեն իր պաշ-  
տոնին անցնելով:

Ահա կյանքը անապատի վաչկատուն ցեղերուն, որոնց  
մոտ մարդկային կյանքը հավու ճուտի մը չափ իսկ ար-  
ժեք չունի:

## II

### ՔՍԱՆԵՎՅՈՒԹ ՏԱՐԻ ՎԵՐՋ

1942 թվականին էր: Ռաքթա գյուղաքաղաքի Արամյան  
ծխական դպրոցի պատասխանատու ուսուցիչն էի:

Ռաքթա գյուղաքաղաքը Դեյր էզ Զոր քաղաքեն 135  
կմ Շամիայի ճամբուն վրա էր:

Հայերը, բոլորն ալ գրեթե 1915 թվականի Մեծ եղեռնին վերապրող եղեսիացիներ, հազիվ թե ըլլային հիսունեւհինգ տնվոր հայութիւն, բոլորն ալ ինքնապաշտ, բարեկեցիկ և սիրված անապատի վաչկատուն ցեղերէն, որոնց հետ առևտուր կ'ընէին:

Նոյեմբերի 16-ին էր, ցուրտ օր մը, կես օրվա մոտ երեք ընկերներով գացինք Թահլա գյուղը՝ մեծ շէյխ Ահմատ էլ Նալաֆին, բայրամի տոնի առթիւ:

Մեր ինքնաշարժը օպայի մեծ դռնէն ներս մտաւ, ընդարձակ մարգագետինն վրա սահելով, ընդունելութեան մեծ սրահի դռան առջև կանգ առաւ: Ծառայողներ մոտեցան, դիմավորեցին մեզ և ներս հրավիրեցին: Շէյխը բազմած էր փափուկ օթոցներու վրա՝ դամասկյան բեհեզներէ ոսկեթել բանվածքներով բարձերու թիկն տված: Առանց տեղէն շարժելու, ժպտուն ու սիրալիր մեզ ընդունեց. տեղավորվեցանք դեմ ու դեմը՝ թաղիքներու վրա փռված պարսկական գորգերու վրա նստանք: Այնտեղ էին Ռաքքա գյուղաքաղաքի նահանգապետի տեղակալ Նուհ պեյ և Քրանսական հոգատար պետութեան ներկայացուցիչ կապիտէն դը Ռոլլեն:

Ամբողջ հյուրերուն մեջ եվրոպական տարազով Քրանսացի խորհրդականն ու ես էինք:

Հազիվ թե լրացաւ սպասվող հյուրերուն թիւը, ութ ծառայողներէ բաղկացած խումբ մը մեծ սինի մը ներս բերին, որուն տրամագիծը երկու մետրէն պակաս չէր, և տասնեւիցէ կանթ ունէր՝ արծաթի նման պսպղուն կլայկոված. մեջը դրված էր ավանդական եղինձ և անոր վրա՝ չորս կարմրած, խորոված ոչխարներ:

Շէյխը ավանդական «հանուն աստուծո» ըսելով, հագած մետաքսահեռ պատմուճանի թեղանիքները հանգրիճելով՝ երկու մազոտ ձեռքերուն տասը մատներովը հոշոտեց առաջին ոչխարը, հետո խոշոր կտոր մը վերցուց, բավական կրծոտելէ վերջ հանձնեց իր քով բազմած կրոնապետին. անիկա ալ նույն կերպով կրծոտելէ վերջ տվաւ իմամին, որը նույնպէս կրծելէ վերջ տվաւ մոլլային, և

այսպէս շեյխե-շեյխ, մինչև որ ոսկորը սրբված էր մսերեն: Ամենքս ալ մեր աջ ձեռքի երեք մատներով բարակ հացի կտոր մը բռնած՝ կը մխրճեինք խորովածին մեջ: Սեղանին խմիչք գոյուլթյուն չունէր. անոր փոխարինած էր ոչխարի յուղալի անարատ սառը թան. կապե խոշոր թասերով կը հրամցնէին:

Ճաշը վերջանալուն, մոլլա Համտունը օրհնեց սեղանն ու սեղանին տերը՝ փառք տալով ալլահին, և արեւշատու-թյուն մաղթեց Հուվեյթի փառապանծ աշիրեթապետին:

Ձեռքերնիս լվալու համար մոտուցեցին ըպրըզ լեզեն և օճառ: Շեյխերեն շատերը իրենց յուզոտ մատները սըրբած, մաքրած էին իրենց պատմութեան քղանցքին: Լոռ-թյուն տիրեց. քիչ վերջ հրամցուցին լեզի սուրճը:

Շեյխերեն մեկը ափին մեջ իրար վրա դետեղած էր տասնի չափ փոքր Փայանս բաժակներ, մյուս ձեռքին ալ՝ դեղին, ոսկիի նման փայլող արույրե սրճամանը, շարքով սկսավ հրամցնել:

Այդ ժամանակ սեղանակիցները կը խոսակցէին իրարու հետ անցած-դարձած օրերու և եղած պատերազմներու ու նախնիներու մասին, նախ և առաջ օգի հարափոփոխ ընթացքեն, փառաբանեցին ալլահը, որ այս տարի անսպասի ալեյի քան կես միլիոն վրանաբնակ վաչկատուն պետլիներն բարձրալն ալլահի շնորհիվ զերծ մնացին անապատի պատուհաս էճեճեն\*:

Հանկարծ ուշադրությունս գրավեց շեյխ Ահմատ էլ Խալաֆի ձեռքի թեզպիհը, որը տենդագին կը շարժեր ձեռքին մեջ: Ձեռքս երկարեցի և վերցուցի զայն, որը սիրով տվաւ: Ձեռքիս մեջ սկսա հատիկները հաշվել. հիսուն զույգ էին, զարմանալին այն էր, որ այդ հատիկները ո՛չ սաթ և ո՛չ ալ ձիթապտուղի կուտերն շինված էին. ռետի-նի նման կակուղ, կարծես չորցված մսի բեկորներ լինէին:

---

\* Էճեճ — ավազամբրիկ. 1932 թվին երեք հազար վրան զոհ գնացին, մեծ մասով երեխաներ, ծերեր, կիներ և ընտանի կենդանիներ: Գետնն բարձրացող ավազե սյուներ են, որոնք կը բարձրանան հարյուր մետրեն ավելի և մեկ անգամեն փուլ կուգան:

Շեյխին դառնալով՝ հարցուցի, թե ինչե՞ն պատրաստված է այս թեզպիհը:

Շեյխ Ահմատ էլ Խալաֆի դեմքը զվարթացավ, աչքերը սկսան վառվիլ և ինձ դառնալով՝ ըսավ.

— Ով ուսուցի՛չ, ես քեզի շա՛տ սիրեցի, քանի որ դավ-կիս՝ Իսլրահիմ պեկին, դաս կուտաս. ֆրանսերեն պիտի սորվեցունես: Ուրեմն գիտցի՛ր, որ այս թեզպիհը քանի շարժեմ, կարծես կ'երիտասարդանամ, նոր կյանք կուգա վրաս, իմ նախկին արկածներով լեցուն կյանքս կը վեր-հիշեմ, այս հատիկները իմ սիրած ու վայելած հուրիներու — հրեշտակատեսիլ հիսուն աղջիկներու ստինքներու ծայ-րի սևորակ պտուկներն են. հաճույքիս և հիշատակի հա-մար անոնցմե այս թեզպիհը շինել տված եմ:

Շեյխին այս խոսքերը ցնցեցին ինձ. արյունս կարծես սառեցավ երակներուս մեջ, աչքերս մթնեցին, կերած հացս քթես-բերնես եկավ...

Վերջապես մեկնելու պահը հասավ, բոլորս ոտքի ել-նելով՝ շնորհակալություններու երկար շարանը մեկ քանի անգամ կրկնելե վերջ, վերադարձանք Ռաքթա:

Ամբողջ գիշերը մղձավանջային նոպաներու մեջ հար-չարվեցա. աչքերս քուն չունեին, մինչև լույս մտասե-ռումս շեյխին դժոխային գործն էր: Ինչպե՞ս էր մտահղա-ցել այսպիսի անօրինակ ոճիր...

Հայկական տարագրութենեն շա՛տ ու շատ եղերեր-դական դրվագներ լսած էի. մանավանդ Տիգրանակերտ քաղաքի և շրջակա գյուղերուն մեջ տեղի ունեցած ան-լուր և դժոխային ոճիրներ:

Կը մտածեի վրեժի մասին: Հնարք մը պետք էր խորհիլ. — գործե՛լ պետք էր: Կեսօրվա զբոսանքի պահուն, աշակերտ մը ղրկեցի կոշկակար Մինաս Պեքմեզյան Եդեսիա քաղա-քացի երիտասարդին՝ որքան կարելի էր շտապ մոտս գալու:

Տաս ըոպե չէր անցած, երբ Մինասն եկավ, սիրալիք բարևտուքեն վերջ հարցուց.

— Ի՞նչ անակնկալ կա՝ այսպես անժամանակ ինձ կան-չելու:

Հակիրճ պատմեցի մեր՝ ԹաՀլա գյուղը շեյխ Ահմատ էլ Խալաֆի օպան բայրամի հյուրասիրության երթալնիս, մանավանդ մղձավանջս եղող թեզպիհի պատմությունը:

Եվ մենք որոշեցինք վրեժխնդիր ըլլալ...

\* \* \*

1942 թվականի նոյեմբերի 19-ին, երեկոյան ժամը հինգին, Մինաս Պեքմեզյան, իր համաքաղաքացի Սարգիս Մեյխանեճյան քաջարի երիտասարդը և ես՝ երեքով գացինք ԹաՀլա գյուղը, որպես թե ինձ կը տանեին այնտեղ, շեյխի զավկին Փրանսերենի դասով պարապելու, մինչդեռ Մինաս, նույն օրը իմացած էր, թե Իպրահիմ պեկ մեկնած էր գյուղերը աղնամի հավաքելու, և թե օպան ուրիշ մարդ չկար, բացի շեյխեն և անոր միակ ծառա ծերունի Օսման աղայեն: Իպրահիմ պեկ հազիվ թե ութ օր վերջ վերադառնար:

Կես ժամ վերջ հասանք գյուղ, և դուրսի մեծ դռան առջև կանգ առավ մեր օթո քառը:

Ծերունի Օսման աղա դուռը բացավ, ինձ տեսնելուն՝ սիրալիր «հրամեցեք» ըսավ և մեզ հրավիրեց մեծ շեյխին մոտ:

— Բարև ի վերա ձեր, ո՛վ մեծ շեյխերնիս, — ըսելով՝ դեռ ոտքի վրա կը սպասեինք:

Շեյխը, ինչպես միշտ, նույն դիրքով ծալապատիկ նըստած էր՝ ծունկերուն վրա Ղուրանը՝ հավատո գիրքը, ձեռքին ալ թեզպիհը:

Մինասն ու Սարգիսը Օսման աղայեն խնդրեցին ցույց տալ արտաքնոցը, և երեքն ալ դուրս գնացին. շեյխը սիրալիր ինձ հրավիրեց նստել բազմոցին: Ըսի, թե «Դաս տալու եմ եկած, քանի որ Իպրահիմ պեկ չեկավ ինձ մոտ, ես ալ մեր երկու այս ծանոթ հայերու օթո քառով եկա»:

Շեյխ Ահմատ էլ Խալաֆ ցավ հայտնեց, որ զավակը գյուղերն էր գացած և ութ-տաս օրեր վերջ պիտի գա:

Այդ պահուն Մինասն ու Սարգիսը ներս մտան հյուրասրահ: Ես ոտքի ելնելով՝ ըսի.

— Ուրեմն, ո՛վ մեծդ շէյխ, բարի հանգստութիւն և առողջութիւն ձեզ կը մաղթենք, մեկնինք:

Շէյխը ստիպեց գոնե ավանդական սուրճը խմել, և «Ով Օսմա՛ն» խոսքը բերանը մնաց. հանկարծ Սարգիս առյուծի նման նետվեցավ շէյխին վրա՝ պինդ կառչելով կոկորդեն, Մինասն ալ շէյխի գլխու փաթթոցը բերանը թխմեց, որպեսզի չհարենա ձայն բարձրացնել: Հինգ րոպե վերջ շէյխին գործը վերջացած էր: Այդ ժամանակ ես արդեն, աննշմար, շէյխի ձեռքի թեղպիհը գրպանս սահեցուցած էի: Մենք հանդարտ ու հանգիստ դուրս սուրացինք աննշմար օպայեն, առանց ուէ թանկագին իրի ձեռք տալու, մինչև իսկ շէյխի ոսկե ժամացույցը և անգին մատանիները...

Արտաքնոցի պատրվակով նույն տեղը խեղդամահ ըրած և այնտեղ ձգած էին Օսմանին:

Մենք մեր վրեժը լուծած էինք. իմ արյունես, իմ նահատակ անբասիր կույսերուս վրեժը՝ քսանևյոթ տարի վերջ:

\* \* \*

1943 թվականի արձակուրդն էր. Ռաքբա գյուղաքաղաքեն մեկնեցա Բեյրութ Լիբանանի մայրաքաղաքը, ընտանիքիս մոտ անցնելու երեք կիզիչ ամիսները:

Լիբանանի հովանուտ, առողջարար օդովն ու ջրերով անվանի լեռնային Պիքֆայե գյուղին մեջ սենյակ մը վարձեցի:

Օր մըն ալ Սոֆար գյուղը գացի, որտեղ Կիլիկիայի կաթողիկոսական տեղակալ Եղիշե Կարոյան և իմադ Աջապահյան սրբազանները ամառանոց եկած էին:

Կարոյան բազկաթոռին նստած՝ կը խոկար՝ ձեռքին մեջ շարժելով և համբելով զույգ-զույգ սաթի խոշոր հատիկներով թեղպիհ մը:

Բարեկեցի զվարթ դեմքով մը և ըսի.

— Սրբազան, ես քեզի անանկ թեզպիհ մը բերած եմ, որ այդ ձեռքինդ իմինիս քով ոչ մեկ արժեք չներկայացներ:

Եղիշե Կարոյան այս խոսքիս վրա տաքցավ և.

— Ամմա ըսիր հա՛... Ծո՛ւ՝ Սմբատիս տղա, ես այս թեզպիհին քառասուն տարիներ առաջ տասը հատ օսմանյան ոսկեդրամ վճարած եմ. ատ քովինդ ինչե՞ն է... ի՞նչ անգին քարերե է, շու՛տ ցույց տուր, հելե մեյ մը տեսնեմ, սիրտս մի՛ հատցունեք, տու՛ր տեսնեմ:

— Սիրելի սրբազան, իմ թեզպիհը քսանեութ տարեկան է. հոգի կա վրան. նախ սա ալեկոծ սիրտս հանգստացուր. գիտցի՛ր, որ մեծ ոճիրի մը շնորհիվ ձեռք ձգած եմ զայն...

— Ա՛յ մարդ, ի՞նչ ոճիր, ի՞նչ սրտի հանգստություն տալ, հիմա պիտի ճաթիմ, շուտ պատմե՛, ներսինդ դու՛րս թափե, — ըսավ Կարոյան:

Հուզմունքով պատմեցի ամբողջ եղելությունը. հանկարծ Կարոյան, ինքն իրմե ելած, վեր նետվեցավ թիկնաթոռեն և բարձրաձայն սկսավ պոռալ.

— Սրբազան տեր եղբա՛յր խաղ, շուտ քո՛վս եկուր...

Աջապահչյան խաղ սրբազան կ'երևի այդ հետմիջօրեին Մորփեոսի գիրկը ըլլար, հանկարծ մահճակալեն վար նետվեց և գիշերանոցով վաղեց մեզ մոտ:

— Ի՞նչ կա, սրբազան տեր եղբայր, կրա՞կ կա... թե ոչ տյուրդիները խուժեցին մեզ վրա...

— Երանի թե տյուրդիները՝ այդ արյունարբու լեռնականները, խուժեին մեզ վրա՝ թե՛ թալանելու և թե՛ մեզի ալ նահատակեին. ա՛խ, ես այն Աստուծո մորուքը չիյտեմ ի՛նչ ընեմ, նալլաթ, երիցս նալլաթ Աստուծուն ալ, Քրիստոսին ալ...

— Կարոյա՛ն, խենթեցա՞ր, ի՞նչ եղար, ափեղ-ցփեղ դուրս կուտաս կրոնականի անվայել խոսքեր, գիժանոց երթալիք ապրանք եղար, — ըսավ խաղ:

Կարոյանի դեմքը լրջացավ և ինձ դառնալով՝

— Սմբատի՛ս տղա, մեկ անգա՛մ ալ պատմե, թող խաղ սրբազանն ալ իմանա, տե վերջեն ինձի խենթեցար թող ըսե:

Ծայրե ծայր ամբողջը նորեն պատմեցի՝ գրպանես հանելով թեզպիհը՝ հանձնեցի Կարոյանին:

Կարոյան, հուզված, արցունքը աչքերեն վար կաթկթելով մորուքին, այսպես ըսավ.

— Կյանքիս մեջ չա՛տ բան լսած էի հայկական եղեր-երգության վրա, և սակայն ասիկա բոլորը գերազանցեց. արգա՛ր գործ ես կատարած, Աստուծո չըրածը դու՛ն ես ըրեր, երիցս ներված ես, մեղք չունիս. մեր Աստվածը կույր է եղեր... Այս սուրբ մասունքին՝ այս նվիրական թեզպիհին համար, կիրակի՝ Աստվածածնա տոնին, հանդիսավոր սուրբ պատարագ և հոգեհանգիստ մատուցանելու ենք և թեզպիհը Մայր տաճարի դուրսի նահատակաց ապակեպատ խորան Գանկախաչ մատուռին մեջ կը զետեղենք: Օրհնյա՛լ ըլլա նահատակ կույսերու հիշատակը...

ՇԵՅԽԻ ՈՐԴԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԵ՝ 1915 թ.  
ԵՂԵՌՆԵՆ ԴՐՎԱԳ ՄԸ

Elizabeth Rygh

присоединяется к 1915 г. к 1916 г. присоединяется к  
- к 1917 г. - к 1918 г. -

[illegible]

Paraphrase your own phrase to a different meaning (paraphrase)  
the 4th of July (Independence Day) tonight there is a special  
celebration in the town square, and the fireworks will be  
set off at midnight.

[illegible]

---

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բռնակալ թուրք իթթիհատ վե թերաքըը կուսակցու-  
թյան դեկավար ջոլիրը, վաղուց ըլլալով գերման Վիլհելմ  
II կայսեր կամավոր գործիքն ու զինակիցը, մասնակից ե-  
ղավ ահավոր Առաջին համաշխարհային պատերազմին:

Թուրքին դարավոր երազն էր Անատոլուի արևելյան  
վեց նահանգներու հայերը ջնջել և այդպիսով վերջ տալ  
Հայկական դատին, որը մղձավանջ մըն էր եղած:

Այս հրեշները ամենքեն առաջ ոճրածին գաղափարով  
մեջտեղեն վերցուցին հայ մտավորականությունն ու կղե-  
րականությունը: Հետո տաճկահայ ժողովուրդը արյան  
հեղեղին մեջ նետեցին: Կը մոռացվի՞ն արդյոք հայ կղե-  
րականության տված զոհերը՝ էրզրում և մյուս մեծ  
քաղաքները, ինչպես նաև Մարտենում նահատակված Մա-  
ջոյան գերապայծառը և Տրապիզոնի վիճակավոր հայր  
Ստեփան Սարյան մեծ դարվինագետը՝ նահատակ Մխի-  
թարյան Վենեստիո հայրերեն և աննման ու նվիրված տնո-  
րենը Մուրատ-Ռափայելյանի:

Այսպես թուրք տեոմն հրեշները համոզված էին, որ  
վերջապես պիտի աղատվեին հայ ժողովուրդեն՝ մանա-  
վանդ խրախուսված Վիլհելմ II-են: Թալեաթ ու էնվեր  
փաշաները պատեհ առիթը գտան Վիլհելմի խոսքերը կետ  
առ կետ կատարել. «Ըրե՛ք ինչ որ կրնաք, ձեզմե ո՛չ մեկը  
հաշիվ չի՛ կարող պահանջել. հայերը տիրած են Անա-  
տոլուին. գերման հանձնակատարը ու՛ր որ երթա, դեմը  
կը ցցվի հայ վաճառականը. սկսած երկաթուղիի գծի վրա  
գտնվող քաղաքներեն մինչև ամենափոքր գյուղը՝ հայը

տիրապետած է և վնաս կը հասցնե գերման առևտուրին, ջնջեցե՛ք զանոնք, ե՛ս եմ որ կը հրամայեմ, քանի ես ողջ եմ»:

Այսպէս սրտապնդված Վիլհելմի խրախուսանքեն՝ Իթ-թիհատ վե թերաքքը կուսակցութիւնը Կ. Պոլսո Գըզըլ Սարայ որջին մեջ դարբնեցին եղեռնը՝ գործադրութիւնը հանձնելով թուրք վահրաման չեթե հրոսակներուն, որոնք կազմված էին մահվան կամ ցկյանս դատապարտված տաժանակիրներէ: Ներում շնորհված էր անոնց և երգվել տված էին, որ մե՛կ հատիկ իսկ արու չձգել. առևանգել անմեղունակ կույսերն ու հարսերը, որոնք իրենց հալալ կ'ըներ մեծ մարգարեն՝ Մուհամմետ...

Թուրքը խրախճանքի մեջ էր, վստա՛հ էր՝ այս անգամ վերջնականապէս կ'ազատվեր Հայ ազգ մղձալանջէն...

1915 թվականի ապրիլի 11/24-ի լույս առավոտյան ժամը երկուսեն մինչև ութ, մեկիկ-մեկիկ հավաքված էին Կ. Պոլսո հայ մտավորականութեան աչքի զարնող դեմքերը, ինչպէս նաև պառլամենտի հայ երեսփոխանները: Այս հրամանը միևնույն ժամին և բոլորին գործադրվեցավ թե՛ Կ. Պոլիս և թե՛ գավառները: Շուրջ տաս հազարի մոտ թե՛ բարձրաստիճան կղերականներ և թե՛ աշխարհական մտավորականներն սպաննվեցան անլուր հարչարանքներու ենթարկվելէ վերջ: Երկու ամիս վերջ, 1915 թվականի հունիս ամսի 2/15-ին Սուլթան Պայագիտի ռազմական մինիստրութեան հրապարակում կախաղաններու վրա քաղեցին իրենց մեղքը (հա՛յ լինելնուն) քսան անմեղ հայեր :

Ճինկիզ խանի և Թիմուր Լանգի սերունդեն տեոնմե, կրոնափոխ այս վիժվածքները, իրենց ղեկավար ունեին Թալեաթ փաշան, որը թե՛ սատրապամ և թե՛ ներքին գործերու մինիստրն էր՝ գործակից ունենալով էնվեր փաշային, որը ռազմական մինիստրն էր և սարսափը հայութեան:

Ինչո՞վ էր մեղապարտ Հայ ազգս. որովհետև հայը ճարտար, աշխատասեր, արվեստներու և արհեստներու մեջ գերազանց էր, իսկ թուրք տարրը մոնղոլներեն և Մի-

չին Ասիայեն արշավող, քանդելու մեջ՝ մեկ հատիկ, ճրիակերներ էին:

Մահվան ուրվականը կը սավառներ Հայ ազգին գլխուն: Տեղահանությունը, սկսած Տաճկահայաստանեն, երկու միլիոնի հասնող հայությունը փետուրի նման չորս հովերուն ցրված էին անծայրածիր անապատները, ուր անճիտվելու էին:

Առաջին անգամ դավադրությամբ տեղահան ըրին Լեռնային Կիլիկիո արծվաբուն Զեյթուն գյուղաքաղաքը, քանի որ անոր քաջարի, ռազմիկ հերոս ժողովուրդը երեք դարեր շարունակ մաքառած էր թուրք սուլթաններու խենեշ կառավարության դեմ... Զեյթունցիները նախ քըշվեցան Գոնիայի կիզիչ տափաստանները, այնտեղեն ալ հեռու՝ մահաքաղաք Դեյր էզ Զոր՝ ուրվականներու անապատը, ուր անլուր չարչարանքներով մահացավ ավելի քան 150 000 հայություն, որոնք հավաքված էին արևելյան նահանգներեն և թուրքիո բոլոր քաղաքներեն...

Տեղահանությունը նախ կը սկսի Զեյթունեն. հերոս Չոլաքյան Փանոսի ղեկավարությամբ 134 քաջեր, որոնք զինվորական փախստականներ եղած էին, գիտակցելով ահավոր վտանգին մեծությունը, կը բարձրանան Պերիտ և Պերզինկա լեռներու կատարները: Այդ բարձրաբերձ լեռներեն կ'իջներին՝ թուրքաբնակ ավելի քան 400 գյուղեր կողոպտելով և զիմադրողներուն սպաննելով, մինչև իսկ թուրքական վաշտերու հետ կռվելով, ահն ու սարսափը տարածելով անոնց մեջ: Այս քաջամարտիկ 104 հոգինոց խումբը, Զեյթունեն երեք օր հեռու Անտրուն գյուղաքաղաքին և շրջակա թուրք գյուղերուն վրա հարձակելով, քանի մը տարի այսպես կը տևե, և երջանիկ օր մը թուրք գյուղացիներեն կ'իմանան, որ Ալամանը կորսնցուցած է պատերազմը և թեսլիմ եղեր է, և զինադադար է այժմ:

Այս խանդավառ լուրերուն վրա պայքարող քաջերը, լեռներեն իջնելով, հինգ օր վերջ կը հասնին Հալեպ քաղաքը և կը հանձնվին անգլիական բանակի հրամանատարին, բայց այս նենգամիտ անգլիացին, զինաթափ ընելե

վերջ այս զեյթունցի հերոսներուն, Ռամատանիյե զորանոցին մեջ կը բանտարկե՝ որպէս հրոսակներու: Հալեպի տեղացի և գաղթական հայերուն մեջ հուզումը կը տիրե, և ազգային իշխանութեան ազդեցիկ անդամները կը դիմեն հրամանատարին և ազդու կերպով բողոքելն վերջ, հրամանատարը կը ստիպվի իրենց զենքերով ազատ արձակել այս քաջերը:

\* \* \*

Շապին Գարահիսարի և Եդեսիո հերոս ժողովուրդը՝ երիտասարդ թե ծեր, համոզված ըլլալով, որ այս անգամ թուրքի մոլուցքեն ազատվելու չեն, կը վճռին իրենց արյան մինչև վերջին կաթիլը մաքառել և սուղ ծախել իրենց կյանքը թուրք հորդաներուն դեմ: Մինչև իսկ երկաթե թերթերն կը պատրաստին թնդանոթի խողովակներ և մեջը խիճեր, երկաթի կտորներ և վառող լեցնելով՝ կը դիմադրեն և կը հարձակվին դեպի Վարի թաղ: Այս երկու քաղաքներու հայկական թաղերը հնուց ի վեր միշտ գլխունը վում էին բարձրադիր տեղերը, իսկ շուկան և թուրք ժողովուրդը՝ տափարակ տեղը: Պահ մը թուրք հրամանատարը կը շվարի, կ'ուզեն հայերուն հետ հաշտվիլ, սակայն շուտ վրա կը հասնին գերմանները և կարող կ'ըլլան զսպելով՝ դուրս քշել հերոսները և հետո տանջամահ ընել զանոնք:

\* \* \*

Մի՞թե կարելի է մոռնալ Մուսա լեռան հերոսամարտը, հայկական ծովածոցի Իսկենդերուն՝ այժմ Հաթայ կոչեցյալ Ավետիայի լեռներուն յոթը գյուղերեն վեցին հերոսաբար դիմադրելը թուրք գազանացած հրեշ բանակներուն դեմ: Պիթիաս, Վազըֆ, Խըտըր պեկ, Յողուն Օլուգ, Հաջի

Հապիպլի, Ազյուր և Գեբուսիե. այս վերջին գյուղի ժողովուրդը, չուզելով դիմադրել թուրքին դեմ, կամովին կը հանձնվին և տեղահան ըլլալով՝ աքսորի ճամբուն կը փճանան մինչև Դեյր էզ Ջոր հասնելին. անոնցմե միայն յոթը ընտանիք փախչելով՝ կը միանան կովոզներուն և քառասունհինգ օր հերոսաբար դիմադրելի վերջ, մինչև որ ասպետական և քրիստոնյա ֆրանսացի ծովակալ տ'Արթիժ տը Ֆուռնիե մարդասիրաբար փոխադրանալերով Պորտ Սայիդ կը փոխադրե մոտ 4 500 ժողովուրդ:

Ավստրիացի հրեա գրող Ֆրանց Վերֆել 1929 թվին Սուրիո Հալեպ քաղաքը եկալ իր կնոջը հետ՝ մտադիր ըլլալով գրել Մուսա լեռան վրա վեպ մը: Սկետիո վեց գյուղերու վերապրող հերոսներուն հետ տեսնելով և խոսեցնել տալով զանոնք՝ պատրաստեց «Մուսա լեռան քառասուն օրերը» անուն վեպը, որը Բուլղարիո մեջ «Մասիս» հրատարակչատանը հրատարակեց՝ գերմաներեն բնագրեն հայերենի թարգմանել տվեց զայն պր. Երվանդ Տեր-Անդրեասյանի ձեռքով, որը հմուտ էր լեզվին: Վեպը մեծ ընդունելութուն գտալ:

Այս գործը քանի մը օտար լեզուներու թարգմանված է:

Ցավալի է ըսել, որ Վերֆել ընտանիքը հրեաներու դեմ Հիտլերի հալածանքեն մազապուրծ կը փախչի՝ իրենց ունեցվածքը ձգելով Հիտլերի բանդաններուն, և կարող կ'ըլլա Աստուծո շնորհիվ փախչել Ամերիկա: Վերջապես Վերֆել կարող կ'ըլլա Հոլիվուտի շարժանկարի մեծ թուրքին հետ պայմանագիր կնքել և շարժանկարի առնել տալ Մուսա լեռան հերոսամարտը: Սակայն թուրք Քեմալական կառավարութեան պըռեմյեը՝ քուրդ Իպրահիմ փաշա մալաթիացի աշիրեթապետի որդին՝ Իսմեթ Ինենյուն (նախկին Սադըր Իսմեթ պեյը), բողոքելով ամերիկյան կառավարութեան, թուրք դեսպանը կարող կ'ըլլա, ո՛վ գիտե քանի՞ հարյուր միլիոն դոլար կաշառք կամ վնասուց հատուցում տալ Հոլիվուտի թուրքին, և կ'արգելի այդ գործի ցուցադրումը:

## ՌԱՔՔԱ ԳՅՈՒՂԱՔԱՂԱՔԸ

### I

Տեղահան, գաղթական հայ ժողովրդի անծայրածիր կարավանները կը հասնեին Եփրատ գետի ձախ եզերքը՝ հնամենի պատմական Ռաքքա գյուղաքաղաքը, որը բանալին էր հայերու մահաքաղաք Դեյր էզ Ջորին: Ռաքքայեն Դեյր էզ Ջոր 134 կմ հեռու է. դժբախտ ազգիս բեկորները կուգային Գոնիայեն և շոգեկառքի գծին վրա գտնվող քաղաքներու բնակիչներեն:

Գաղթականներեն փոքր խումբ մը արհեստավորներ կարող կ'ըլլան կաշառել Ռաքքա ապրող մեծահարուստ շեյխ ավատապետներ և անոնց հովանավորութեան ներքե անոնց համար կ'աշխատին՝ մնալով Ռաքքա գյուղաքաղաքը:

Իսկ Շամիա (Եփրատ գետի աջ եզերքին) Հալեպեն Դեյր էզ Ջոր տանող ճանապարհն է և 342 կմ հեռու է. իսկ Հալեպեն Մեսքենե կայանը՝ 95 կմ: Տարագիր հայու-թյունը ստիպված էր ոտքով կտրել այդ երկար ավազուտ ճանապարհը՝ երթալու Դեյր էզ Ջոր, ուր մահանալու էին անլուր չարչարանքներով:

Ճամբուէն մեկ քանի տասնյակ հազար հիվանդներ, ծերեր, երեխաներ, չկրնալով տոկալ կիզիչ ավազին, ծարավին և անոթութեան, կը մեռնեին, և կամ չկրցող քայլողներուն կը սպաննեին՝ նետելով ավազներու վրա գազաններուն կեր...

Ռաքքան Հռոմեական կայսրութեան շրջանին ունեցած

է փառքի հիշատակներ. կամարակապ ջրմուղը և մեծ պարիսպը 45 կմ. Ճինկիզ խանի և Թիմուր Լանգի և վերջերս ալ վիժվածք տեղումն Իթիհատ կուսակցութեան ջոխրները քանդած են այս պատմական հնութիւնները, նույնպէս Եփրատ գետի ձախ եզերքին գտնվող արմավենիները և խաղողի այգիները:

Այժմ կը մնան Բաղդադի դուռը և 32 մետր բարձրութեամբ քանդակազարդ մինարեթը: Նաև քանդած են Հարուն էլ Բաշիտ մեծ ամիրապետին համար պատրաստված ամառանոց-պալատը հիմքեն և անոր դեղնավուն սրբատաշ քարերը այլուր տարած են: Պապ Բաղդադը՝ գեղակերտ և քանդակազարդ, մինչև այսօր պահպանված է շնորհիվ ֆրանսական հոգատար պետութեան, որը նորոգել տված է մինարեթն ալ միասին:

Իսկ պարիսպը դարերու ընթացքին քանդված է, և թուրք վանդալները ավազը օգտագործած են իրենց պետքերուն...

Հռչակավոր է Ռաքքայի շրջակայքը բնակվող վաչկատուն Հատիտի ցեղախումբին պատրաստած ոչխարի յուղը, որմն ամեն տարի 5—6 հարյուր տոննա կ'արտածվի Ամերիկայի սուրիացիներուն, լիբանանցիներուն և հայերուն, որոնք միայն այդ յուղը կ'օգտագործեն...

\* \* \*

1915 թվականի աշնան արդեն Ռաքքայեն և Շամիայեն դժբախտ ցեղիս տարագիր կարավանները գեպի Դեյր էզ Ջոր գացած էին, որտեղ ալ նահատակված էին Թիֆուսից, մալարիայից և ահարկու սովից: 1916 թվի հուլիսին էնեզն և չեչեն վաչկատուն ոհմակներուն ձեռքով Պապ հավա ըսված վայրը՝ Եփրատ գետի եզերքին, 160 հազարեն ավելի տարագիրներուն ձեռքով մեծ տարածութիւն մը փորել էին տվել և անոնց վրա նալթ սրսկելով՝ այրած էին: Փաստը ակնբախ էր. մի քանի տասնյակ վերապրող-

ներ, որոնց երեսներն ու ձեռները խանձված էին, հրաշքով ազատված էին դիակներու տակ մի քանի օր մնալե վերջ, փախչելով ազատված էին և Հալեպի Հայոց առաջնորդարանը հասնելով՝ պատմած էին այս ահարկու մեծ ոճիրը:

## II

Ռաքքա ապաստանած էին շուրջ ութսուն ընտանիք, որոնք տեական բնակության հրաման կարողացած էին ստանալ իրենց պաշտպան շեյխերի միջոցով. ասոնց մեջ էր նույնպես սերաստահայ թրքագետ փաստաբան Կարապետ էֆենտի Գաբրիկյան, որուն արտոնած էին կառավարության շենքի մուտքի դռան մեջ, անկյուն մը նստած, աղերսագիր և դիմումներ գրել: Իսկ պետական կիսագրագետ պաշտոնյաներն ալ, տեսնելով աղերսագրեր գրող Կարապետ էֆենտիի մաքուր և գեղեցիկ գիր ունենալը, հաճախ իրենց գործերն ալ բռնի անո՛ր գրել կը ստիպեին...

Այս ազնիվ և հայրենասեր հայը, 1923 թվին Հալեպեն Ամերիկա տեղափոխվելով, 1924-ին «Եղեռնապատումը», որը իր հուշերն էին, հրատարակեց:

Ցավալին այն է, որ Ռաքքայի մեծահարուստ առևտրականներուն և մեծ շեյխերուն մոտ դեռ մեկ -երկու տասնյակե ավելի հայուհիներ կը մնան, որոնք այժմ պառաված, ունեցած են զավակներ և հարյուրե ավելի թոռներ...

Առաջարկած են ասոնց, որ Հայ ազգին ծոցը վերադառնան, և պատասխանած են. «Ո՛վ պիտի պաշտպան կանգնի մեզի պես դժբախտներուն, անգամ մը դիտեցեք դեմքերնուս կիտվածքներուն, որոնք չեոլի վաշկատուն էնեզեի արաբներու պես են: Որքան որ մեզի բռնությամբ իրենց հարեմը տարած են, մեկ անգամ միայն սա մեր զավակներուն նայեցեք, որոնք մաքուր հայ լեզուն կը խոսին, որովհետև իրենց մայրենի կրթությունը, 1924 թվա-

կանեն սկսած, Հայոց դպրոցներուն մեջ ստացած են թե՛ Հայեպ և թե՛ այստեղ և ավելի մոտիկ հարաբերության մեջ են հայերու հետ, քան թե արաբներուն»։ Այսպես ուրեմն՝ կ'արժե, որ այստեղ հիշատակեմ քանի մը անուններ։

1. Ահմատ էլ Մավվուշ, մեծահարուստ առևտրականը կառավարութեան կողմէ միակ արտոնված անձը՝ նավթ վաճառելու. ունի մեկ քանի հազարի հասնող ոչխարներու հոտեր։ Ասոր կիներ՝ Արմենուհին, որ Պրուսա քաղաքէն Ռաքքա կը հասնին, և Ահմատ էլ Մավվուշ, տեսնելով այս ընտանիքի միակ աղջկան՝ գեղեցիկ և զարգացած, կը դիմէ և կ'ըսէ. «Ամբողջ ընտանիքով վաղը արշալույսին ձեր կարավանը պիտի մեկնի Դեյր էզ Զոր, որտեղ կոտորվելու եք։ Եթէ դուք, հանժմ, իմ կինս ըլլաք, կը խոստանամ ձեր ամբողջ ընտանիքը պահել և պաշտպանել, ես չեմ ալ բռնանալու ձեր համատալիքին վրա, մնացեք քրիստոնյա, քանի որ աստվածապաշտ եք»։

Այսպես Արմենուհիի շնորհիվ կ'ազատվին նույնպէս համաքաղաքացի քսանհինգ ընտանիք, կը մնան Ռաքքա մինչև զինադադար՝ 1918 թվականի նոյեմբեր, և ապահով կը մեկնին Հալեպ՝ արդեն Ռաքքայի մեջ կարգին հարըստացած։

Այս կնոջ եղբայրը 1943 թվին Եգիպտոսէն եկաւ Ռաքքա՝ տեսնելու իր քրոջը, որը ինը զավակներու տեր էր՝ յոթը տղա և երկու աղջիկ։

2. Իմ «Թեղպիհը» իրական պատմվածքիս մեջ հիշված հրեշ շեյխ Ահմատ էլ Խալաֆ իսկն թուրա ապու Իպրահիմի հորեղբայրը՝ Օսման պեկ, հակապատկերն էր այդ ճիվաղին. հայասեր ազդեցիկ մեծ արաբ շեյխ մըն էր։ Ես գինքը ճանչցա 1942 թվին, երբ Ռաքքայի դպրոցին պատասխանատու ուսուցիչն էի (տնօրեն)։ Օր մը, մեկ քանի հայերու ներկայութեան, այսպէս արտահայտվեցաւ.

— Եղբորորդիս՝ Ահմատ էլ Խալաֆը, զուլումն էր հայութեան, լավ որ սատկեցուցին, երանի թե հայու մը ձեռքով գտներ մահը, հարյուրավոր կույսերու արյունն էր

մտած և սպաննած էր՝ կիրի եփած գուռին մեջ նետելով:

Ո՛վ կարող էր ըսել, որ հայերս սպաննեցինք, և պատասխանեցինք.

– Ափսո՛ս որ սպաննեցին. մենք հայերս կը հարգեինք զինքը:

Մեր այս պատասխանի վրա բարկացած ըսավ.

– Դուք չե՛ք ճանչցած զինքը, ես գիտեմ, թե ինչ էր...

Օսման պեկ էլ խալաֆի կինը կարնեցի մեծահարուստ ընտանիքի մը աղջիկն է եղած՝ Մարի անուհով, որուն տեղացիները Մերիեմ պաճը կ'անվանեին:

Ուներ չորս տղա և մեկ աղջիկ զավակներ. այս հայուհին ամեն առավոտ կուգար եկեղեցին և կ'աղոթեր...

Օր մը հարցուցի.

– Քույրս, դուք արաբ աղդեցիկ մեծ շեյխի մը համբն եք և ապահովաբար մուսուլման, ինչպե՞ս է որ հայոց եկեղեցին կուգաք և կ'աղոթեք:

Անիկա պատասխանեց.

– Վարժապե՛տ, շեյխը բնավ իմ հավատալիքիս վրա չի բռնանար, ես հայուհի եմ. զավակներս հինգն ալ թե՛ հոս և թե՛ Հալեպ ստացած են իրենց կրթությունը. գիտե՞ք, թե ինչ կ'աղոթեմ ամեն առավոտ. ազգիս մեկ միլիոնն ավելի նահատակներու հոգիին հանգստության կ'աղոթեմ:

3. Սուլթան Համիտի մարչալներեն Դելի անունը ստացած. Համիտի կողմեն տրված է այս անունը: Հերոս և քաջ Յուսուֆ փաշան, որը 1896 թվին Կ. Պոլսո կոտորածի պահուն ասիական եղերքին Յուսուֆուտար և Քաղկեդոնի հոծ հայության կյանքը փրկած էր: Դելի Յուսուֆ փաշայի քրոջ որդին՝ դոկտոր Յուսուֆ պեյ, հայասեր, ազնիվ, կես արաբացած անձ մը. ասոր կինն ալ պրուսացի հայուհի մըն էր, անունը՝ Հայկանուշ. ուներ մեկ տղա՝ Լուդման անունով, և երկու գեղեցիկ աղջիկներ. այս երեք զավակներն ալ հայ մեծցած էին, հայոց դպրոցին մեջ կրթություն ստացած:

Հայկանուշ նույնպես հայուհի մնացած էր և միշտ Ռաքճայի հայ ընտանիքներուն հետ կը տեսնվեր, նույն-

պէս Ահմատ էլ Մավվուշի Արմենուհիին և Օսման պեկ շեյխ Խալաֆի Մարի կնոջը հետ:

Օր մը, դոկտոր Ֆուադի որդին՝ Լուգմանը, որը ինձմե ֆրանսերեն լեզվի դասեր կ'առներ, կնոջս այցելութեան եկավ մօրը հետ: Ես այդ պահուն հայոց լեզվի շարադրութեան տետրակներ սրբագրելով զբաղած էի, բարեկէս վերջ, Հայկանուշ, երբ ինձ տեսավ զբաղած, ըսավ.

— Ախ, հարգելի ուսուցիչ, չա՛տ հուզված եմ, ճար մը ըրե սա երկու աղջիկներս ալ դելթունցի շարժավարներու հետ Հալեպ փախցուր, թող հանձնեն Առաջնորդարան, և հայ ծանոթ պատմավոր երիտասարդներու հետ ամուսնացնին, որովհետև դոկտորը այս հինգշաբթի գիշեր նշանելու է երկու աղջեցիկ շեյխերու զավակներուն հետ:

Այս խոսքերուն վրա ըսի.

— Հանրմ, չըլլա՛ որ անգամ մըն ալ այս տեսակ խոսքեր ընես, Ռաքքայի հայութիւնը վնաս կը կրե, և մինչև իսկ մեզի կը ջարդեն:

### III

Ռաքքա, Եփրատ գետի ձախ ափին հաղարավոր վրաններ շարված էին սպիտակ սավաններե. ասոնք դեպի մահվան գիրկը գացող հայ տարագրյալներուն կը պատկանէին:

Այս վրաններեն մեկը կը պատկաներ Եդեսիա քաղաքի հայտնի մեծահարուստ վաճառականներեն Մկրտիչ էֆենտի Սարգիսյանին, որ նոր եկած էր Ճարապլուս երկաթուղիի կայարաններեն գյուղաքաղաք մը, իր կնոջ՝ Խանումի, երկու տղաքներուն և մեկ աղջկան հետ. մեծ զավկին անունը՝ Մկրտիչ, որ տասնվեց տարեկան էր, աղջկան անունը՝ Արմենուհի՝ տասնչորս տարեկան և փոքր տղուն անունը Հակոբ էր՝ տասներկու տարեկան:

Ընտանիքին հայրը, տեսնելով, որ հաց չկա, մեծ զավկին կ'ուղարկէ Ռաքքա, որը գետեզերքեն հաղիվ տասն-

Հինգ ըոպեի ճանապարհ էր, փռապաններեն հաց գնելու։ Հայրը, տեսնելով, որ զավակը ուշացավ, հսկիչ ոստիկանեն կը խնդրե, որ թույլ տա երթալ գավկին ետևեն։ Ճանապարհան երկու ոսկեդրամ կաշառք կը պահանջի։ Սարգիսյան անմիջապես գրպանեն փոքրիկ քսակ մը հանելով՝ կուտա ոստիկանին, որը անոր ձեռքեն հափշտակելով քսակը՝ խեղճ մարդուն ձեռքի երկու ոսկին <ետ> կուտա՝ ըսելով. «Այս երկու ոսկին ալ շա՛տ է, քանի որ մեկ քանի օր վերջ բոլորիդ հաշիվը մաքրելու են չեչեն և էնեղե վաչկատուն ցեղերը, որոնց հանձնված է ձեր բոլորիդ ճակատագիրը»։

Սարգիսյան առանց ձայն հանելու հազիվ թե հեռացած էր 100 մետրի չափ, երբ արյունարբու պետվին մը, մոտենալով, հանկարծ տապալուսի\* մեկ հարվածով դիտապաստ գետին կը փռե դժբախտ մարդուն, մերկացնելով դիակը՝ կը ձգե ավազին վրա և կը շարունակե ճանապարհը։ Այս քստմնեցուցիչ, ողբերգական տեսարանը գաղթականներու վրաններեն տեսնողներ վայնասուն կը ձգեն։ Փոքր որդին՝ Հակոբիկ, որը հասակակից ընկերներու հետ կը խաղար գետեզերքի ավազին, լաց ու կոծով կը վազե դեպի վրանը և մորը լուր կուտա։ Խանում իմանալով իր ամուսնույն զոհ երթալը՝ աղեխարշ, մազերը փետտելով կը վազե ոճրին վայրը և կ'ընկնի դիակին վրա, այդ պահուն վրա կը հասնին երկու շեյխեր, մեկը՝ տարեքոտ, մյուսը՝ երիտասարդ, կ'ուզեն տիրանալ նահատակի կնոջը։ Կռիվը ծայր կուտա, հանկարծ երիտասարդը խանջալի հարվածով կը սպաննե ձեր շեյխին և առևանգելով Խանումին՝ կը մեկնի...

Մոտիկ վրանեն Արմենուհի, տեսնելով հորը սպաննվիլն ու մորը շեյխի մը կողմե առևանգվիլը, հուզումեն մարած գետին կ'ընկնի։ Ահռելի էր տեսարանը, հանկարծ այդ վայրեն կ'անցնի շեյխ մը՝ արաբական ազնիվ ցեղի նժույգի մը վրա նստած, տեսնելով խարտյաշ պատանի մը, որը

---

\* Տապալուսը կարճ կոթով, գլուխը կարծր փայտի գունտ մը, փաթաթված կաշիով, մահացու զենք մըն է։

ավագին վրա ինկած դիակի մը վրա կուլար, ձիեն վար կ'իջնէ, մոտենալով Հակոբին, գլուխը շոյելով՝ հետը սիրալիր արաբերեն խոսիլ կը սկսի, որմէ երեխան ոչ մեկ բառ չէր հասկնար: Հետո գրկելով զայն՝ կը նետվի նժույգին և սրարչավ կ'անհետանա անապատին ուղղութեամբ: Այս ողբերգութեան վրա հազիվ թե անցած էր տաս ըրպե, Մկրտիչ ետ կը վերադառնա Ռաքքայեն, մախաղին մեջ հինգ սոմուն հացով դեպի վրանները. երբ կ'իմանա եղածը՝ մեկ անգամեն զրկվելը ընտանիքեն, հուզումեն վրանին մեջ գտնված սանդը վերցնելով՝ կ'ուզէ ճանտարմայի գլխուն իջեցնել...

Սակայն դժբախտ ժողովուրդը աղաչանքով կը զգուշացնեն՝ ըսելով. «Մեր ամբողջին ալ կոտորվելուն պատճառ կ'ըլլաս»: Այն ժամանակ ետ կը դառնա Ռաքքայի կառավարչատունը՝ բողբոջելու... Բակին մեջ տեսնելով Կարապետ Գֆենտի Գաբրիկյանին, որը նստած աղերսագիր կը գրեր, մոտենալով և լալով կը պատմէ եղելութիւնը: Գաբրիկյան ուշիուշով մտիկ ընելէ վերջ, ակնոցը կը հանէ քթին վրայէն և կ'ըսէ.

— Զավակս, աղերսագիր գրելով ո՛չ մեկ օգուտ, թուրքը ո՛չ թե կ'օժանդակէ, ընդհակառակ, չեղի այս վայրենիներուն պիտի պաշտպանէ. մենք դատապարտված ենք մեռնելու այս անօրեններուն ձեռքով. մեկ հավը տասը հայեն ավելի արժեք ունի. ուրիշ միջոց չկա, նստիր քովս, սա աղերսագիրը գրեմ, հետդ կուգամ գետեզերք, ես ավելի լավը խորհեցա:

Բավական ժամանակ վերջ՝ մութը կոխելուն, Գաբրիկյան Մկրտիչի ձեռքէն բռնելով՝ դեպի վրանները կ'ուղղվի և հիվանդ Արմենուհին տեսնելով այդ վիճակին մեջ՝ կ'ըսէ.

— Զավակներս, ես այստեղ ազդեցիկ չեյիսի մը պաշտպանութեան ներքէ ևմ, քանի որ ինչ որ շահիմ, ամեն օր կեսը իրենն է. ես, կինս և տասնչորս տարեկան աղջիկ մը ունիմ. թո՛ղ ըլլանք հինգ հոգի, դու՛ք ալ իմ հոգեզավակներս եղեք, տեսնենք Ամենակարողը ի՛նչ կը տնօրինէ, չու՛տ հավաքէ, աղջի՛կս, ինչ որ ունիք վրանին մեջ, և մեկնինք:

Մկրտիչ և Արմենուհի նախ և առաջ ծնողքին ունեցած դրամը մեջքերնին կապելով, անկողին, վերմակ և այլն, ինչ որ ունին հավաքելով՝ կը մեկնին Գաբրիկյանի հետ դեպի Պապ Բաղդադ: Հեռավոր թաղի մը մեջ ընդարձակ բակ մը կը մտնին և իրենց մեկ ու կես սենյակը՝ բաժանված սավանով մը: Երբ Գաբրիկյանի կինը կը տեսնե եղբոր ու քրոջ գալը, կ'ըսե.

— Քա մարդ, այս ի՞նչ է, ու՞րկե բերիր:

— Ա՛յ կինս, թող չըլլանք երեք, ըլլանք հինգ. Աստված տվալ. տեսնենք վերջերնիս ի՞նչ պիտի ըլլա:

Մկրտիչ իմանալով Գաբրիկյանի այս խոսքերը իր կնոջ ուղղված՝ սիրտ առնելով՝ կ'ըսե.

— Հորար և մորքուր, դուք ազատեցիք մեր կյանքը, ես և քույրս ապերախտ չենք ըլլար և ո՛չ ալ բեռ ձեզ վրա. քիչ-շատ բան մը ունինք. ես Ուրֆայի հայկական դպրոցին մեջ լավ ուսում առած եմ, թուրքերեն շատ լավ գիտեմ: Մանավանդ գիրս ալ շատ գեղեցիկ է, պարոն Գաբրիկյա՛ն, սիրելի հորեղբա՛յր, ես ձեզի օգտակար կ'ըլլամ՝ գրելով աղերսագրեր, քույրս՝ Արմենուհին ալ լավ ձեռագործ կը բանի և մորքուրիս օգտակար կ'ըլլա:

Այս խոսքերը ըսելե վերջ՝ ոտքի կ'ելլե և քրոջը ձեռքեն բռնելով, Գաբրիկյանին մոտենալով՝ ձեռքը կը համբուրեն՝ վերջն ալ կնոջը մոտենալով.

— Դուք ասկե վերջ մեր հարազատ ծնողներն եք, — կ'ըսե:

Գաբրիկյան և կինը ողջագուրելով զանոնք՝ կ'ըսեն.

— Զավակնե՛րս, մտիկ ըրեք, եթե ուէ պետական պաշտոնյա գա այս մեր շենքը ստուգելու, դու՛ն, Մկրտի՛չ, պետք է ըսես, որ մենք աքսորի կարավանին մեջ կորսնցուցինք մեր ծնողքը և նոր գտանք: Վաղը առավոտուն քեզի հետս առած կառավարչատուն կ'երթանք և ինձ հատկացված տեղը քովս կը նստիս և ինձ կ'օգնես. ես քեզի պիտի ներկայացնիմ որպես իմ հարազատ զավակս, որը կորսնցուցած էի: Ատեն մը վերջ, երբ քիչ մը այս զուլումը թեթևնա, այն ժամանակ նամակ մը կը գրեմ

Հալեալ՝ իմ մեկ բարեկամիս՝ դորգաշինուծյան վարպետ  
կեսարիացի, բնիկ հալեպահայ Կարապետ Քեհյայանին,  
ձեզ երկուքդ ալ կը զրկեմ ապահով անոր մոտ և ձեր  
երկուքին պաշտպանությունը կը հանձնիմ անոր:

#### IV

1915 թվին Ռաքքա գյուղաքաղաքը նմանը չտեսնված  
խիստ ճմեռ մը ըրավ, որը քսանհինգ տարիե ի վեր չէր  
տեսած:

Հոկտեմբերի սկիզբէն տեղատարափ անձրևները աչք  
բանալ չէին տար. գետեզրին գաղթական հայերը իրենց  
վերջնական ճակատագրին կը սպասէին, սավաններե  
վրանները կը լողային ջրին մեջ, և ամեն օր կը մեռնէին  
հիսունեն ավելի ծերեր և մատղաշ երախաներ... որոնց  
զիակները Եփրատ գետի ձուկերը կուլ կուտային:

Մեկ ալ կը տեսնէիր ճանտարմա ավազակները կը  
սկսէին պոռչտալ. «Վե՛ր կացեք, վրանները քանդեք, ճամ-  
փա՛ ելեք»:

Ճանտարմաները՝ ձիով, իսկ դժբախտ աքսորյալները  
հետիոտն կը քալէին... դեպի Դեյր էզ Զոր՝ անձրևին ներ-  
քև. հայն ինքն իրեն կը խոկար.

«Ո՛վ ամենակարող Աստվա՛ծ իմ, մի՞թե այսքան անխճ-  
ված էինք, որ այս պատիժին արժանի եղանք. ծերերն ու  
մանուկները, որոնք չէին կրնար քայլել, ետ կը մնային,  
անապատի ավազին վրա կը ձգէին, որպեսզի գազաննե-  
րուն կեր ըլլային... Ո՛վ Տեր, մի՞թե իրավունք չունինք  
ապրելու»:

Դժբախտ իրականություն, որ Հայ ազգի վրին էր փա-  
թաթված, որովհետև անհեռատես, երազատես եղած էր,  
որովհետև քառասուն տարիե ի վեր Հայ ազգը իր հուշը  
կապած էր նենդամիտ Ալախունին, փոխանակ իր ճակատա-  
գիրը ինքն իսկ տնօրինելու. սակայն Հայը միշտ Արևմուտ-  
քի ընչաքաղց պետություններուն վրա դրած էր իր հուշը:

\* \* \*

1929 թվին, երբ ես Սուրիա, Հալեպ քաղաքը ուսուցիչ էի, իմացա ահռելի աղետը, որ տեղի ունեցավ Հյուսիսային Սուրիա. անապատի վաշկատուն ցեղերու վրաննեւրը նմանը չտեսնված բնության տարերքին հանձնվեցան, և էնեղե ու չէչեն գազանաբարո հորդաները զոհ գացին նախախնամության...

1929 թվի հունվարի 5-6-ի լուսանալուն, տեղատարափ անձրևներեն վերջ էճեճը հիմքեն կը քանդե և կը ցրվե 12 000 վրան, որու 100 000 բնակիչները՝ նախկին հայա-կուլ այս հրեշ-ճիվաղները, կ'ոչնչանան: Այսպես, արդա-րադատ Ամենակարողը տասնչորս տարի վերջ Ցեղիս նա-հատակ անմեղ կույսերուն և մանկիկներուն արցունքը կը սփռի...

V

Շեյխ Ահմատ Սուլթան էլ Աթրաշ. այս էր անունը այն շեյխին, որ եփրատ գետի եզերքին սպաննված Մկրտիչ Սարգիսյանի դիակին վրա լացող Հակոբ որդուն առևան-գելով՝ կը հասնի իր կալվածքը և մեծ վրանին առջև ձիեն վար կ'առնե իր թանկագին գանձը՝ Հակոբին, որուն քու-նը տարած էր շեյխի գրկին մեջ: Անմիջապես վրանեն դուրս կուգան շեյխին երեք չափահաս որդիները և իրենց հոր՝ մեծ շեյխին ձեռքը կը համբուրեն, շեյխը կը հրամայե՝ առանց արթնցնելու փոքրիկին, տանել տղամարդոց հար-կաբաժինը և իր թախտին վրա պառկեցնել:

Քանի մը ժամ վերջ շեյխը իր մոտ կանչել կուտա իր վրանին կառավարչին՝ հալեպցի բնիկ հայազգի Ծըրճի (Գևորգ) Վանեսին, որը քսանհինգ տարի ե ի վեր իր մոտ հավատարմորեն կը ծառայեր և շեյխին համակրանքին արժանցած էր: Շեյխը կը հրամայե Ծըրճի Վանեսին՝ հար-ցաքննել Հակոբին, թե ինչու՞ կուլար մերկ դիակի մը վրա, որմե քանի մը կանգուն հեռու ջահել պետվինի մը

դիակը կար՝ ավազին փռված: Հակոբ մանրամասնորեն կը պատմեն ամբողջ եղելութիւնը, թե ինչպէս սեւամորթ մարդ մը իր հայրը լախտի մը հարվածով մը սպաննած և մերկացնելով զայն՝ փախած էր, և թե երկու արաբներ ինչպէս իրարու հետ կռվելով՝ ջահելը ծերին գետին փռած էր դաշույնի մեկ հարվածով և իր մորը առևանգելով՝ փախուստ տված էր, և թե այս ծերուկ պապիկը, զինք ձի նստեցնելով և սիրելով, բերած էր այստեղ...

Շեյխ Ահմատ Սուլթան կը հրամայէ իր վրանի կառավարչին անմիջապէս քննութիւն բանալ և ստուգել՝ ո՞վ այսօր կամ երեկ Եփրատի եզերքը քրիստոնյայի մը սպաննած և կողոպտած է՝ զայն մերկացնելով: Քիչ վերջ մարդասպան պետվիների մը վրա կը կասկածին, որը ձեռքին մեջ ոսկի շղթայով ժամացույցի մը հետ կը խաղար:

Անմիջապէս այդ ծառայող գաղանին կը բերեն շեյխին մոտ՝ միասին իր գողոնին. հանկարծ Հակոբ կը տեսնէ իր հորը ժամացույցը և կը սկսի բարձրաձայն ողբ ու կոծով ողբալ և ըսել, որ հորը սպաննողը այս է, և ահա՛ հորը ժամացույցը:

Ծրրճի Վանես բառ առ բառ կը թարգմանէ Հակոբին ըսածները, այն ատեն շեյխը դառնալով ղուլամին՝ կ'ըսէ.

— Իրա՞վ է, որ դուն այս առտու մարդ մը սպաննած ես:

Ղուլամն ալ համարձակ կը պատասխանէ.

— Ի՞նչ կա որ, անհավատի մը զլխուն տապալուսի հարված մը իջեցուցի և ունեցածը առի, մի՞թե հալալ չէ...

Շեյխ Ահմատ էլ Սուլթան Աթրաշ անմիջապէս իր աշիրեթի մեծերն ու կրօնապետ էլ հաջ շեյխ Ռուսուլիին ժողովի կը հրավիրէ: Այս ութսունամյա կրօնապետը երեք անգամ Մեդինայի Մյունևիներ և Մեքքա ուխտի գացեր էր Մուհամմետի գերեզմանին և սուրբ մարդու հարգանք կը վայելեր, շեյխ, աշիրեթապետեն լսելով ղուլամին ըսածները, կը խնդրէ կրօնապետեն դատաստան տեսնել: Սա կը պատասխանէ.

— Ալլահն ու անոր մեծ մարգարեն Հազրեթը Նեպին

(Մեծ սուրբ) Ղորանին մեջ, քսաներեքերորդ սուրահ, պատվիրած է. «Ո՛վ որ մարդ կը սպաննէ, մինչև իսկ ո՛չ կրոնակից, անիկա արժանի է մահվան»: Այս դժբախտ էրմենները, որոնք մեր հողեն կ'անցնին, պետք էէ՛ որ դեշ վերաբերում ունենանք անոնց դեմ, անոնք դժբախտներ են, և մենք անոնց ընդունինք Աստուծոյ ավանդ, այս խեղճերու գլխուն արդեն զուլումը զարկած է: Անիծյա՛լ չեչեն ցեղը՝ Դեյր էզ Ջորի դեմ ու դեմը, Եփրատ գետի մյուս եզերքին ապրող այս հրեաները, կը ջարդեն զանոնք, սակայն Աստուծո պատուհասը զանոնք ալ պիտի պատժէ: Ո՛վ անծյալ պետիւն, ինչպե՞ս սպաննեցիր դժբախտին ու կողոպտեցիր և չի խղճացիր մեր աշիրեթի պատվին ալ. անիծյա՛լ զուլամ, մահվան արժանի ես: Ես, ձեր կրոնապետը լինելով՝ կը հրամայեմ մահապատիժ, որպէսզի սրբվի մեր Ռամատանիյե աշիրեթի վրա ծանրացող այս արատը. կախեցե՛ք զայն:

Կրոնապետի այս խոսքերուն վրա բոլոր ստորագաս շեյխերը հավանություն կուտան: Մեծ շեյխը այս խոսքերուն վրա իր հավատարիմներեն տասը զուամներու ձեռքով մավդերի հարվածներով կը սպաննին զայն և գողոնները կը վերադարձնեն նահատակի զավկին՝ Հակոբին: Այս արարողությունեն վերջ մեծ շեյխը կը խնդրե կրոնապետեն նստիլ իր աջ կողմը, նույնպէս իր երեք զավակներուն կը հրամայե նստիլ իր ձախ կողմը, ծունկերուն մեջտեղ նստեցնելով Հակոբին՝ այսպէս կը խոսի.

— Ալլահն ու անոր մեծ մարգարեն՝ Հազրեթը Նեպին, այսօր ինձ բախտավորեցրին գանձով մը, կը տեսնե՞ք այս փոքրիկին՝ սպանված մարդուն զավակը: Նայեցե՛ք անոր՝ կաթի և մեղրի պէս սպիտակ, որը կը նմանի հրեշտակի մը, և Աստուծո կողմէ ընծա ինծի, զայն իմ հաջորդս պիտի նշանակեմ, և դուք՝ զավակներս՝ Հուսեին, Մունիր և Ալի, դուք չպիտի հակառակեք ձեր հորը մեծ կամքին և զայն պիտի սիրեք ու պատվեք որպէս ձեր եղբայրը և աշիրեթին՝ ինձ հաջորդող շեյխի հրամանիս հպատակելու<sup>6</sup> եք, թե ոչ, ըսե՛ք:

Երեք զավակները, ստորադաս շեյխերն ալ զսպանակե մղվածի պես ոտքի ելան և ավանդական երդումը ըրին ի ներկայութիւն իրենց հոր <և Հակոբին>, որը ոսկեթել բանվածքներով ճոխորեն հագած էր գեղեցիկ մետաքսյա հագուստներ. շալը մեջքին և անկե կախված հորը ոսկե ժամացույցը և մեծ շեյխին նվիրած ավանդական ոսկին շեղբով դանակը:

— Աստուծոյն զատ աստված չկա, և Մուհամմետ՝ անոր մարգարեն, և մենք բոլորս՝ Ռամատանիյե աշիրեթեն, մեր մեծ շեյխ հորերնուա շեյխ Ահմատ Սուլթան, որդի Աթրաշի և նրա ստորադաս շեյխեր, վկա աստված, երկրորդում, երրորդում ենք, որ մեր կյանքին մինչև վերջը սիրելու ենք մեր փոքր եղբորը. փառավորյալ ես տեր աստված, փառք քեզ աստված, ամենագոր աստված ողորմած...

Նույն օրն իսկ Հակոբին կը թլփատեն մահմետական օրենքին համաձայն, և Հակոբի անունը կդառնա շեյխ Ահմատ Սուլթան Ըզլիլ:

Թլփատումի արարողութենէ վերջ մեծ շեյխը բոլորին հացկերույթի վար կը դնէ՝ ճոխ ընթրիք և ուրախութիւն պարգևելով անոնց:

Հակոբ իսկական արաբի շեյխ էր դարձած իր մետաքսյա պատմուճանին մեջ, ոսկեթել բանվածքներով կարճ բաճկոնակով և նույնին նման ուղտի մազերէ թանկագին, ոսկեթել հյուսվածքներով վերարկուով, Շամի (Դամասկոսի) նրբաթել մետաքսով պատրաստված գլխաշորով և վրան այծի մազէ հյուսված պարանով, մերկ ոտքերուն՝ արծաթե թելերով բանված ոտնամանով:

Շեյխը կը քաշվի վրանի իր հարկաբաժինը՝ գրկած Հակոբին, որը հոգնութիւնն և թլփատումն պարտասած՝ կը քնանա փափուկ անկողնին մեջ, մեծ շեյխի գրկին մեջ, որը գորովանքով իր կրծքին սեղմած, շոյելով անոր մազերը՝ ինքն ալ քնացած էր:

Կրօնապետ շեյխ էլ Ռուսուլին օրհնելով սեղանը, Ռամադանիյե ցեղապետին աշիրեթը օրհնելով՝ կը ցրվին բոլորը:

Առավոտը, լուսանալուն, մեծ շեյխը, արթնցնելով Հակոբին, կ'ըսե.

— Արթնցի՛ր, ո՛վ կյանքս, անուշ որդիս, հոգիս, քեզի պիտի տանիմ մեծ մորդ մոտ:

Շեյխի նշանացի խոսվածքեն հասկնալով՝ Հակոբ կ'ելլե տեղեն, կը լվացվի և շեյխին ձեռքեն բռնելով՝ կ'երթա վրանին ծայրը գտնվող կանանոցի հարկաբաժինը, կը մտնե ներս. քսան թարմատի, նրբամարմին թուխ երկար-հասակ հուրիններ բոլորած էին պղինձ մանղալի մը շուրջը, որը կարմրավուն ցուքեր կ'արձակեր, չորս հարճեր մար-ձուճ կ'ընեին ծեր թռմթռած պառավի մը ոտքերը, կուրծքն ու մեջքը՝ անուշահոտ յուղերով, ուրիշ երկու աղ-ջիկներ մանղալի վրա կ'եփեին Եմենի անուշաբույր լեզի սուրճը:

Շեյխին ներս մտնելուն բոլորը հանկարծ ոտքի կ'ելլեն՝ գլուխին խոնարհեցնելով: Նա Հակոբի ձեռքեն բռնած՝ կը մոտենա վաթսուներեք անցած պառավի մը, որ ժպտադեմ բազմոցին վրա բազմած էր. շեյխին տեսնելով և կռանալով՝ կը համբուրե շեյխին պատմուճանի քղանցքը: Մեծ խանութը սիրալիր կ'ընդունի այս այցելությունը, այսպես առավոտուն պատվիված ըլլալուն: Արդեն իմացած էր երեկվան անցուղարձը: Հակոբ մոտենալով պառավին՝ չորացած ձեռքը կը համբուրե: Խանութն ալ փոքրիկի խարտիչահեր, սպիտակ դեմքին հիացած նայելով՝ կը գրկե և համբուրելով փառք կուտա ալլահին՝ այս մեծ պարգևին համար: Հակոբ զարմացած կը դիտեր այստեղ գտնվող հուրինները՝ հոլանի, սպիտակ, թուխ կամ սևամորթ:

## VI

Վեց ամիս անցած էր այս եղերական դեպքեն վերջ: Հակոբ արդեն ընտելացած էր նոր կյանքին և սովորութեան: Մեծ շեյխը զայն իր մոտեն չէր հեռացներ. միասին եղջերուի որսորդության կը տաներ և նշանառություն

կը սովորեցնենր. այսպես փոքրիկի հոգւոյն մեջ մեծ փոփոխություն տեղի ունեցած էր: Տարին հազիւ բոլորած՝ Հակոբ նոր կրօնքին ջերմ հավատացյալ էր, պարտավորությունները ճշտիւ կատարող՝ օրվան յոթ նամազները: Կրօնապետ շէյխ հաջ Հասան էլ Ռուսուլին փոքրիկ շէյխին անգիր սորվեցուցած էր Ղորանի բոլոր սուրահները, իր երեք մեծ եղբայրներեն ավելի կրօնքին ջերմեռանդ, մոլի մուսուլման մը դարձած էր: Աշիրեթի մեծեն մինչև ստորագաս զոլամները կը պաշտեն և Աստուծո կողմն առաքված կը նկատեն զայն:

Շէյխերու իրեն հասակակից երեխաներուն հետ խաղացած ատեն և կամ Եփրատ գետին մեջ լողալու ժամանակ կը ստիպեր, որ անոնք ըլլան ջերմեռանդ հավատացյալներ և Ղորանի պատվիրանները ճշտիւ կատարեն: Անգամ մը, երբ Եփրատ գետին մեջ կը լողային, հորձանուտ ալիքներուն մեջ շէյխի մը փոքր տղան կը փրկե խեղդովէն: Մեծ շէյխը կը հրճուի և փա՛ռք կուտար ալլահին իր հաջորդին համար:

Շէյխ Ահմատ Սուլթան դատ ու դատաստան տեսած ատեն միշտ իր կողքին կը նստեցներ Հակոբին, և անոր խոսքը կշիռ ունեն: Մեղադրյալներուն աչքերը միշտ ուղղված կ'ըլլային Հակոբին՝ գութ աղերսելով: Բարի, գթասիրտ էր Հակոբ անմեղին և անողոք՝ հանցապարտին: Երբ իմանար, որ այսինչ զոլամին ուղտը կամ էջը գողցած և պահած են, Հակոբ հետապնդելով և հարց ու փորձելով կը գտներ գողոնը, և վա՛յ անոր, որ սուտ վկայությամբ մեջտեղ ելներ. անողոք էր այդ պարագային:

Անգամ մը շէյխին տնտեսվար Ճըրճի Վանեսին (որը չա՛տ սիրելի էր Հակոբին) քնացած ժամանակ, մեջքին դուռին քակելով, խեղճին հոգեպահուստ հիսուն ոսկին կը գողնան. Ճըրճի Վանես վայնասունով ու լալով կը դիմե Հակոբին, որը լռեցնելով զայն՝ կ'ըսե.

— Զայն մի՛ հանիր, ես իրիկվան կուտամ:

Հակոբ, մտնելով խանը, կապված էջերեն մեկուն կռնակը փայտածուխի փոշիով ծածկելէ վերջ, կը քաշե խանին

մեկ մութ անկյունը, հետո դուրս գալով՝ կ'ըսե.

— Մեկիկ-մեկիկ ներս եկեք և ձեռքերնիդ քսեցեք սա անկյունի էշուն կոնակը և որուն որ ձեռքը սև տեսնիմ, ես գիտեմ ընելիքս, քանի որ անիկա է գողը:

Մեկ առ մեկ ներս կը մտնին և մութին մեջ ձեռքերնին կը քսեն էշուն կոնակը, սակայն Հակոբ թույլ չտար անոնց դուրս ելլելու խանեն և ներսը մութին կը պահէ: Իսկական գողը ներս կը մտնե և գողտուկ կը մոտենա էշին և իր հագուստին քղանցքը միայն կը քսե էշուն կոնակը, առանց ձեռքերը քսելու ածուխին: Երբ գործողությունը կը լրանա, Հակոբ դուրս կը հանե բոլորին և կարավանապետին կանչելով՝ կ'ըսե.

— Տեսե՛ք, այս բոլորն ալ համարձակ էշուն կոնակը քսած են ձեռքերնին, որովհետև գողը չեն, և սակայն սա ո՞վ է, որուն ձեռքերը ճերմակ են:

Կարավանապետն ալ կ'ըսե.

— Իմ ծառաս է:

— Լա՛վ, ուրեմն, այս կողմ եկուր, շու՛տ հանե քսակը, ապա թե ոչ այս տապալուսով պիտի ջախջախեմ քեզ:

Հետո կարավանապետին կը ստիպե լա՛վ մը ձեծել, մինչև որ կը ստիպվի խոստովանիլ, որ իրոք ինքն է գողը և աղաչանքով ներում կը խնդրե՝ խոստանալով անգամ մըն ալ չընել:

Այս գործը պատճառ կ'ըլլա, որ այդ ռամիկ ժողովուրդը էլվիպի տեղ դնե Հակոբին, քանի որ կրցավ մեջտեղ հանել իսկական գողը: Եվ սակայն այս առաջին դեպքը նկատելով՝ Հակոբ կը ներե գող զոլամին՝ սպառնալով ուրիշ անգամ, երբ ընե այդպիսի բան մը՝ մահապատժի ենթակա էր լինելու:

Մեծ շելխը իր սիրասուն հաջորդին՝ Հակոբին, միասին առնելով՝ կ'ենթան Հալեպ՝ պտույտի: Հակոբ տեսնելով չքեղ ապարանքները՝ մինչև իսկ 4—5 հարկանի շենքեր, հիանալով՝ կ'ըսե.

— Ո՛վ հայր իմ, երբ վերադառնանք, ինծի համար այս գեղին քարերեն միայն երկու հարկանի գեղեցիկ նախ-

չերով չենք մը շինել տուր, քանի որ կը մեծանամ և չեմ ուզեր վրանի մեջ ապրիլ:

Շեյխը այս խոսքերուն վրա անմիջապես միասին կը տանի քարտաշ վարպետներ և երկհարկանի շենքի մը հատակադիրժը՝ պատրաստել տալով ճարտարագետ-երկրաչափի մը: Երբ կը հասնին Մեսքենե, որը Հալեպեն 90 կմ հեռու էր, կը հրամայե ղոլամներուն և իր հետ բերած վարպետներուն հանգստանալ և պատսպարովիլ մահվան դեմ՝ անապատին մեջ, քանի որ շեյխը կը տեսներ մոտալուտ ավազամրրիկը:

Կը հրամայե գորգերու հակը քակել և իր հոգեհատոր Հակոբին հետ կը փաթթվի գորգերու ներքև, մինչև մրրիկին վերջանալը. իրոք 5–10 ընկեր վերջ կը սկսի ավազամրրիկը կատաղորեն. երբ կը վերջանա, և ամենքը փառք կուտան ալլահին՝ այս աղետեն փրկված լինելուն, մեծ շեյխն ալ, գորգերու տակեն դուրս գալով, իր զավկին վրայեն մաս մը սպրդած ավազը կը թոթվե և երկինք նայելով՝ փառք կուտա ալլահին՝ զիրենք ողջ և առողջ պահելուն համար:

Հալեպեն ողջամբ Ռամատանիյե՝ իրենց գյուղը, հասնելուն պես անմիջապես քարտաշները կը սկսին գործի, մինչև աշուն կը լրացնեն շենքը: Շքեղորեն կահավորել կուտա այս երկհարկանի շենքը՝ ամեն ինչ Հալեպեն բերելով:

Տաք երկրներ թե՛ տղամարդ և թե՛ աղջիկներ շատ շուտ արբուներ կը հասնին, և մանավանդ իգական սեռը. տասներկու տարիքը թեակոխելուն՝ ամուսնանալու վիճակին կը հասնին, իսկ տղաները՝ տասնհինգ տարեկանին, և Հակոբ արդեն տասնվեց տարիքը թեակոխած էր. չորս տարին լրացած էր մեծ շեյխին կողմե առևանգվելը: Երբ ձըրճի Վանեսին հետ մինակ կ'ըլլային, խորասուզված կը հիշեր, թե ինչպես է, որ հայերեն գիտեր, բայց ձըրճի Վանես միշտ կ'ըսեր, թե.

— Ալլահի կողմեն է այդ, որ հայերեն գիտես, քուն հարազատ հաջորդն ես մեծ Ռամատանիյե ցեղախումբին:

Հակոբ ազատ մուտք ուներ մեծ խանութի՝ շեյխի առա-

ջին կնոջ մոտ: Շեյխ Ահմատ Սուլթան և իր հաջորդը՝ Հակոբ, կը բնակեին նորակերտ, քարաշեն շենքը, իսկ երեք մեծ եղբայրները և մեծ խանութը վրանին մեջ կը բնակեին: Շեյխը ուրախ էր, որ Հակոբ պատճառ եղած էր այդ փառավոր երկհարկանի շենքը շինել տալուն:

Երբ Հակոբ մեծ խանութի վրանը կ'երթար՝ այդ պառավին կոնծած ձեռքը համբուրելու, պառավն ալ գրկելով զայն՝ գգվանքներ կը շռայլեր և կիսամերկ հարճերուն ալ կը հրամայեր զբոսցնել շեյխ Ահմատ Սուլթան ըզղիւրին: Հակոբ սրինգ ածելը շատ կը սիրեր և երբ մեկամաղձիկ արաբական երգեր կը լսեր՝ այդ հրայրքոտ հուրիններուն վախճոտ նայվածքները իրեն ուղղված, կը հուզվեր, այտերը նուան նման կը կարմրեին: Օր մը թարմատի հարճերեն մեկուն աղտոտ առաջարկը լսելով՝ ամաչկոտ կը հարցնէ.

— Աղջիկ, ի՞նչ պիտի ընենք:

— Քնանալու ենք միասին:

Այսպես առաջին սիրո պտուղը Հակոբ գաղտագողի կը վայելեր, երբ մեծ շեյխը բացակա կ'ըլլար: Անգամ մը Հակոբ կը հարցնէ.

— Հայրիկ, այս հուանի աղջիկները միշտ մորս մոտ են, կ'երգեն, կը պարեն և ծուլ-ծուլ նստած են մանդալին գեմ, իսկ խեղճ ղուամներուն կիները չարաչար կ'աշխատեն արտերը, ոչխարները կ'թելով՝ խնոցիով կարագ կը հարեն և ճաշը կը պատրաստեն. մի՞թե մեղք չեն անոնք:

— Զավա՛կս, այն գեղեցիկ հուրինները թե՛ մորդ և թե՛ քեզի զբոսցնելու համար են, իսկ ղուամներու կիներն ալ առտնին գործերը ընելու պարտավոր են: Այդ ծառայող կիներուն ամուսիններն ալ ինձ և քեզ համար կ'աշխատին. հաճախ կ'երթան արշավանքի բուսի-թուրքերուն գեմ՝ կողոպտելով անոնց հոտերը, և տասնեն ինը մերն է, մեկն ալ անոնց. մեր ղուամները միշտ հավատարիմ են ինձի, եթե մենք զորավոր չըլլանք, վա՛յն է եկեր մեր գլխուն. ինձմե զորավոր շեյխ մը կա միայն՝ շեյխ Միշհեմ էլ Միշհեմ էլ Ազմ, որը բոլորես ալ զորավոր է. և ես իմ

կողոպուտիս հարյուրեն հիսունը նվեր կը դրկեմ անոր և միշտ կը վայելեմ իր պաշտպանությունը ինձ հակառակորդ մյուս շեյխերուն դեմ: Այսպե՛ս է կյանքը, զավա՛կս:

Մեծ շեյխին այս խոսքերը բնավ դյուր չէին դարձաւ հարկերին, որը մտքերու մեջ խորասուզված կը մտածեր:

1920 թվին Հակոբ թեւակոխած էր տասնեյոթ տարեկանին, նրբամարմին, խարտյաշ, քաջ երիտասարդ մըն էր արդեն և պարծանքը շեյխին: Գարունն սկսած էր արդեն, բողբոջած էին ծառերը, սոխակներն ու դեղձանիկները կը դալլալէին, և ասիկա դյուր կուգար Հակոբին, մանավանդ սոխակներու մելամաղձիկ երգերը: Կը հեծներ հոչակավոր արաբական ցեղի ասլը նժույգի մը վրա, որուն անունը Ճեյրան էր: Եփրատ գետի ուղղությամբ կ'երթար պոստաններն ու սուսի անտառները և կը նստեր անոնց շուքին ներքե՝ միշտ խոհուն ու տրտում: Հաճախ այդ ամայի վայրերուն մեջ սրինգ ածելով՝ կ'երգեր «Յա Լեյլի» («Ով գիշերներ») և «Յա րուհի դազալի» («Ով հոգիս եղնիկ»): Այս երկու երգերն ալ արաբական աշխարհի սիրական ժողովրդական երգերն են: Այդ խորասուզված պահուն հանկարծ Հակոբի աչքին կ'երևա հրեշտակատեսիլ, սևաչյա, նրբամարմին սպիտակ հուրի մը՝ իրեն պես վեց աղջիկներե շրջապատված, և հագլիվ քսան մետր հեռու կը նստի մարմանդին: Հակոբի հոգին կը ցնցվի, կը զգա սրտին բաբախումը և ինքն իրեն կը խոսի. «Ու՛րկե հայտնվեցավ այս դրախտի հուրին»: Սրինգը ձեռքը կ'առնե՝ ածելով հոգեցունց երգերեն, աղջիկը, տեսնելով այդ, տեղեն կ'ելլե և մոտենալով Հակոբին՝ կըսե.

— Ով շեյխի որդի՛, ո՞վ ես դուն, ի՞նչ անուշ ձայն ունիս և ի՞նչ լավ սրինգ կ'ածես. ըսե՛, ո՞ր աշխրեթին կը պատկանիս, ի՞նչպես այս կողմերը եկեր ես:

Հակոբ, հիասքանչ նայելով աղջկան սևորակ աչքերուն, մազերուն և ոտքերուն, հափշտակված կը պատասխանե.

— Ո՞վ իմ աննման, դրախտեն եկած հուրիս՝ շուշանի չափրակներեն ծնած, ճիշտ ըսիք, առաջին անգամն է, որ այս կողմերը կուգամ: Ես հաջորդն եմ Ռամատանիյե աշի-

րեթապետ շեյխ Ահմատ Սուլթան էլ Աթրաշին և ամենափոքր զավակն եմ:

Այս խոսքերը լսելով՝ աղջիկը կը մոտենա Հակոբին քով և նստելով՝ կ'ըսե.

— Արդեն հայտնի է ճոխ հազուստեղ և մանավանդ սա արածող ձինն, որը մինչև իսկ Միչհեմ էլ Միչհեմ մեծ աշիրեթապետին քրոջ որդին չունի. հայրս ալ Ռասպան մեծ ցեղախումբին աշիրեթապետն է, իսկ մայրս ալ Թուրքիայի սուլթանական ցեղեն է եղեր, և մեր օգոստոսափառ սուլթան Համիտը հորս է նվիրեր մորս, որը չորս տարի վերջ ինձ է ծներ և ծնունդես տաս ժամ վերջ մահացեր է. ես ո՛րք եմ մեծցած Միչհեմի ապարանքը: Սակայն, ո՛վ իմ կտրիճ շեյխս, որքա՛ն սպիտակ և գեղեցիկ դեմք ունիս դուն, ինձմե ալ ավելի սիրելի ես դուն, կը սիրե՛մ քեզ:

Այս խոսքերուն Հակոբ, ընդոստ տեղեն ցատկելով, կ'երկարե բազուկները և գրկելով զայն՝ կ'ըսե.

— Դուն կյանքն ես բովանդակ, աշխարհ մը կ'արժես դուն, իմ հոգեհատո՛րս, քեզ տեսնելուս պես արդեն ղգացի, որ նո՛ր եմ աշխարհ եկած, ներե այս խոսքերուն, — ըսելով, աղջկան մանրիկ և ձյունաթույր ձեռքը քաշելով՝ շրթունքին մոտեցուց, մինչդեռ աղջիկն ալ փաթթվելով Հակոբին՝ համբույրի տարափ մը իջեցուց՝ ըսելով.

— Ես ալ ավելի սիրեցի քեզ, պաշտելի՛ս, տեսքդ ինձ այրեց, սիրտս կրակի հնոց մը դարձավ, առանց քեզի կյանք չունիմ ես, — և շարունակեց, — ով սիրելիս, աչքերուս լույս, քեզի պիտի սիրեմ մինչև կյանքիս վերջը:

Հուրին, առանց նկատի առնելու հետևորդ վեց աղջիկներուն, որոնք կը դիտեին այս տեսարանը, երբ իրարմե կը զատվին, երդում կ'ընեն մեծ Նեպի մարգարե Մուհամմետի անունով, որ եթե արգելք մը ըլլա իրենց միացումին, այն ժամանակ պետք է մեռնին, առանց ուրիշ մը սիրելու: Հակոբ նորեն համբուրելով՝ կ'ըսե աղջկան.

— Ո՛վ իմ պաշտելի հուրիս, անունդ ըսե՛:

— Անունս Շեմս էլ Նիհար է, սիրակա՛ն շեյխս, եթե այս ցեղական ձին մեծ էմիր էլ Միչհեմին նվիրես և ինձ պա-

հանջես իրմե, հուսով եմ, որ մենք արդեն միացած կ'ըլլանք:

Ուշ երեկոյան իրարմե կը բաժնւիին, կրակը սրտներուն մեջ՝ երեք օր վերջ նորեն այդտեղ հանդիպելու խոստումով:

Այդ գիշեր Հակոբ դրեթե անքուն անցուց. կ'երազեր նույն օրվան հանդիպումը: Հանկարծ Հակոբ կը զգա, որ մեծ շեյխը, գրկելով զինք, կ'ըսեր.

— Հոգեհատո՛ր որդիս, ի՞նչ ունիս, այս ինչե՛ր կ'ըսես երազանքի մեջ, ի՞նչ եղելություն տեղի ունեցավ մեջդ, քունիդ մեջ մինչև իսկ կուլայիր, խոսե՛, մի՛ քաշվիր, ըսե՛ ինձի:

Այն ժամանակ Հակոբ լալով կը պատմե իր հանդիպումը Շեմս էլ Նիհարին հետ և իրենց երգումը, որ մինչև վերջ իրարմե չեն բաժնւելու:

Հակոբ չի մոռնար նույնպես հորմեն խնդրելու, որ իրեն նվիրած ձին նվեր տանին մեծ շեյխ էմիր էլ Միչհեմին: Շեյխը գրկելով որդուն՝ կ'ըսե.

— Զավակս, երջանկությունդ ի՛մս ալ է. քնացիր, վաղն առավոտ իսկ փափագդ կը կատարվի, և քեզի հետ կ'երթանք մեծ էմիրին ապարանքը, ձեյրան ձիդ ալ կը նվիրենք և աղջիկը կ'ուզենք:

Հետեյալ առտու շեյխ Ահմատ Սուլթան, ամեն պատրաստություն տեսնելով, ձեյրանը ոսկեճամուկ զարդերով զարդարելէ վերջ, զոլամի մը առաջնորդութեամբ, առանց ձիուն վրա նստողի, շեյխն ու Հակոբն ալ ուրիշներու վրա նստած՝ կը մեկնին մեծ էմիրին ամառանոցը՝ Քյազպահ ըսված վայրը, հազիվ երեկոյան դեմ: Երբ իմաց կուտան մեծ էմիրին, թե հյուրեր են եկած, անմիջապես էմիրի մեծ որդին՝ Նուրի, ութ զոլամներով կը դիմավորե և կ'առաջնորդե հյուրերուն: Շեյխը իջնելով ձիեն, էմիրի որդուն հետ ողջագուրվելով՝ կը հասնին ապարանքներուն առջև, ուր անմիջապես ի պատիւ հյուրերուն երկու խոչ ոչխարներ կը մորթվին անոնց ոտքերուն տակ: Երեքով ներս կը մտնին ապարանքեն և Դամասկոսի մետաքսե թանկագին օթոցներու վրա կը հրավիրվին նստելու. քիչ վերջ ներս

կը մտնեն մեծ էմիրը: Հայր ու որդի ոտքի կ'ելլեն՝ խոնարհվելով: Էմիրը սիրալիր կը հրավիրեն նորեն նստիլ: Հակոբ խոնարհվելով կը մոտենա էմիրին և անոր պատմուճանին քղանցքը կը համբուրեն, էմիրն ալ՝ Հակոբի ճակատը: Էմիրը դառնալով շեյխ Ահմատ Սուլթանին՝ կ'ըսեն.

— Ո՛վ շեյխ, այս գեղադեմ քաջը ո՞վ է:

Շեյխն ալ կը պատասխանեն.

— Ո՛վ մեծդ փառավորյալ էմիր, այս երիտասարդը ցեղիս հաջորդն է ըլլալու մահես վերջ: Ան 1915 թվին ալլահի կողմն նվեր է. ուսյալ է մոլլայե մը ավելի և գիտուն կրոնականի չափ հմտություն ունի. մեր մեծ Նեպիի Ղորանի հավատալիքները՝ 134 սուրահները, անգիր գիտեն:

Էմիր էլ Միշհեմ կը սկսի հարց ու փորձի և տեսնելով անոր համարձակ խոսվածքը, կրոնքին մեջ ունեցած հմտությունը, գեղեցիկ սալիտակ դեմքը, չինարի ծառի նման նուրբ հասակը՝ սիրելով կ'ըսեն.

— Մաշալա՛հ, ալլահը պահե, պահպանե զինքը, և ամբողջ աշիրեթիդ պարծանքը ըլլա...

Շեյխ Ահմատ Սուլթան խնամախոսության խոսքը բանալով՝ կ'ըսեն.

— Ո՛վ մեծ էմիր, եթե հավանեցաք որդուս՝ իմ հաջորդիս, կը խնդրեմ, ձեր մեծությանդ խոնարհ ծառան կը խնդրեն, որ երջանկացնեք երկու սիրակցորդ զույգեր ձեր օրհնյալ կամքով և մեծ Նեպիի հրամանով: Այս ձեյրան սարլ ձին ձեզ նվեր:

Մեծ էմիրին շա՛տ դյուր կուգան այս խոսքերը, և կը պատասխանեն.

— Ով սիրելի շեյխ, օրհնյալ ըլլա մեծ Նեպիի կամքը, որդուդ շա՛տ սիրեցի և ըսեմ, որ քրոջս տղան, որ երեք օրն ի վեր հյուր է մոտս, եկած է իմաց տալու, որ իր միակ աղջիկը կ'ուզե կնության տալ փողի սիրույն տարիքոտ շեյխի մը. սակայն ես բարկացա և ստիպեցի, որ մերժեն: Այժմ ուրախ եմ, որ իմ սիրական Շեմս էլ Նիհարս ու զավակդ իրար կը սիրեն և ուխտած են միանալ, ես կը նախընտրեմ զավկիդ կնության տալ:

Այս խոսքերը ըսելն վերջ, էմիրը անմիջապես իր մոտ կը հրավիրե իր քրոջ որդուն՝ շեյխ էլ Ռասլանին, և կ'ըսեն.

— Ծանոթացի՛ր, քրոջս որդին՝ շեյխ Ահմատ Սուլթան, Ռամատանի աշիրեթի ցեղապետը, և զավակը Ահմատ Սուլթան ըզդիր, որը պիտի հաջորդե հորը: Իմ սիրտս քաշեց այս քաջ երիտասարդը, որը կ'ուզե ամուսնանալ աղջկադ, իմ սիրելի Շեմս էլ Նիհարին հետ:

Այս խոսքերը ըսած ժամանակ, դուրսը կապած ձիուն՝ ձեյրանին, կը դիտեր պատուհանեն: Հետո դառնալով Հակոբին, որը ծալապատիկ, քիչ մը հեռուն նստած էր, կը հրամայե մոտենալ և կ'ըսե.

— Շնորհավոր ըլլա, զավակս, քեզ տեսնիմ, հորդ արժանավոր զավակը ըլլաս, — և դառնալով իր քրոջ որդուն՝ կ'ըսե. — Շեյխ էլ Ռասլան, ուրախացի՛ր, զորավոր խնամի ունես, 15 000 հրացանակիրով, որուն 1 500-ը՝ ձիավոր, ասկե դատ, իմացած եմ արդեն, որ աղջիկդ ու շեյխին որդին զիրար ճանչցած և կը սիրեն իրար:

Երբ մեծ էմիրը կ'որոշե, որ հարսանիքը ութ օր վերջ լինի, հորը նշանացի զգացնելուն վրա, Հակոբ իր վրայի կարճ ոսկեթել հագուստի գրպանեն կը հանե ծանրագին զուլպ մը օղեր (ո՛վ գիտե՝ ո՛ր դժբախտ հայուհիին էր), կուտա մեծ էմիրին.

— Իմ պաշտելի Շեմս էլ Նիհարիս դուլզն նվերս է այս, — ըսելով:

Նույն գիշերը էմիրի ապարանքին մեջ ճոխ հացկերույթ և խրախճանք կ'ըլլա: Հետեյալ օրը երջանկացած հայր և որդի կը վերադառնան Ռամատանիյե:

Լուրը կայծակի արագությամբ կը հասնի նախորդ խնամի շեյխ Իպրահիմ Ճընդիին, որը կատաղած կը հասնի մեծ էմիր Միչհեմի ապարանքը և թե՛ իր ցավը կը հայտնե այս որոշման դեմ և թե՛ միաժամանակ բանավեճի կը բռնվի շեյխ էլ Ռասլանի հետ՝ ըսելով.

— Լա՛վ ըրած չես, որ դուն ալ անհավատ ես դարձած՝ աղջիկդ հայի կնության տալով: Ես հինգ տարի առաջ ստուգած եմ ասիկա:

Այս անարգանքը ծանր կը ճնշե շեյխ էլ Ռասալանի սրտին և անմիջապես մեջքեն կախ սրածայր դաշույնը կը մխե խռֆածի սրտին: Այս ցեղախուժքին մոտ մարդ սպանելը հավի ճուտի չափ արժեք չունի: Ծերուկ շեյխին դիակը կը զրկեն իր աշիրեթը՝ սպառնալով. «Եթե համարձակիք կռիվ մղել, գիտցած ըլլաք, որ բոլորդ ալ անոր պես դիտապաստ կ'իյնաք գետին. անիկա մեր տոհմը անարգեց և պատիժը գտավ»:

Շեյխ Ահմատ Սուլթան Հակոբի հետ վերադառնալով գյուղ՝ անմիջապես որդու բնակարանը՝ այդ սեփական քարաշեն երկհարկանի շէնքը, ալ ավելի կը ճոխացնե ծանրադին կահույքով, սատափյա քանդակված հագուստապահարանով (խըզենի): Եվ հարսանեկան անկողինը՝ գետնեն հինգ աստիճաններով բարձր, պատրաստել կուտան Դամասկոսի հայ վարպետներուն: Իսկ անուշեղենի հանձնարարութիւնը կուտան շամցի (գամասկոսցի) էոմեր էֆենդիին, որի պատրաստած խուռմա փախլավաւըն մինչև Ամերիկա կը զրկվեր: Հալեպեն կը հրավիրեն երաժշտական արեւելյան գործիքներու խումբը՝ համբավավոր ուտի Սարգիսի գլխավորութեամբ:

Ջի մոռացվիր նույնպես փախլավայեն զատ քյունիֆեն ըսվածը և շուրեյակն և արմուշը, ինչպես նաև տոնտուրմա շինող վարպետներ: Իր խնամախոսի երրորդ օրը Հակոբ, խոստումին համաձայն, ժամադրավայրը կ'երթա՝ ավետելու իր սրտահատորին երջանկաբեր լուրը իրենց միացման, որը բարեհաճած էր մեծ էմիրը: Հագիվ թե Հակոբ սպիտակ արաբական ձիու մը վրա կնշմարվի՝ ծառայող կույս աղջիկները ավանդական և պայմանական «լյու՛, լյու՛, լյու՛ն» կը սկսին երգել և ձիուն սանձեն բռնած՝ կը տանին իրենց տիրուհուն քով: Սրտագեղ գրկախառնվելի վերջ Շեմս էլ Նիհար կ'ըսե.

— Ես արդեն նույն օրը հորմես իմացած էի, — և հուզմունքեն երկուքն ալ կը սկսին լալ՝ ուրախութեան արցունքներ թափելով, նորեն կ'երդնուն հավատարիմ մնալ մինչև իրենց կյանքին վերջը՝ վկայակոչելով մեծ Նեպին:

Այժմ դառնանք Ռաքքա և պատմենք Սարգիսյան Մկրտիչի և քրոջը՝ Արմենուհիին վրա, որոնք Կարապետ էֆենտի Գաբրիկյանի խնամքին տակ կը գտնվեին: Անիկա տարաձայնած էր, թե երկու զավակներն ալ գաղթականունության մեջ կորսնցուցած էր, սակայն հրաշքով փոսպանեն հաց գնելու ժամանակ գտած էր:

Այս առիթով ալ կառավարության պաշտոնյաներու պատիվին փոքրիկ խնջույք մըն ալ սարքած էր, պատվասիրելով Ուրֆա քեպապի և Լիբանանի Զահլե գյուղաքաղաքի համբավալոր օղիով առատորեն...

Մկրտիչ արդեն իր պաշտպան հոր թևին տակ կ'աշխատեր՝ դժբախտ գաղթականներուն աղերսագիր-գիմումները գրելով, պետական պաշտոնյաներուն ալ գործերը մաքուր թուրքերեն գրով ընդօրինակելով, միևնույն ատեն գաղթական հայերուն Հալեպ ղրկելիք նամակները՝ թուրքերեն: Մկրտիչ և քույրը՝ Արմենուհին, հուսերով տոգորված էին և կը սպասեին Կարապետ էֆենդիի խոստման կատարելուն: Սակայն 1915 թվի ձմեռն ալ անցած էր, և անհույս վիճակի մեջ էին եղբայր-քույր:

Մինչ այս, մինչ այն, Գաբրիկյան զբաղված էր Ռաքքա տեղավորել այն գաղթական արհեստավորները, որոնք դեռ Եփրատի գետեզերքը սավանե սալտակ վրաններուն ներքև կը տվայտեին, և կաշառքի ծամոնը պական էէր այս առթիվ: Ռաքքան կարիք ուներ արհեստավորներու, որոնցմե զուրկ էր:

Այսպես անկայուն վիճակեն ստվար թիվ մը, շնորհիվ արաբ շէյխերուն և կառավարական պաշտոնյաներուն, կայուն վիճակի մեջ մտան...

Որքը ե՞րբ խնդացած էր. անիծյալ չար աչքերե չէր վըրիպած Արմենուհիի գեղեցկությունը. սեքաստահայերու բնական սեփականատեր շէյխ Մուհամմատ Զեյն ծընտիր չիլ, կուրանալիք աչքերեն չէր վրիպած անմեղ աղջկան հրեշտակատեսիլ դեմքը, և օր մըն ալ Գաբրիկյանի մոտ գալով՝ կ'ըսե.

— Աղջկանդ հավանած եմ, պետք է կնուծյան տաս զավկիս՝ խալեդ պեկին, այլապես եթե դժկամություն հայտնես և չի տաս, դու'ն գիտես՝ բոլոր գաղթականներդ դուրս կը նետեմ կալվածքես:

Գաբրիկյան առանց այլայլելու և հոգիին փոթորիկը հայտնի ընելու, այնքա՛ն սիրալիր վերաբերմունք ցույց կուտա՝ ըսելով.

— Ո՛վ շեյխ Զեյն Ճընտի, ինքզինքս բարեբախտ կը համարիմ ձեզի պես ազդեցիկ անձնավորության մը խնամի ըլլալով, և ա՛յ ավելի ամուր կը լինի ձեր պաշտպանությունը հայերուս հանդեպ, միայն ութ օր պայմանաժամ տվեք, որ կինս կարենա համոզիլ աղջիկնիս:

Շեյխ Մուհամմատ Զեյն, համոզված, ուրախ կը բաժանվի՝ երազներ հյուսելով մտքին մեջ: Շեյխին մեկնելեն վերջ, Գաբրիկյան դառնալով Մկրտչին.

— Որդի՛, հավաքե գրասեղանին վրա գտնված թուղթերը և դարակին մեջ փակե, դուրս երթանք:

Գաբրիկյան խոսած ժամանակ կը դողար, Մկրտիչ կը զդա, որ վատ բան մը պատահած է և իր ուղեղը կը չարչըրկեր հասկնալու համար: Բնակարան վերադառնալով՝ անմիջապես կը ճաշին, և <Գաբրիկյան> կնոջը կ'ըսե.

— Հայկանու՛յշ, երկու աղջիկներդ հավաքե, ներս գացեք, քիչ մը Մկրտիչիս հետ խոսելիք ունիմ:

Հրամանը իսկույն կը կատարե կինը:

— Որդի՛ս, Մկրտի՛չ, հայերուս Աստվածը երես է դարձրած որբին. եթե ժամ առաջ քեզ և քույրդ Հալեպ չփախցնիմ, ութ օր վերջ անմեղունակ քույրդ մեր բնակարանի շեյխին շուն տղին կնուծյան պիտի երթա, չեմ գիտեր՝ ի՛նչ ընեմ: Գայմաքամ պեյին պետք է կաշառենք և ձեզ անվտանգ անոր պաշտպանությամբ Հալեպ փոխադրել տանք, ուր շա՛տ մտերիմ ծանոթ մը ունիմ: Զեզի հետ նամակ մըն ալ կուտամ ծանոթիս՝ հալեպահայ գորգի գործարանատեր կեսարացի Կարապետ էֆենտի Քեհյա՝ յանի, որը շա՛տ ազդեցիկ հայ մըն է. նույնպես Հալեպի առաջնորդական փոխանորդ Քիլիս քաղաքացի Թովմա-

այսին Տեր-Սահակ քահանային: Սակայն այս գործը Հաջողացնելու համար առնվազն Հիսուսն օսմանյան ոսկեդրամ կաշառք կերցնելու է: Սահակ քահանային ալ կը գրեմ, որ քույրդ տանեմարքացի միսս Եփեի որբանոցը հանձնե, որը շատ հայասեր կին մըն է. այնտեղ հայեցի կրթութիւն կը ստանա: Գալով քեզի՝ դուն ալ Քեհայանի հոգատարութեան ներքե գորգաշինութիւն կը սորվիս և ապագագ կը կազմես:

Այս խոսքերուն հուզված Մկրտիչ կը պատասխանե.

— Հայրի՛կ, դուք փրկեցիք մեզի, այդ անուրանալի է, այս անգամ ալ կարող եք փրկել մեզ, քանի որ քիչնշատեն դրամ կա մեզ մոտ. բոլոր մը թույլ տվեք, մյուս կողմը անցնիմ և քրոջս տեսնեմ:

Մկրտիչ ներս կը մտնե քրոջը քով և կը վերադառնա միասին՝ բերելով ութսուն ոսկեդրամ և հանձնելով Կարապետ էֆենդիին՝ կ'ըսե.

— Հայրի՛կ, ահա ձեզի ութսուն ոսկի, գուցե Հիսուսը չօգտեր, մեր փրկութեան համար, եթե դեռ պետք կա կաշառք տալու, ըսե՛ք, նորեն բերեմ:

Գաբրիէլյան Մկրտիչի ճակատը համբուրելով՝ կ'ըսե.

— Զավա՛կս, շատ ու շատ է այս գումարը, Հիմա վստահ եմ, որ ձեր փրկութեանը ակնբախ է. վաղը երեկոյան կը մեկնիք և գայմաքամին պաշտպանութեամբ Հալեպ կը հասնիք՝ ձեզ հետ տանելով հանձնարարյալ նամակներս:

Հետևյալ առտու Գաբրիէլյան կը ներկայանա գայմաքամ պեյին, որը ուրախ տրամադրութեան մեջ էր. խնդիրը կը պարզե՝ ըսելով.

— Տղաս ու աղջիկս կ'ուզեմ, որ Հալեպ բարեհաճեք ղրկել, թո՛ղ երթան միսս Եփեի որբանոցը և մարդ ըլլան. առե՛ք այս հոգեպահութիւնս՝ ութսուն ոսկեդրամը և ընդ հսկողութեամբ անվտանգ Հալեպ հասցնել տվեք: Նույնպէս շա՛տ կ'աղաչեմ, որ մեր բնակարանի տերը՝ շեյխ Մուհամմետ Զեյնին ալ ըսեք, որ Կարապետ աղայի աղջիկը Հալեպ՝ զավկիս կնութեան ուղարկեցի, որպեսզի այդ շեյխը

մեզի չի նեղեւ և բնակարանն ալ դուրս չի նետեւ:

Գայմաքամ պէյը անմիջապէս կը հրամայե ճանտարմա գոմանտանին չորս ձիավոր գինձոր տրամադրել, և կառք մըն ալ կը վարձե Գաբիկյան, և այսպէս քույր - եղբայր անվտանգ կը հասնին Հալեպ՝ Հայոց հոգեւորուն ըսված տեղը, ուր փախստական հայերով լեցուն էր, և Առաջնորդարանի խնամքին տակ էին: Արմենուհի գետինը սալահատակին վրա կը փռե գորգ մը, հոգնած ու պարտասած. անմիջապէս կը քնանա:

Մկրտիչ այգտեղ գտնվող հալեպահայ պահապանին մեծիտիյե մը տալով՝ կը խնդրե, որ Սահակ քահանային ուղղված նամակը անմիջապէս տանի հանձնե:

Պահակը ի տես մեծիտիյեին՝ ուրախացած անմիջապէս կը վազե Առաջնորդարան և նամակը կը հանձնե տեր հորը, որ քսան ըոպե վերջ հոգեւորուն գալով՝ կը կգտնե եղբորն ու քրոջը, հավաքել կուտա ունեցածնին և բեռնակրի մը տալով՝ զանոնք կը փոխադրե Քառասուն մանկանց եկեղեցիին խուցերեն մեկուն մեջ և կ'ըսե.

— Զավակնե՛րս, շատ վատ ժամանակներու մեջ ենք. չըլլա որ դուն, Մկրտի՛չ, մինակդ փողոց ելլես. որեւէ գնում այս բեռնակրին միջոցով ըրե՛. ես կը պատվիրեմ անոր հիմակ , որը մեր եկեղեցիի ժամկոչին եղբայրն է և վստահելի: Նորեն կ'ըսեմ, մինակդ դուրս չելլես, որովհետեւ եթե բռնեն քեզ, անմիջապէս Դէյը էդ Զոր կը ղրկեն, և այնտեղ մահդ կը գտնես: Ես երկու օր վերջ ամեն բան կարգադրած կ'ըլլամ, տու՛ր նայիմ Քեհյայանի ուղղված նամակն ալ, երկու օր վերջ ձեր գործը կատարած կ'ըլլամ, — կ'ըսե տեր հայրը և եղբոր ու քրոջ վրա պահպանիչ մըն ալ կարգալե վերջ կը մեկնի:

Երկու օր վերջ տեր Սահակ քահանան կուգա քովերնին և կ'ըսե.

— Զավա՛կս, Մկրտիչ, ուրախ եղեք, երկուքիդ ալ գործը եղավ. նախ գացի միսս Եփեի մոտ, որը երկար ատեն Ուրֆա քաղաքը մնացած է, ճանչցավ հորդ և չափազանց հուզվեցավ իմանալով սիրելի հորդ եղերական մահը:

Քրոջդ պաշտպանությունը սիրով հանձն առավ. հիմա քույրդ պիտի տանիմ անոր պաշպանությանը հանձնիմ. վերադարձիս քեզի ալ պիտի տանիմ Քեհյայան Կարապետ էֆենտիին քով: Երբ նամակը հանձնեցի, կարդաց, չափեն ավելի հուզված ըսավ. «Դեռ երեք տարի առաջ եկավ մոտս և քանի մը կտոր գորգի գնում կատարեց. շատ հարգելի մարդ էր. ափսոս իր եղբրական վախճանին: Կը խոստանամ բարեկամիս՝ Գաբրիկյանի խնդրածը լի ու լի կատարել և գորգաշինության վարպետ մը կ'ընիմ զայն», — ըսավ:

Տեր հոր խոսքերը խանդավառեցին քույր ու եղբոր. տեր հայրը շարունակեց՝ ըսելով.

— Հիմա ամենեն դժվարը ձեզի համար անձնաթուղթ ճարելն է. պետք է այդ ալ ընեմ:

Այս խոսքերուն վրա, Արմենուհի, տեր հոր ձեռքը համբուրելով, թախանձազին աղաչեց, որ զինքը եղբորմեն չի բաժնե՝ ըսելով.

— Տեր հայր, ես որք չե՛մ, որ որբանոց երթամ, ես ալ եղբորս հետ գորգաշինություն կը սորվինք:

Բայց տեր հայրը անդդովելի մնաց՝ ըսելով.

— Աղջի՛կս, անկարելի է, միսս Եփեին մոտ դուն որք չպիտի ըլլաս, ձեզի ճանչցավ և քեզ իր զավկին պես պիտի խնամե:

Մկրտիչ անձնագրի լուրը իմանալով՝ անմիջապես տեր հորը հինգ ոսկի տվավ և ըսավ.

— Եթե ասիկա չի բավե, ըսեք, սիրելի՛ հայր, նորեն տամ:

— Ձէ՛, զավակս, շուներուն աչքը բանալ պետք չէ. հինգ ոսկին շա՛տ է անգամ, մեկ քանի օրեն այս խնդիրն կը կարգադրվի, հիմա հագվե՛, աղջիկս, որ քեզի տանիմ. դուն ալ, Մկրտիչ, զավակս, նորեն կ'ըսեմ՝ մինչև վերադառնալս դուրս չելլես:

Քույր և եղբայր լալով ողջագուրվեցան, տեր հոր խոսքերեն ալ սրտապնդվեցան, քանի որ տեր հայրը կը խոստանար շաբաթը երկու անգամ Մկրտիչը քրոջը մոտ բերելու:

Արմենուհի տեր հոր հետ կառք մը նստելով՝ կ'երթան միսս Եփեի պատսպարանը, ուր բոլորն ալ հայեր էին՝ դասատուներեն սկսած բոլոր ծառայողները:

Տեր հայրը Արմենուհին հանձնելէ վերջ միսս Եփեին, ետ կը դառնա, և Մկրտիչին հետ կ'երթան Քեհյայանի աշխատանոցը, և ներկայացնելով զայն՝ կը հանձնէ անոր խնամքին: Քեհյայանի գործատեղին կը գտնվեր Հալթ քրաթ (Գայլերու փողոց) ընդարձակ լուսավոր բակի մը վրա, հանգիստ տեղ մը: Քեհյայան դառնալով Մկրտիչին՝ կ'ըսէ.

— Զավա'կս, հիմա դուն իմ իսկական զավակներես մեկն ես, քանի որ քու աղնիվ նահատակ հայրդ ես երեք տարի առաջ ճանչցա, քեզի գորգաշինություն կը սորվեցնիմ, և ապագադ հաջող կ'ըլլա:

Մկրտիչ համբուրելով Քեհյայանի ձեռքը՝ իր երախտադիտությունը կը հայտնի և կը խոստանա հավատարմորեն ծառայել մոտը՝ արժեցնելով ինքզինք:

Վերջապէս 1918 թվականի ամռանը հայտնի կ'ըլլա արդեն, որ դերմանները հաղթվելու են անպայման: Սուրիո, Պաղեստինի, Բաղդադ և Բասրա նահանգներու ծովային նախարար զիկտատոր Մեհմետ Չեմալ փաշան կը հրամայէ այլևս չնեղել հայերը և միշտ սիրալիր վերաբերում ցույց տալ անոնց:

Մկրտիչ գորգաշինության մեջ առաջադիմած էր և վարպետ եղած էր՝ դեկավարելով աշխատանոցի յոթանասուներկու երկսեռ որբ բանվորները: Մյուս կողմն Արմենուհի քույրն ալ ամեն բարեմասնություններով օժտված տիպար հայուհի մը եղած էր միսս Եփեի պաշտպանության ներքե: Որբանոցի փոքր որբուկներուն դաստիարակչուհին էր Արմենուհի:

1918 թվի դեկտեմբերի վերջերն էր, անձրևոտ գիշեր մը, որբանոց կուգա Ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց ընկերության քննիչներեն դոկտոր Պարլնհրմի որդին՝ Չեյմս, քսան տարեկան երիտասարդ մը, որը պաշտոնով եկած էր և որբանոցի տղաներուն մարմ-

նամարզի դասատու նշանակված էր: Մանչերու որբանոցը աղջիկներու որբանոցեն մեկ ժամ հեռու կը գտնվեր: Երկու շաբաթ առաջ Ճեյմս, եկած ըլլալով միսս Եփեի քով և տեսնելով քովը նստած Արմենուհիին գեղեցկութիւնը, հրեշային դաղափար մը հղացած էր այս պատմավոր և անբիծ աղջկան արյունը մտնել: Այսպես այդ կեսգիշերը կուգա Աղջկանց որբանոցը և միսս Եփեի հյուրընկալութիւնը կը խնդրեն՝ պատրվակելով տեղատարափ անձրևը և ցուրտ գիշերը, մանավանդ արաբներու հարձակումեն վախնալը: Միսս Եփե առանց գիտակցելու այս հրեշին ճիւղալին միտքը, որբանոցի առաջին հարկի սենյակներեն իր գրասենյակը անկողին ձգել կը հրամայե ծառաներուն, որպեսզի այդ գիշեր մըսորը Ճեյմս հանգստանա:

Կեսգիշերը շատոնց անցած, հանկարծ այս սրիկային ուղեղին մեջ կ'արթննա մարդ-դազանը, և ոտքերը բոբիկ, գիշերանոցով կ'ելլէ երրորդ հարկը և նախապես տեսած ըլլալով Արմենուհիի սենյակը՝ կը սկսի ուժով զարնել սենյակի դռանը և պռուլ:

— Միսս Արմեն, շուտ հասեք. միսս Եփեն վտանգի մեջ է, ձեզի կը կանչեն:

Արմենուհին ընդոստ արթննալով՝ առանց դուռը բանալու, կը հարցնէ.

— Ո՞վ էք, ինչու՞ սենյակիս դուռը կը զարնիք:

Մինչդեռ սրիկան ա'լ ավելի ուժով դռան զարնելով՝ կը պատասխանէ.

— Զիմացա՞ք, ինչ որ ըսի, միսս Եփեի վրա նոպա եկավ, ձեզի կը կանչեն անհապաղ, շուտ հասեք, սրկու՞մ ըրեք:

Խեղճ աղջիկը, առանց գիտնալու հրեշի ճիւղալին միտքը, երբ լսե, թե միսս Եփեի կյանքը վտանգի մեջ է, անմիջապես դուրս կ'ուզէ նետվիլ... սակայն ինքզինք կը գտնէ հրեշի պիրի բազուկներուն մեջ, որը զինք կը նետէ անկողին և անմեղ աղջկան բերանն ալ թաշկինակովը գոցելով, որպեսզի չկարենա ահագանգել, հարձակվելով զազանի նման՝ կիճացնի անոր թանկագին, նվիրական

կյանքը: Երբ կը տեսնես, որ Արմենուհին դեռ նվաղած է, կամացուկ սենյակեն դուրս կ'ելլես, դուռն ալ վրայեն կը գոցես: Հետո գաղտագողի շենքեն դուրս կելլե՝ դեռ լույսը չի ծագած:

Առավոտուն միսս Եփե, տեսնելով, որ իր սիրասուն հոգեզավակը դեռ չէ արթնցած, վեր կ'ելլես Արմենուհիի սենյակը, դուռը ուժգին բախելով՝ ձայն կուտա. տեսնելով, որ պատասխան չկա, դող կ'ելլես, անմիջապես դուռը կոտրել կուտա և ներս մտնելով՝ ահռելի տեսարանի մը առջև կը գտնվի. Արմենուհին կիսամերկ, շապիկը բզկտված, մարած էր. ամեն բան կը հասկնա, սակայն չկրնար գուշակել, թե ո՞վ կարող էր անոր սենյակը մտնել... Անմիջական դարմանները ընել տալով՝ ուշքի կը բերես զայն և անոր աղեխարշ լաց ու կոծով պատմածն իմանալով եղելությունը՝ միսս Եփե՝ հուզված, կատաղած, կը հրամայե գտնել ձեյմա գազանին, բայց ծերուկ պահակը կ'ըսե.

— Մըստըրը արշալույսին փոքրիկ պայուսակ մը ձեռքին աճապարանքով բանալ տվավ դուռը և մեկնեցավ:

Միսս Եփե անմիջապես այդ սրիկային հորը՝ մըստըր Պարնհըմին ետեհն մարդ կ'ուղարկե՝ անմիջապես շուտափույթ գալ իր մոտ: Երբ դոկտոր Պարնհըմ կ'իմանա եղելությունը, շնական քմծիծաղը շրթունքին կը պատասխանե.

— Օ՛, յես, միսս Եփե, ես ի՞նչ գործ ունիմ որդուս արարքին մեջ. անիկա չափահաս երիտասարդ է, եթե կարող եք, գտեք զինքը և պատժեցե՛ք, ես ոչ մեկ պատասխանատվություն չեմ վերցնեք անոր արարքին համար:

Միսս Եփե կը վռնտե այդ վատշվեր հորը և անմիջապես ոստիկանության գոմիսերին լուր կուտա՝ խնդրելով, որ գտնեն ձեյմա և ձերբակալեն: Ոստիկանությունը կ'իմացնե, թե այս առտվա մեկնող Հալեպ — Պոլիս ճեպընթացով «Հալեպ» կայարանեն մեկնած է մըստըր ձեյմսը:

Միսս Եփե չի՛ հուսահատվեր. անմիջապես եղելությունը մանրամասն կը հեռագրե Կ. Պոլիս՝ ամերիկյան «Պայպլ հաուզ»ին (Ս. Գրքի տուն), որպեսզի ձերբակալեն ոճրա-

գործը և հսկողութեամբ ուղարկեն Հալեպ՝ իր ոճիւրը քա-  
վելու:

Պատասխան կը ստացվի, թե «Ուշ եք մնացած, միսս,  
ձեյմս Պարնհըմ Կ. Պոլսեն Արևելյան ճեպընթացով մեկ-  
նած է Օսթենթ՝ մեկնելու Ամերիկա»:

Միսս Եփե այս անգամ Ամերիկա՝ Պորտ ընկերութեան  
կենտրոնը կը հեռագրե եղելութիւնը՝ խնդրելով, որ ձեր-  
բակայեն զայն և դատեն: Երկու ամիս վերջ Հալեպ միսս  
Եփեին կ'իմացնին, որ ձեյմս հանձնված է արդարադա-  
տութեան, սակայն անմեղ է հռչակված՝ առարկելով, որ  
իրեն նման պատմութիւն մեկուն ինչպե՞ս կը հանդգնեն  
զրպարտել. ո՞վ գիտե այդ աղջիկը որու՞ն հետ հարաբեր-  
վելի վերջ, մեզ վրա է ձգած իր արարքը:

Արմենուհիի վիճակը օր օրի վրա կը վատթարանա:  
Եղբայրը շաբաթը երկու անգամ կ'երթար իր մոտ  
տեսութեան, սակայն տեսնելով քրոջը դալկահար, մելա-  
մաղձոտ վիճակը՝ օր մըն ալ կը հարցնէ քրոջը.

— Արմենուհի, ասկե չորս ամիսներ առաջ այսպես չէիր  
գուն. ի՞նչ պատահած է քեզ:

Քույրը լուռ կը մնա, ոչ մեկ բան չի հայտնէր եղբորը  
և տեսնելով օր-օրի վիճակին անբնական լինելը, եղբորը  
երկար նամակ մը գրելով՝ ամեն բան կը հայտնէ և իր  
անմեղ զոհ մը ըլլալը: Նույն գիշերն ալ, ուշ ժամանակ  
կ'իջնէ խոհանոց և նամակը կրօքին՝ ինքզինք կը կտնի  
մսի կեռեն:

Հետեյալ օրը, երբ Մկրտիչ ահռելի լուրը կ'իմանա և  
իրեն ուղղված քրոջը գրած նամակը, կը դիմե միսս  
Եփեին և հուզումով կը հարցնէ.

— Թանկագի՛ն մայր, քրոջս մարդասպան հրեշը ի՞նչ  
պիտի ըլլա:

Միսս Եփե հուզումով ամեն բան կ'ըսէ և կ'ավելցնէ.

— Ահա՛ ամերիկյան արդարութիւնը, այսպես կը դա-  
տեն. վկա չըլլալուն՝ ազատ են ձգած սրիկան. եթե ի՛մ  
հայրենիքիս մեջ՝ Դանեմարքա, պատահեր այս ոճիւրը,  
վստահեցնեմ ձեզ, որ հրեշին պատիժը շա՛տ մեծ կ'ըլլար:

Սակայն Մկրտիչ հանգիստ չի՝ մնար. կարող կ'ըլլա գտնել հայրենակից մը, որ Ամերիկա մեկնելու էր: Համոզելով զայն, թե ճանապարհի ծախսը և գումար մըն ալ կուտա ապրուստի համար, կը ճամբե զայն՝ խոստում առնելով անկե, որ հայրենակցին վրեժը անպայման պիտի կատարե:

Իրավ ալ, երիտասարդը կը մեկնի, հարցնելով փնտրելով կ'իմանա սրիկա ձեյմսի ուր գտնվելը և կը սկսի հետապնդել զայն: Գիշեր մըն ալ ուշ ժամանակ կը տեսնե անոր հարբած վիճակով բարե մը դուրս ելլելը՝ վատահամբավ ամերիկուհիի մը թևանցուկ. հարձակելով վրան՝ դաշույնի մեկ հարվածով վերջ կուտա հրեշի կյանքին: Այս քաջ երիտասարդը հանգիստ իր գործը տեսնելե վերջ, հետևյալ օրն իսկ կ'երթա հայ թերթի մը խմբագրատունը և կը պատմե եղելությունը: Առավոտյան ամերիկյան թերթերը լուրը կը հայտնեն, թե «Դոկտոր Պարնհըմի գավակը՝ ձեյմս, որը Պորտ Սուրբ Գրքի ընկերության պաշտոնյաներեն է, վատահամբավ բարի մը նրբանցքին մեջ սպաննրված է կանկատերի մը կողմե»:

Երբ հայերեն թերթերն ալ կը գրեն լուրը, եղեսիացի քաջ հայը այդ թերթի հրատարակությունը կը զրկե Հալեպ՝ Մկրտիչին, որքան որ անոր սիրտը ուրախ կ'ըլլա հրեշին մահվան: Սակայն այս չորրորդ զժբախտությունն էր Սարգիսյան ընտանիքին, քանի որ կորսնցուցած էին հայր, մայր, փոքր եղբայրը և վերջին անգամ զժբախտ քույրը՝ անմեղ Արմենուհին:

Մկրտիչ մեծ հառաջադիմություն կ'ունենա իր արվեստին մեջ, մանավանդ պարսկական և թուրքական գորգերու գունագեղ մանրանկարչությամբ իսկականին նման կը պատրաստեր, որոնք մեծ ընդունելության կ'արժանանային Ամերիկայի մեջ:

Օր մըն ալ Մկրտիչ իր պաշտպան Կարապետ աղա Քեհյայանին դիմելով՝ կ'ըսե.

— Սիրելի հայր, հորենական մնացած մեր ոսկեգրամները ինչու՞ չօգտագործենք բազմացնելու: Եթե հարմար կը տեսնեք, Հալեպի Թիլել պողոտային վրա բանանք

գորգ վաճառելու մեծ խանութ մը և մեր գործարանի արտադրած գորգերը, ինչպես նաև Պարսկաստանեն պարսիկ վաճառականներու բերած ընտիր Քիրմանի, Շիրազի, Իսպահանի, Խորասանի անվանի հին և արժեքավոր գորգեր գնելով՝ վաճառենք Ամերիկա:

Սարգիսյան Մկրտիչի այս խոսքերը դյուր կուգան Քեհյայանի, և իր հավանությունը կուտա: Մեծ վաճառատուն մը կը բանան և շքեղորեն կը զարդարեն զայն այն աստիճանին, որ բոլոր օտարականներուն և արաբ մեծ շեյխերու հիացմունքին առարկա կը դառնան, և մեծ համբավ կը ստանան մանավանդ իրենց գործարանի մետաքսե գորգերը, որոնք բնավ չէին զանազանվեր պարսկական գորգերեն:

Այժմ դառնանք շեյխ Ահմատ Սուլթանի հաջորդ Հակոբի ամուսնությանը և անոր հաջորդող ղեպքերուն:

## VIII

Շեյխ Ահմատ Սուլթան ըզդիրի ամուսնության պատրաստությունները վերջացած էին: Մեծ շեյխին ուրախությունը սահման չուներ. ամուսնության արարողությունը որոշված էր շեքեր բայրամեն ութ օր վերջ՝ հաջորդող հինգշաբթին, և հարսանիքի կեր ու խումը տևելու էր ութ օր: Դամասկոսեն հրավիրված նվագածուների խումբը մեծ ոգևորություն առաջ բերած էր կանանոցին մեջ, որովհետև մեծ խանումի՝ շեյխին առաջին կնոջ մոտ ծառայող և գեղեցիկ ձայն ունեցող կիսամերկ հուրիններուն երգերը ու պարերը կը խանդավառեին այր մարդկանց:

Աշիրեթապետները իրենց սահիպանելով մեծ հրապարակին վրա ճիւղ կը խաղային իրենց արաբական ցեղական ձիերով և ձիարշավներ կը կազմակերպեին: Առաջնությունը շահած էր ամենամեծ շեյխ մեծ էմիր Միչհեմ էլ Միչհեմի Ճեյրան ձին, որը նվիրած էր շեյխ Ահմատ Սուլթան, որը կը հրճվեր իր ուրախութենեն:

Շեյխ Ահմատ Սուլթան Հարսնացուն նվիրելու համար հալեպահայ բնիկ անվանի մեծահարուստ ոսկերիչ Սելիմ Ֆետդալին ապսպրած էր աղամանդակուռ քառամանյակ մը, <որը պիտի տար>, երբ Հակոբ առագաստի սենյակը մտնելու ըլլար: Այս նվերը մեծ հրճվանք պատճառած էր մեծ էմիր Միչհեմ էլ Միչհեմին, որովհետեւ իրմե շատ ավելի ստորադաս շեյխ մը այսպէս առատաձեռն նվեր մը ըրած էր:

Հարցուր հրավիրյալներու համար ճոխ սեղան պատրաստված էր, որուն նախագահելու էր մեծ էմիրը: Մասնավորապէս Հալեպէն բերված էին երկու հայ անվանի խոհարարներ, որոնց պատրաստած եվրոպական և մանավանդ արաբական ու հայկական ճաշերը կը դարմացնէին հրավիրյալները. խմիչք չկար, միայն ոչխարի անարատ թանը կը տիրապետէր սեղանին, նույնպէս արաբական խառնուպի շերբեթը:

Ուրախությունը կատարյալ էր, մանավանդ արեւելյան երգերն ու հուրիններու պորտային մերկ խենեշ պարերը:

Փեսացուն հագած էր ծանրագին հագուստներ՝ ոսկեթել բանվածքներով. մեջքէն կապած էր պարսկական քաշմիրի շալ մը, որմե կախված էր ավստրիական տասանոց մանլիխեռ ատրճանակը, և ոսկյա երախակալով արաբական դաշույնը զայն դարձուցած էր «Հագար ու մեկ գիշերներու» հերոսներէն: Ռամատանի աշիրեթին կրօնապետը՝ շեյխ էլ հաջ Ռուսուլին, կատարեց նիքյահի արարողությունը:

Վերջապէս այս հանդիսութեանց վերջը մոտեցաւ. կրօնապետը օրհնելով նիքյահը՝ փեսային կ'առաջնորդէ առագաստի սենյակը, ուր Հակոբին կը սպասէր մեծ խանութը, որ տեսնելով անոր ներս մտնելը, ոտքի կ'ելլէ և համբուրելով ճակատը՝ կ'ըսէ.

— Անուշ լինի, զավա'կս, փոքրիկ շեյխ:

Հակոբ մեծ խանութին ձեռքը համբուրելով՝ անոր ներկայութեան [...] աղամանդակուռ թանկարժեք քառամանյակը հարսին վիզը կ'անցնէ: Փեսան և հարսը մանաւանդ

սրտատրոփ կը սպասեին, թե երբ արգյոք այս չորացած ջատուկ պառավը սենյակեն դուրս էր ելլելու..., և իրենք մինակ մնալու էին:

Վերջապես մեծ խանութը ոտքի կ'ելլէ նորեն:

Երբ հարան ու փեսան մինակ կը մնան, իրարու փաթըլթվելով, հուզմունքեն կը սկսին լալ...

Հրավիրված հարսնուոր շեյխերը մեկնած էին արդեն ուրախ տրամադրության մեջ: Մեծ էմիրը մեկնելէ առաջ նորապսակ զույգին կը պատվիրէ ութ օր վերջ, մեղրալուսնի ամիսը գալ իր Քյազպահի հովասուն հովոցը՝ ըսելով:

— Սիրելի՛ փեսա, կը պահանջեմ, որ ամեն ամառ ինձ մոտ պետք է անցնեք, քանի քեզի շատ սիրեցի և կը հուսամ, որ չպիտի մերժեք հրամանս:

Այս երջանիկ ամուսնութենեն ուղիղ հինգ տարի կ'անցնի, և սակայն Շեմս էլ Նիհար՝ Հակոբի կինը, ամուլ էր մնացած:

1923 թվին շեյխ Ահմատ Սուլթանի առաջին կինը՝ մեծ խանութը մեռած էր: 1925 թվին ալ Հակոբի ամուսնութենեն հինգ տարիներ վերջ մեծ շեյխը կը մեռնի և մեռնելեն առաջ իր սնարին մոտ կը հավաքէ իր երեք իսկական զավակները և առեանգված Հակոբն ու անոր կինը, բոլորին ներկայության այս խոսքերը կ'ըսէ.

— Զավակներ՛ս, ձեզի կ'ըսեմ, դամբանիս մեջ եթե կ'ուզեք, որ հանգիստ ննջեմ, պետք է հնազանդեք ձեր չորրորդ՝ փոքր եղբորը՝ շեյխ Ահմատ ըզդիրին: Անիկա պետք է ըլլա իմ հաջորդս, և դուք բոլորդ պե՛տք է հնազանդեք անոր, զայն սիրելու եք հավիտյան. այժմ երդու՛մ ըրեք, որ կտակս կեստ առ կեստ պիտի գործադրեք:

Երբ մեծ շեյխը այս խոսքերը կ'ըսէ, բացի Հակոբեն և իր կնոջմեն, երեք եղբայրներն ալ ծունկի կուգան սնարին և կ'երդնուն ցմահ հավատարիմ մնալ անոր: Այս խոսքերը լսելով՝ հոգին կ'ավանդէ հայրերին:

[...] Ամբողջ աշիրեթի դուամներն ու հարեան մեծ շեյխերը ներկա կ'ըլլան թաղմանը:

Հակոբ կը հրամայե մեկ տարի սուգ բռնել բովանդակ աշիրեթին մեջ:

Հակոբի հինգ տարվան ամուսնութեան ընթացքին, կինը, ինչպես ըսի, զավակ չէր ունեցած. սակայն այր ու կնոջ սերը այնքան ամուր էր, որ Հակոբ բնավ մտքեն չէր անցուցած իր պաշտելի կնոջ վրա նոր կին մը առնել՝ ապահարզան ընելով. որովհետեւ արաբական օրենքին համաձայն, եթե կինը երեք տարվան ընթացքին զավակ չբերեր, իրավունք ուներ այրը նոր կին առնելու: Սակայն Հակոբ բնավ մտքեն չէր անցուցած կրկնամուսնութիւն կնքել:

Հակոբ իր սիրեցյալ հորը՝ մեծ շէյխին մահւման երկրորդ օրն իսկ իրեն տեղակալ կը նշանակե շէյխին մեծ որդի Հուսեին պեկին:

Սուգի առաջին տարին լրանալուն, երեք եղբայրներն ալ կուգան աշիրեթապետ շէյխ Ահմատ Սուլթան ըզզիրի՝ Հակոբի մոտ և թախանձանքով կը խնդրեն, որ սուգի տարին վերջացած ըլլալուն բավարար նկատեր, և սուգին ելլելով՝ իրենք զիրենք քիչ մըն ալ զբոսանքի տան: Եվ կ'առաջարկեն Թուսմուր հին անունով հռովմեական շըրջանին Փալմիր հին քաղաքի ավերակները երթալ և տեսնել տեսարժան վայրերը և եղնիկի որսորդութեամբ զբաղվիլ:

Հակոբ չմերժելով եղբայրներուն առաջարկը՝ սուգին ելլել կը հրամայե և կ'ընդունե անոնց առաջարկը: Սակայն իր հոգեհատոր կինը՝ Շեմս էլ Նիհար, լացակումած թախանձանքով կը խնդրե, որ տասն օրեն անսլալման վերադառնա՝ ըսելով.

— Ի՛մ սիրելիս, առանց քեզի կյանքը ինձ համար հարամ է, չեմ կրնար մենակութեան դիմանալ՝ առանց քեզի մոտս ունենալու:

Հակոբ խոսք կուտա տասն օր վերջ մոտը ըլլալ:

Երկու օր վերջ, երկու տասնյակ զոյամներով կ'երթան տեսնելու Փալմիրի ավերակները և անկե Ռեֆայիլի անտառը՝ եղնիկի որսորդութիւն ընելու: Որսորդութեան ժամանակ հանկարծ հմիր էլ Միչհեմի ազգականներեն ազ-

դեցիկ շեյխ մը՝ Բեհրամ էլ Ճապպար, կատաղած գոռգոռալով կուգա և կ'ըսե.

— Այս վայրերը կալվածքիս սահմաններուն մեջ են, ի՞նչ իրավունքով, առանց նախապես լուր տալու, եկած եք որսի՝ մանավանդ միասին բերելով այս միսքին էրմեն կյավուրին: Ես չեմ հանդուրժեր այս անարգանքին, քանի դեռ ուշ չէ, հեռացե՛ք:

Երեք եղբայրներն ալ բանավեճի կը բռնվին Բեհրամ շեյխ էլ Ճապպարի հետ, և այն աստիճանին բանավեճը սուր հանգամանք կ'առնի, որ կը հանգի կռիվի: Հակոբ չհանդուրժելով իրեն եղած անարգանքին՝ անմիջապես մավզեր հրացանը քաշելով՝ տեղն ու տեղը կը սպաննե շեյխ Բեհրամ էլ Ճապպարին, և անոր ղուամներեն ալ տասնյակ մը կը սպաննվին: Իրենցմե ալ վեց ղուամ կ'իյնան կռվի վայրը: Ասոր կը հաջորդե ճանապարհներու փակվիլը, և կը սկսին երկու աշիրեթներուն մեջ սպանությունները, հոտերու հափշտակություններ ալ: Այս վիճակը կը տևե ուղիղ մեկ տարի:

Տխուր էր Հակոբ, սիրտը կ'արյունոտվեր, երբ կը տեսներ իր սիրական, պաշտելի կնոջը սառը վերաբերմունքը իրեն հանդեպ: Օր մըն ալ կինը այսպես կը խոսի.

— Ո՛վ շեյխ, ինչու՞ նախապես դուն ինձ չըսիր, թե էրմեն ծագում ունիս. այսօր ինքզինքս անպատված կը զգամ, քանի որ յոթ տարվան կինդ եմ. ալլահը պատժեց ինձ իրավունքով, քանի որ չեմ ալ պտղավորված և ասոր համար ալ ուրախ եմ: Իմացած եմ նույնպես, որ ազգականս եղող շեյխ Բեհրամ էլ Ճապպար քաջին դու՛ն ես սպաննած. քու պատճառովդ ալ մեր աշիրեթներուն մեջ ոխերիմ հակառակություն կա, և մի՛շտ արյուն կը թափվի:

— Խե՞նթ ես, սիրական կինս, ինչե՛ր դուրս կուտաս բերնեդ, ո՞վ ըսավ քեզի, թե ես էրմեն կյավուր եմ, ես իսկական արաբ մուսուլման եմ, զտարյուն և փոքր զավակն եմ պաշտելի մեռած հորս՝ շեյխ Ահմատ Սուլթան Ռամատանի մեծ աշիրեթապետին:

Շեմս էլ Նիհար կատաղած կը պատասխանեն.

— Լռե՛, ով էրմեն կյալուր, ես ամեն բան նոր, վերջերս իմացած եմ, թե չեյիս Ահմատ Սուլթան քեզի տասնմեկ տարի առաջ, Ռաքքա, Եփրատ գետի եզերքին առեւանգած է, քու հայրդ ալ պետվին մը սպաննած է, և ուրիշ չեյիս մըն ալ մայրդ առեւանգած է, և անիկա ալ ուրիշ չեյիսի մը մոտ, որպէս զոլամ պահած են: Շեյիս Ահմատ Սուլթան աշիրեթապետն ալ քու շեկ ըլլալուդ շատ սիրելով՝ իրեն հաջորդ նշանակած է: Ազատե՛ և թալա՛ք ըրե՛ ինձ, եթե չես ուզեր, որ ինքնասպան ըլլամ, հասկցա՞ր, շու՛տ ինձ ազատե քեզմէ:

Հակոբ չհանդուրժելով իր սիրական կնոջը անարգանքին՝ անմիջապէս թալաք կ'ընէ, որուն հալիստյան հալատարմութիւնն ուխտած էր՝ հոգեւին սիրելով զայն:

Շեմս էլ Նիհար նույն օրն իսկ կը մեկնի Ռասայան գյուղը՝ իր ծնողքին մոտ: Այս սրտի վերքը սուրի հարվածեն ափելի կը խոցե Հակոբի սիրտը, և չկրնար մխիթարվել: Գաղտուկ միշտ կուլար և կ'ողբար իր ճակատագիրը՝ հակառակ իր երեք մեծ եղբայրներուն մխիթարանքին, բայց իզուր...

## IX

Հակոբի մեծ եղբոր՝ Մկրտիչ Սարգիսյանի գործը օր օրի հաջողությամբ կ'ընթանար:

Հակոբ իր եղբայրներու թախանձանքին ընդառաջելով, որոնք զայն կը համոզէին, որ անգամ մը պտույտի ելլե՛ Հալեպ քաղաքը երթալով՝ այսպէս ժամանակ մը իր թախիժը մոռնալու:

1928 թվի գարնան Հակոբ կը մեկնի Մազլումյան Օննիկ և Արմեն եղբայրներու սեփական համբաւավոր Hotel Barons (հյուրանոց «Բառոն»)ը: Օր մըն ալ, երբ Հալեպի մեծ պողոտաներեն Թիլիլի վրա կը տեսնէ չքեղորեն դարձրված գորգավաճառի վաճառատուն մը, ուր ցուցադրված էին զանազան տեսակի պարսկական և թուրքական

գորգեր, հիանալով դիտելե վերջ վաճառատուներն ներս կը մտնե՝ «բարե ձեզ» ըսելով:

Մկրտիչ գրասեղանին առջև նստած՝ հաշիվներով զբաղված էր, հանկարծ գլուխը բարձրացնելով, տեսնելով չքեղորեն հագված շեյխին՝ անմիջապես կը պատասխանե.

— Բարին ձեզ վրա, ով մեծ շեյխ, — և կը հրավիրե նստիլ գորգապատ բազմոցին վրա:

Ուրախ խոսակցութեան կը բռնվին զանազան գորգերու տեսակներու վրա: Վաճառատան ծառան անմիջապես, հնամանդ սովորութեան համաձայն, կը հրամցնէ լեզի սուրճը՝ մատնոց առ մատնոց, քանի մը անգամներ:

Մկրտիչ ուշիուշով մտիկ կ'ընէ Հակոբի ձայնի ելեէջներուն և «ա՛խ» քաշելով կ'ըսէ՝ չկրնալով ինքզինք զսպել.

— Սիրելի՛ շեյխ, ներե՛ ինձի, հարցում մը ունիմ ձեզ: Ես ալ ասկէ տասներեք տարի առաջ Ռաքթա, Եփրատ գետի եզերքը հայերու ղաֆլէի ժամանակ ինձմէ փոքր եղբայր մը ունեի, որ առեւանգված է մեծ շեյխի մը կողմէ. այն ժամանակ փոքր եղբայրս տասներկու տարեկան էր, ա՛խ, սիրելի շեյխ, դուք որքա՛ն կը նմանվիք փոքր եղբորս, անիկա ալ ձեզի պէս շեկ էր, եկեք ձեր ճակատը համբուրեմ, անիկա աջ կուրծքին տակ խալ մըն ալ ուներ, կ'աղաչեմ, անգամ մը բացեք ձեր կուրծքը, և տեսնեմ, թե դուք ալ ունի՞ք:

Շեյխը ծիծաղելով բաց կ'ընէ կուրծքը: Մկրտիչ հուզված՝ ցնցում մը կ'ունենա և.

— Ա՛խ, Հակոբ, իմ թանկագին հարազատ եղբայրս, այս ինչ անակնկալ բախտավորութեան էր, որ տասներեք տարի առաջ կորսված եղբորս կը գտնեմ:

Հակոբ, որքան որ անակնկալի եկած էր այս հայտնութեան վրա, սակայն կը պատասխանէ (խոսակցութեանը միշտ արաբերեն լեզվով).

— Ո՛վ վաճառական, ալլահը մարդուն զույգ է ստեղծած, ինչպէս որ սուրբ գիրք Ղորանի մեջ գրված է: Ես զավակն եմ մեծ շեյխ Ահմատ Սուլթան Ռամատանի աշի-

րեթապետին, որը մեր մեծ Նեպի դրախտին մեջ կը ննջե  
կրեք տարիե ի վեր, ինչպե՞ս ես քու եղբայրդ կ'ըլլամ:

Այն ժամանակ Մկրտիչ մեկ առ մեկ կը պատմե Հա-  
կոբին իրենց գլխեն անցած բոլոր պատահարները, մինչև  
խոսի իրենց քրոջ՝ Արմենուհիի եղերական մահը:

Հանկարծ Հակոբ լսելով Արմենուհի բառը, ցնցվելով,  
սակայն ինքզինք ամփոփելով՝ կ'ըսե.

— Ես ալ կը զարմանամ, թե ինչպե՞ս քիչ մը հայերեն  
խոսիլ կը հասկնամ, մանավանդ կը հիշեմ, որ մեր ըն-  
տանիքին մեջ քույր մը ունեցած եմ Արմենուհի անուն և  
չա՛տ լավ կը հիշեմ, որ հայրս դաշունահար եղավ սևա-  
մորթ պետլիների մը կողմե, և սիրասուն մայրս ալ ծերուկ  
շեյխ մը առևանգեց, երբ ես կու լայի հորս դիակին վրա,  
հանկարծ շեյխ մը իջավ ուղտին վրայեն, գրկելով և գուր-  
գուրելով ինձ, ուղտին նստեցնելով՝ տարավ. ուրեմն սխալ  
չէ եղեր, որ սիրական կինս ըսավ. «գուն էլմեն ես և  
առևանգված շեյխ հորդ կողմե Եփրատ գետի եզերքեն»:  
Կնոջս այս խոսքերուն վրա ապահարզան ըրի՝ իր կամքին  
համաձայն:

Եվ Հակոբ կը սկսի դառնագին լալ:

Մկրտիչ կը շարունակե իր խոսքը.

— Պաշտելի եղբայրս Հակոբ, ի՛մ հոգեհատորս, դուն իմ  
խական եղբայրս ես, ուշքի եկուր, հազիվ գտա քեզի՝  
հակառակ իմ երկար փնտրտութենքուն:

Մկրտիչ անմիջապես վաճառատունը փակելով՝ եղբորը  
կ'առաջնորդե իր պաշտպանին՝ Կարապետ աղա Քեհյա-  
յանի բնակարանը, ուր կ'ավետե ուրախությամբ իր եղբո-  
րը գտնելը տասներեք տարիներե վերջ:

Այս անակնկալ և ուրախառիթ լուրին վրա Կարապետ  
աղա Քեհյայան կ'ըսե.

— Սիրելի՛ գավազներս, ուրախ եմ, որ վերջապես բախ-  
տը ժպտեցավ ձեզ և միացաք իրարու: Այժմ մտիկ ըրեք.  
մեծ շեյխ Միշհեմ էլ Միշհեմ իմ ամենալավ բարեկամս է  
և մեծ ու առատաձեռն հայասեր հաճախորդս, անմիջա-  
պես հանձնարարական մը կուտամ ձեզ, կ'երթաք իր մոտ՝

Քյազպազ, և նամակս տալիս վերջ կը խոսինք պետք եղածը: Անիկա բարի՛ է և ձեր մայրն ալ կրնա գտնել և ձեզ ուրախացնել, վաղը առավոտյան կը մեկնիք:

Հակոբ կ'առաջարկէ ամենէն առաջ երթալ Ռամատանիյե՝ իրենց աշիրեթին մեջ, և ամեն ինչ խոսիլ իր երեք եղբայրներուն. «Մյունիր մեծ եղբայրը ամեն բան, կը հուսամ, թե գիտե, և ես շեյխությունը իրեն կը հանձնիմ և փոխարենը կը ստանամ ազատությունս»:

Հետևյալ օրն իսկ, երկու եղբայր կը մեկնին Մկրտիչի սեփական օթոմոպիլով և երեկոյան կը հասնին Ռամատանիյե: Երեք եղբայրներն ալ սրտագին կ'ընդունին զանոնք, կ'ողջագուրվեն իրենց շեյխ փոքր եղբորը հետ, որ ողջ և առողջ եկած է իր աշիրեթը: Հակոբ իր եղբորը՝ Մկրտիչին, կը ներկայացնէ՝ ըսելով.

— Եղբայրնե՛ր, չեմ մոռցած պաշտելի, սիրելի կնոջս՝ Շեմս էլ Նիհարի այն խոսքերը, թե ես առևանգված եմ Ռաքքա՝ Եփրատ գետի եզերքը, երջանկահիշատակ մեր պաշտելի հոր < կողմն >, որը այս պահուս արդարներու ղրախտին մեջ կը ննջէ: Կինս երգումով հաստատեց, թե ես էրմեն եմ, և թախանձանքով աղաչեց, որ գինքը ազատեմ՝ թալաք ընելով: Արդ, այժմ դու՛ք եղեք իմ պաշտպանս և ինձ ազատեք՝ վերադառնալու ազգիս ծոցը՝ էրմեններուն մեջ:

Երեք եղբայրներն էլ գիտեին Հակոբին առևանգված ըլլալը, սակայն երգում տված էին մեծ շեյխ իրենց հորը՝ ոչ մեկուն չհայտնել այս:

Մկրտիչ շեյխ երեք եղբայրներուն կը պատմե իրենց գլխուն հասած ամբողջ այս ողբերգական պատմությունը և վերջապես իր եղբոր գտնելը:

Հակոբ հանդիսավորապես իր շեյխությունը հոժարու-թյամբ կը հանձնէ շեյխի մեծ որդուն՝ Մյունիրի:

Երեք եղբայրներն ալ հուզմունքով ու լացով հրաման կուտան Հակոբին՝ վերադառնալու հայ ազգին ծոցը, սակայն պայման կը դնեն, որ Ահմատ Սուլթան (Հակոբը) չհեռանա հեռուները մինչև Հալեպ, և կը խնդրեն, որ

Ռաքքա հաստատվի՝ զբաղվելով վաճառականությամբ և աշխրեթին բոլոր պետք եղածը միայն ինք վաճառե, թե՛ կանանց և թե՛ այր մարդոց հագուստեղեն և ամեն բան:

Հակոբ խոսք կուտա հաստատվիլ Ռաքքա և երեք եղբայրներուն կամքը կատարել:

Քանի մը օր հանգստանալե վերջ Մկրտիչ և Հակոբ Սարգիսյան եղբայրները, իրենց հետ ունենալով Ռամատանիյեի աշխրեթի նոր շէյխ Մյունիրին և անոր երկու եղբայրներուն, հինգ հոգով կ'երթան Քյազպահ՝ մեծ էմիր Միչհեմ էլ Միչհեմի ապարանքը: Հակոբ օթոմոպիլեն ցատկելով՝ շուտափութի կը վազե հյուրանոցը և կը փաթաթվի էմիրի հագուստի քղանցքին և համբուրելով՝ կը հպատակվի և կը սկսի խոսիլ.

— Ով իմ թանկագին պաշտպանս, մեծ էմիր, ներե թե՛ մեծ եղբորս, որուն դեռ մեկ շաբաթ առաջ գտա, և թե՛ ինձ. պաշտպան եղեք. դուք եք մեր բարերար հայրը:

Հակոբ աչքով կ'ընե Մկրտիչին, և անիկա նույնպես կուգա՝ մեծ էմիրին քղանցքը համբուրելու: Այն ատեն մեծ էմիր կը խոսի.

— Ո՛վ Մկրտիչ, ես քեզ պետք է ճանչնամ, մի՞թե դուն իմ սիրելի բարեկամիս՝ խալիճի Կարապետ աղա Քեհյայանի գործի ընկերը չե՞ս:

— Այո՛, — կը պատասխանե Մկրտիչ և գրպանեն հանելով Կարապետ աղա Քեհյայանի նամակը՝ կը հանձնե էմիրին: Էմիրը հուզմունքով կը կարդա նամակը, ուր Քեհյայան ծայրեծայր մանրամասն գրած էր Սարգիսյան ընտանիքին գլխուն եկած այս ողբերգական տառապանքները:

Էմիրը հրաման կ'ընե անմիջապես իր հավատարիմներուն՝ գտնել Մկրտիչի և Հակոբի մայրը, որը կը գտնվի շէյխ Ճավհար էլ Սամպուքի մոտ, ուր խեղճ կիներ որպես զոլամ կ'աշխատեին շէյխին ապարանքին մեջ:

Կես ժամ վերջ էմիր Միչհեմի մոտ կը բերեն իմանումը (իսկական անունն էր). քառասուն անց կին մը, որուն այտերը, ճակատը, ձեռքերն ու բազուկները կանաչ գույնի կիտվածքներով լեցուն էին, նախ ըրած էին արաբներու

նման, իսկական չեղի արաբներուն նման: Այդ դժբախտ  
կինը Մկրտիչի և Հակոբի մայրն էր...

Խանում ներս մտնելուն պես տեսնելով Հակոբին, որը  
քսանեհինգ տարեկան, նիհարակազմ շեկ երիտասարդ մըն  
էր գեղեցկագեմ, անմիջապես պարանոցին փաթաթվելով.

— Ա՛խ, իմ որդիս, — ըսելով՝ կը սկսի լալ և հուզ-  
մունքեն գետին կ'իյնա մարած. անմիջապես պետք եղած  
դարմաններուն վրա ուշքի կուգա. Մկրտիչին նույնպես  
կը ճանչնա: Էմիրը երբ կը տեսնե, որ կինը ուրախ է իր  
զավակները տեսնելուն, մանավանդ կինը այդ պահուն իր  
երեսները Էմիրին հագուստի քղանցքին քսելով՝ երախ-  
տագիտությունը կը հայտնե.

— Անմիջապես զավկիդ՝ Մկրտիչի հետ, Խանու՛մ, գնա  
այն վրանը, որտեղ կը մնաս, և ինչ որ ունիս հավաքե,  
վերագարձիր նորեն այստեղ, — կ'ըսե Էմիրը:

Երբ Խանում և Մկրտիչ կը մեկնին, Էմիրը ա՛լ ավելի  
մոտ կը կանչե Հակոբին՝ ըսելով.

— Զավա՛կս, քու անմեղ ըլլալդ ես շատո՛նց հաստա-  
տած եմ, իմացի՛ր, քո սիրական Շեմս էլ նիհարդ ո՛չ ևս  
է, երբ անիկա իր կամքով խնդրեց քեզմե, որպեսզի թա-  
լաք ընես, քանի որ իմացած և համոզված էր քու էրմեն  
ըլլալդ և չէր ուզեր քեզի հետ կենակցել, երբ կը վերա-  
դառնա իր հորը մոտ, բոլոր աշխրեթի կանանց կողմե  
կ'անպատվի, իրեն ըսելով. «յոթը տարի էրմեն կյավուրի  
մը ծոցը պառկեցար, դու՛ն ալ կյավուր ես»: Այս անար-  
գանքը չի՛ կրնար տանիլ կինդ և ասկե վեց ամիսներ  
առաջ ինքզինք կը կախե ա՛յն ծառին տակ, ուր դուք ձեր  
սերը կ'ըմբռնեիք. նկարդ ալ կուրծքին սեղմած էր:

Հակոբ երբ այս ցնցող լուրը կ'իմանա, լալով կ'ափսոսա  
իր հոգեհատորին եղբրական մահվանը վրա, քանի որ  
թալաք ընեկեն վերջ չէր ամուսնացած և միշտ իր սիրական  
կնոջը վրա կը մտածեր... աղաչանքով կ'ըսե Էմիրին.

— Թանկագին Էմի՛րս, հրամայեցեք, որ ինծի ցույց տան  
պաշտելի սիրական կնոջս զապուրը, որպեսզի իր վրա  
լալով ողբամ և աղոթեմ:

էմիրը Հակոբի խնդրանքը անմիջապէս կատարել կուտա:

Երկու ժամ վերջ խանում իր զավկին՝ Մկրտիչի հետ կը վերադառնան և ապարանքի հյուրանոցին մեկ անկյունը ոտքի վրա կը սպասեն. Հակոբ ալ անոնց կը միանա: Սակայն էմիր Միչհեմ նշանացի կը հրամայե նստել և ճաշել. ճաշեն վերջ, էմիրը նորեն իր մոտ կանչելով Հակոբը՝ կ'ըսե.

— Ո՛վ շէյխ, այժմ որ դուն պիտի վերադառնաս քու ազգիդ ծոցը, մի՛շտ սիրե բարի արաքներուն և օգտակար եղիր՝ անոնց օգնելով, Ռաքքա երբ խանութ բանաս: Ես շատոնց քու հայ ազգին պատկանելի դիտելի, քանի որ ողբացյալ շէյխ Ահմատ Սուլթան այս գաղտնիքը ինձ հայտնած էր: Ես միշտ սիրած եմ հայերը, քանի որ հավատարիմ, աշխատասեր և ուշիմ ժողովուրդ եք, ամսոս որ այսքան զուլումներու ենթարկվեցիք. ըումի-թուրքերու կողմե եղան ատոնք, սակայն ես շատ կ'ատեն ըումիները և անոնց ռիսերիմ հակառակորդն եմ և միշտ կ'ասպատակեմ անոնց սահմանները իմ քաջերուս հետ, և լեցուն ավարով կը վերադառնանք: Այժմ սուլթանությունը թեև ջնջված և ճյուճհուրիեթի է փոխված Մուստաֆա Քեմալի կողմե, սակայն ասիկա ալ մօրը կողմեն հրեա է և չի՛ սիրեր հայերը, որովհետև ասոնք ալ «ուզիդ ոտնաման մը» չեն:

Վերադարձեք ձեր սիրելի ազգին գիրկը: Դուն, Մկրտիչ, անպայման իմացած ես, որ այսօր Հայաստան մը ունիք... որը ութ տարեկան է և պիտի ապրի, հասակ առնե, զարգանա և բարգավաճի պիտի, քանի որ հայ ազգը, ինչպէս ըսի, աշխատասեր և շինարար է: Դուք պետք է սիրեք ձեր հայրենիքը և ջանացեք Հայաստան ամփոփվիլ և ուժեղանալ: Սակայն կը հրամայեմ քեզի, Յագուպ, չի մոռնաս ո՛չ ինձի և ո՛չ ալ Ռամատանի աշիրեթին, քանի որ տասներեք տարի այս երեք շէյսերն ալ քեզի հարազատ փոքր եղբոր մը պէս պահեցին: Բարով, հազար բարով գնաք:

Երեկոյան հրաժեշտ առնելով մեծ էմիրեն՝ Մկրտիչ իր անձնական օթոմոպիլով մայրն ու Հակոբին և շեյխ Մյուսնիր ցեղապետին հետ կը վերադառնան Ռամատանիյե, իսկ Հուսէին և Ալի արաբական մեյ մեկ ցեղական ձիերու վրա կը հետևեին անոնց: Երբ կը հասնին գյուղ, նոր կը սկսին խրախճությունները, որ կը տևե ութը օր: Վերջապես երբ կ'որոշվի մեկնելու օրը, նոր շեյխ ցեղապետ Մյունիր, խոսքը ուղղելով Հակոբին, կ'ըսե.

— Թանկագին եղբայրս, Յագուպ, մեր ամենքուս սիրելի մեծ շեյխ հայրերնիս՝ Ահմատ Սուլթան, քեզի շատ կը սիրեր և ինձ պատվիրած էր, որ քեզի որպես աստուծո կողմե ավանդ ճանաչեմ, այժմ մտիկ ըրե, աշիրեթին մեջ ինչ որ ժառանգած ես մեր սիրելի ողբացյալ հորմեն՝ անշարժ և շարժուն, գրի առած եմ, և կը պատկանի քեզի: Այս քարաշեն բնակարանը քուկդ է, նույնպես 1500 գլուխ ոչխար և 1000 տեհեպ ունեցող օսկեդրամ, այժմ ինչպես որ կ'ուզես, այնպես տնօրինե:

Հակոբ դառնալով շեյխ Մյունիրին՝ կ'ըսե.

— Իմ շա՛տ սիրելի մեծ եղբայր Մյունիր, այս քարաշեն շենքը քու շեյխությանդ կը վայելե, քեզի կը նվիրեմ, որովհետև դուն ինձ իսկական թե՛ հայր և թե՛ մեծ եղբայր եղար, իսկ ոչխարներու հոտը ես չեմ կրնար պահել և կամ ուրիշին հանձնել. այդ ալ քու խնամքիդ կը թողում, պայմանով սակայն, որ ինչ եկամուտ որ դա, կես առ կես է լինելու իմ և քո մեջ: Ես ալ կ'երդնում նորեն, որ Ռաքքա կը հաստատվիմ և իմ սիրելի Ռամատանի աշիրեթիս համար խանութ մը կը բանամ հետևյալ անունով. «Թաճիր շեյխ Ահմատ Սուլթան էլ ըզզիր Ռամատանի»: Գոհ եք, չէ՞:

Ութ օր հյուրասիրվելի վերջ Հալեպ մեկնելու որոշում տվին. Մյունիր և եղբայրները զինված զոլամներե տասնյակ մը ձիերով, իսկ իրենք երկու օթոմոպիլներով ուղիղ կ'իջնեն հյուրանոց «Բառոն»: Մկրտիչ ուղիղ կ'երթա իր վարձքով բնակած տունը, մայրը կարգի կը դնե ամեն ինչ բնակարանին մեջ:

Վերջապես նորեն կը միանան տասներեք տարվան ան-  
ջատումն մը երկու հոգեհատորներ:

Հակոբ մի քանի օրեր ևս կը մնա Հալեպ և այդ օրե-  
րուն կը զբաղվի գնումներով իր՝ Ռաքքա բանալիք վաճա-  
ռատան համար: Իր սիրելի մորը և հարազատ մեծ եղբոր  
հետ ողջագուրվելն վերջ, երկու բեռնատար օթոմոպիլով  
կը մեկնի Ռաքքա և Մյունիքի ձեռքով վարձված մեծ խա-  
նութ մը կը լեցնեն ապրանքները և դասավորելով՝ իր աշի-  
րեթի զոլամներուն պիտույքները կը սկսի հայթայթել՝  
ամեն բանով բավարարելով:

Հակոբի մայրը եղեսիացի իրենց հայրենակից ազնիվ  
ընտանիքն մը հարսնացու ընտրեց <Մկրտիչին համար>:  
Մեկ ամիս հազիվ թե ըլլար, որ Հակոբ Ռաքքա հաստատ-  
ված էր, անմիջապես մայրն ու եղբայրը կը հրավիրեն, որ  
Հալեպ իջնեն: Հակոբ անմիջապես կ'երթա Ռամատանիյե և  
շեյխ Ահմատ Սուլթանի հաջորդ շեյխ Մյունիքին, Հու-  
սեինին և Ալին միասին առնելով՝ կ'իջնեն Հալեպ, ուր  
հանդիսավորապես Մկրտիչ կը պսակվի:

1932 թվին Կարապետ աղա Քեհյայան խոր ծերության  
մեջ կը մահանա, այն ատեն Մկրտիչ կը ստիպվի քանդել  
գորգի վաճառատունը, որ ընկերակցությամբ բացած էին  
Քեհյայանի հետ:

Մայրն ալ առնելով՝ կուգան հաստատվիլ Ռաքքա՝ ի-  
րենց զավկին ու եղբոր մոտ: Մկրտիչ նոր գործի մը կը  
ձեռնարկե՝ պայմանագիր կնքելով Փրանսական հոգատար  
պետության բարձր գոմիսերության հետ: Ինք կը լինի  
հայթայթիչը Ռաքքայի մեծ զորանոցին, ուր ութ հարյուր  
զինվորներու և սպաներու պարենն ու պիտույքները կը  
հայթայթե: 1936 թվին Սարգիսյաններու մայրը՝ Խանում,  
կը մահանա՝ իր զավակներուն երջանկությունը տեսնելով:  
Հակոբ և Մկրտիչ ունեին երկու զավակներ...

Ավարտելով այս իրական հուզիչ դրվագը՝ արժե գրել նաև Ռաքքա գյուղաքաղաքին (այժմ՝ քաղաք) մեջ տեղի ունեցած այն դեպքերը, որոնք պատահեցան 1945 թվականին՝ երկրորդ համաշխարհային պատերազմի զինադադարեն վերջ:

Այս տոգերը գրողը 1941 ուսումնական տարիին, երբ նոր սկսած էր Հիտլերի գազանային արշավը Սովետական մեծ Հայրենիքին դեմ, Լիբանանի մեջ տիրող տարապայման սղության պատճառով ստիպված եղավ հաստատվել Սուրիո Ռաքքա գյուղաքաղաքի Ազգային Արամյան վարժարանը՝ տնօրինության պաշտոնով:

Այդ ժամանակ Հայոց դպրոցի հոգեբարձության պատասխանատուն (ատենապետ) էր Սարգիսյան Մկրտիչը, որ իր քսակը լայն բացած էր ազգային կարիքներու համար և միշտ դպրոցի նյութական անձուկ վիճակին լայնորեն կ'օգներ:

Սարգիսյան եղբայրները եղան պատճառ, որ այս հուզիչ դրվագը գրի առնեմ. հաճախ իրենց բնակարանը պատմված դեպքերը նոթագրելով՝ պատրաստվեցավ:

Հազիվ թե տասն օր էր անցած 1945 թվի զինադադարեն, մայիսի 18-ին, երբ արաբական աշխարհը փոթորկեցավ Անգլիո սադրանքներով, և Սուրիան իր վրային թոթափելով «հոգատարությունը»՝ ապստամբեցավ Ֆրանսական պետության դեմ և շնորհիվ Անգլիո կարողացավ գլուխ հանել գործը, քանի որ թե՛ ռազմանյութ և թե՛ փող լայնորեն կը տրամադրեր անիկա:

1945 թվի հունիսի 4-ին լուսանալուն Ռաքքայի դորանոցին վրա կը հարձակին սյուննի և պետվին կիսավայրենի, անապատի վաշկատուն ցեղերը, և ասիկա՝ Ռաքքա հաստատված աշխրեթապետներու դրդումով:

Զորանոցի հրամանատար գեներալ Ժերմանոս, որ հույն օրթոդոքս ազգին կը պատկաներ, վտանգավոր տեսնելով կացությունը, մեկ շաբաթ առաջ արդեն իր զինվոր-

ներեն վարձկան արաբներու խումբը երեք հարյուրեն ավելի կարողացած էր առանձնացնել զորանոցի նկուղները՝ զինաթափ ընելով զանոնք։ Նույնպես զորանոց կը հավաքե Ռաքքա բնակող քրիստոնյաներու մեծ մասը, որոնց ամուսինները զորանոցն էին։

Ռաքքայի հայութիւնը կը կազմեր հիսուսյոթը ընտանիք՝ 387 շունչով։

Ռաքքայի վաճառականութիւնը հայոց ձեռքն էր։ Անապատի վաճկատուն էնեղե, չեչեն, պետվին վրանաբնակ կիսավայրենիներու արտորժակը սրված էր, երբ կը մտածեին, թե յուզալի ավար ձեռք ձգելու էին՝ հարձակվելով Ռաքքայի քրիստոնյաներու վաճառատուններուն և բնակարաններուն վրա։

Հայ ժողովուրդը ամենեն ավելի ահ ու դողի մեջ էր՝ գիտակցելով այս գազան վաճկատուններուն, մանավանդ չեչեն ճիվաղներու 1915 թվի եղեռնական շրջանին հայերուս դեմ ըրածները մտաբերելով։

Սակայն անակնկալ մը եղավ, երբ հայերը իմացան, որ մեծ էմիր Միչհեմ էլ Միչհեմ և Ռամատանիյե աշիրեթապետ շեյխ Մյունիր և իր երկու եղբայրները, անմիջապես Ռաքքա հասնելով, զինված ավելի քան 10000 զուլամներով, եփրատ գետի մեծ կամուրջը և գետի եզերքը զիրք բռնելով՝ թույլ չտվին, որ հարձակում տեղի ունենա Ռաքքայի վրա։

Միւսուլման ժամանակ Մյունիր, Հուսեյն և Ալի Ահմատ Սուլթանները հարյուրե ավելի զուլամներով դիրք կը բռնեն՝ շրջապատելով Հակոբ Սարգիսյանի բնակարանին թաղամասն ու տունը՝ պաշտպանելու համար զանոնք իրենց կյանքովը։

Պետվիններու և չեչեն վաճկատուն ցեղերու հորդաներ, արտորժակին բացած մեծ ավարի հուլսերով, ինչպես վերը ըսի, կը հարձակին զորանոցին վրա, սակայն գեներալ Փերմանոս աջալուրջ կը հսկեր։ Երբ հարձակումը կը սկսին «ալլահու էֆալեր» պոռչտուքներով, գեներալի տասնվեց Ֆրանսացի և չորս հայ սպաները անմիջապես

171 մմ տրամագիծ ունեցող թնդանոթի բերաններեն կը ռմբակոծեն այդ վայրենիներուն (որոնք հայու արյունը քամած էին 1915 թվին), ցիր ու ցան կ'ընեն՝ բոլորն ալ սպաննելով:

Երբ առաջին ռումբը պայթեցավ, ուղիղ բնակարանիս դեմի մեծ մզկիթը, որ հարյուր մետր հազիվ կար հեռի, քանդեց զայն մեջը սպասող չեռլի վայրենիներով, մոխրակույտի տակ ծածկեց:

Ես, կինս և տասը տարեկան Սմբատ միակ զավակս, ցած սեղանի մը շուրջ նստած, կը ճաշէինք, ժամը ուղիղ ինն էր գիշերվան. ո՛չ մեկ ընթրիք, անմիջապես ինքզինքնիս նետեցինք կամարակապ լուսամուտներուն մեջ, տասնըչորսերորդ ռմբակոծութենեն վերջ ամեն ինչ լռեց: Հազիվ կես ժամ անցած էր, հանկարծ բնակարանիս դուռսի դուռը բախեցին.

—Ո՛վ ուսուցիչ, դուռը բացեք:

Իմ պատասխանս եղավ.

— Ո՛վ եք:

— Մենք ենք, շեյխ Ահմատ Սուլթան՝ եղբայրը Հակոբին, եկած ենք տանելու ձեզ իրենց մոտ, հրամեցեք բացեք դուռը:

Անմիջապես դուռը բացի. դեմս ցցվեցան վեց զինված և շեյխ Ահմատ Սուլթանը, որը հաճախ երեք տարիս ի վեր կը տեսնեի Հակոբ Սարգիսյանի բնակարանը: Մեզի ողջ-առողջ փոխադրեցին. երբ ներս մտանք, ուրախության ճիչերով ընդունեցին մեզի՝ ըսելով.

— Սիրելի՛ ուսուցիչ, կը կարծեիր, որ ձեզի մենա՞կ կը ձգենք, ո՛չ, այդպես բան չըներ եղեսպագին:

Հակոբ Սարգիսյան և մեծ եղբայրը՝ Մկրտիչ, ութ օրեր առաջ տեղեկացած ըլլալով, որ զորանոցին վրա հարձակվելու են չեռլի վաշկատունները, անմիջապես ձի նստելով՝ իր աշխրեթի եղբոր՝ Մյունիրի հետ կ'երթա Քյաղպահ՝ մեծ էմիր Միչհեմ էլ Միչհեմի մոտ, և պաշտպանություն կը խնդրե հայերուս համար:

Էմիր Միչհեմ անմիջապես կը հրամայե 1200 սպառա-

զեններու, որոնք իր մեծ աշիրեթին կը պատկանեին, Ռաք-  
քա գյուղաքաղաքը չորս կողմեն պաշարել՝ սկսած Բաղ-  
դադի դռնեն: Սակայն էմիր Միչհեմի մեծ որդին՝ Նուրի  
պեկ, հինգ հարյուր զինյալներով և չեչեն, պետվին վաչ-  
կատուններն շրջապատված, կը հարձակի զորանոցին վրա:  
Սակայն, ինչպես ըսի, արձակված ռումբերը անոնց բոլո-  
րին ալ հաշիվը կը մաքրեն, և Նուրի պեկ՝ ոտքեն վիրա-  
վոր, գերի կը բռնեն: Գոմանտան ժերմանոս մտադիր  
կ'ըլլա զայն այդ վիճակին մեջ ռազմական ինքնաթիռով  
փոխադրել Բեյրութ և հանձնել ռազմական տրիբունալին:  
Սակայն Սարգիսյան եղբայրները, որոնք հարաբերություն  
ունեին զեններալին հետ, թախանձանքով կը խնդրեն, որ  
իրենց հանձնե գերին, քանի որ մեծ էմիր հայրը հայերու  
պաշտպանության համար քսանեչորս ժամ հետո տեղեն  
1200 ռազմիկ ղրկած և Ռաքքան չորս կողմեն պաշարած  
է՝ արգելելու համար մուտքը Ռաքքա վաչկատուն ցեղերու  
ոհմակին: Վերջապես գոմանտանը չկրնար մերժել Սար-  
գիսյան եղբայրներուն և վիրավոր Նուրի պեկը կը հանձ-  
նե իրենց, որոնք պետք եղած դարմանները ընել տալիս  
վերջ, հունիսի 14-ին օթոմոպիլով կը փոխադրեն մեծ էմիր  
հորը մոտ: Եվ Նուրի պեկ կ'ըսե էմիրին, թե եթե Սարգի-  
սյան եղբայրները չըլլային, հիմա ես չպիտի լինեի, քանի  
որ զորանոցի հրամանատար ժերմանոսը ինձ ինքնաթիռով  
Բեյրութի Փրանսական ռազմական տրիբունալը պիտի  
ղրկեր, որը անպայման ինձ հրացանազարկ կ'ըներ:

Այն ժամանակ մեծ էմիր. էլ Միչհեմ այսպես կ'ըսե՝  
Սարգիսյան եղբայրներուն դառնալով.

— Ես այսքան երկար տարիներ ֆրանսացիները սիրած  
էի և միշտ ալ օգնած էի, սակայն հայրենիքիս՝ մեծ Սու-  
րիայի սերը ինձ ստիպեց չօգնել ֆրանսացիներուն և որ-  
դիս ուղարկեցի Ռաքքայի զորանոցին վրա հարձակելու:  
Սակայն պետք է խոստովանիմ, որ ֆրանսացիները իսկա-  
պես վեհանձն և ասպետական են:

Գալով այն բանին, որ սիրած եմ և միշտ պիտի սիրեմ  
հայերը, որովհետև անոնք կերած հացը թուրքերու պես

իրենց ծունկեն վար չեն նետեր, հազար շնորհակալ եմ  
ձեզմե, սիրելի՛ դավակներս, Սարգիսյաններ, որ զավակս  
փրկեցիք մահվան: Ապրի՛ք դուք և Հայ ազգը...

Ռաքքայի զորանոցին վրա հարձակումը բոլոր այդ  
հորդաներուն արժեց, և հազարեն ավելի սատկեցան:

1963 թ., երևան

(63)  
6

Վարդան Բյուրապետ ԿՊՊ

—

Սիրուհու Քաղհիման

Պրամ

Երևա արաբական

I Համալսարանի Մաշտոց

1915 թվ. Հայկական Սեպտեմբերյանից

ԱՐՅՈՒՆՈՏ ԹԱՇԿԻՆԱԿԸ

ԴՐԱՄԱ ԵՐԿՈՒ ԱՐԱՐՎԱԾՈՎ

Առաջին համաշխարհային պատերազմի  
1915 թ. հայկական տարագրությունից

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ԱՀՄԵՏ ՐԻԶԱ ՊԵՅ – պառլամենտի նախագահ  
ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱ – պրեմիեր մինիստր  
ԷՆՎԵՐ – ռազմական մինիստր  
ՀԱՍԱՆ ԹԱՀՍԻՆ ՊԵՅ – որբանոցների ընդհանուր  
քննիչ  
ՇՅՈՒՔՐՅՈՒ ՔՅԱԶԻՄ ՊԵՅ – Էրզրումի որբանոցի  
գերեկտոր  
ՖԻՐԻՏՈՒՆ ՊԵՅ – գերեկտորի օգնական  
ՄԻՏՀԱՏ ՇՅՈՒՔՐՅՈՒ – Իթթիհատ կոմիտեի ընդհա-  
նուր քարտուղար  
ԴՈԿՏՈՐ ՆԱԶԼՄ – Իթթիհատի լիդերներից  
ԽԱԼԻՏԵ ԷՏԻՊԵ ՀԱՆԼՄ – Իթթիհատի ջոլիրից  
ԶԵՔԻ – որբանոցի ծառա (Էրզրում)  
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ – վանեցի որբ, տասնչորս տա-  
րեկան  
ԱՐԱՄ (Վահանի եղբայրը) – որբ, տասներկու տարե-  
կան  
ՀՈՎՀԱՆՆԵՍ, ԳԱՐԵԳԻՆ, ՏԻԳՐԱՆ, ՄԻՀՐԱՆ, ԿԱՐԱ-  
ՊԵՏ, ՎԱՀՐԱՄ, ԳԵՎՈՐԳ... ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ԽՄԲԵՐ, ՈՍ-  
ՏԻԿԱՆՆԵՐ, ՊԱՀԱԿՆԵՐ

## ՊՐՈԼՈԳ

Կ. Պոլիս, Իթթիհատ պարտիայի կլուբի շքեղ դահլիճում, ձվածև սեղանի շուրջ բոլորվել են պարտիայի շեֆերը՝ Ահմետ Րիզա պեյ, Թալեաթ փաշա, Էնվեր, դոկտոր Նազըմ, Միտհատ պեյ, Խալիտե Էտիպ:

*ԹԱԼԵԱԹ — Այս բոպեիս գալիս եմ մեր մեծ զինակից գերման դեսպան Վանկենհայմի մոտից: Նրա ցուցմունքով պետք է գործենք: Նա պահանջեց, որ հենց այս օրվանից սա Խալիս հայերից ազատվենք: Մեծ դեսպանը ասաց, որ ինչ էլ պատահի, թուրքի պաշտպանը Գերմանիան է: «Ամեն ինչ արե՛ք, հետք մի՛ թողնեք այս անիծյալ ազգից. գերմանը ու՛ր որ գնում է Անատոլուի մեջ, դեմառդեմ է գալիս հայ առևտրականին, որը մեր շահերին վնաս է հասցնում. բովանդակ Անատոլուի գոմեռսը նրանց ձեռքումն է. Թալեաթ փաշա՛, ձեզ գարթբլանշ եմ տալիս, գործեցեք ինչպես որ ուզում եք», — ասաց ինձ Վանկենհայմը:*

*ԷՆՎԵՐ — Թալեաթ փաշա՛, խնդիրը շա՛տ փափուկ է: Այս անգամին ջանք ենք թափելու, որ այս անիծյալ մի ափ հայերից ո՛չ մի հատ չմնա... Ես առաջարկում եմ, որ բանտերում որքա՛ն որ ոճրագործներ, մինչև իսկ մահվան դատապարտվածներ, մեկ խոսքով դաժան մարդկանց ազատ արձակել. մանավանդ ջահելներին և չզինվորագրել նրանց. միայն չեթեների խմբեր կազմել՝ նրանց խմբապետներ տալով մեր կուսակցության հավատարիմ մարդկանց. այս անգամին առիթը չպետք է փախցնել, ջա՛նք*

ենք թափելու, ասում եմ, մի հատ իսկ հայ ողջ չթողնել: Թաղել պետք է մի անգամ ընդմիջտ հայկական հարց ասված գոչմառը:

ԷՏԻՊԵ ՀԱՆԸՄ — Ես առաջարկում եմ ազատ պահել այս ազգի փոքրիկներին, մանավանդ գեղանի աղջիկ և տղաներին՝ մեր ցեղը ազնվացնելու համար, այս փոքրիկների ծնողքը անխնա կոտորել, զավակների համար բաց անել որբանոցներ, տիպար Տար-յուլ-էյթամներ՝ թրքացնելով նրանց և մոռացնելով ազգությունն իսկ:

ԴՈԿՏՈՐ ՆԱԶԸՄ — Կեցցե՛ս, էտիպե հանրմ, իսկական Հուդիթի գաղափար ունես. ես էլ հենց այդ էի առաջարկելու. ժողովը վերջանալուց վերջ, ես խնդրում եմ, որ ինձ լիազորեք, գնամ Սև ծովի շրջանը՝ Զոնկուլտաքից Տրապիզոն, վստահ եղեք, մեկ հատ իսկ հայ չե՛մ ձգելու...

ԱՀՄԵՏ ՐԻԶԱ (որը մինչև այդ ժամանակ լուռ խորհում էր և մորուքը շոյում) — Փաշանե՛ր, պեյե՛ր և դու, էտիպե հանրմ, մի քիչ լուրջ խորհե՛նք, ապագայում հաշի՛վ են պահանջելու մեզանից. հարցը լուրջ է, լու՛րջ, շատ մի՛ խանդավառվեք Ֆոն Վանկենհայմի խոսքերից. առածն ասում է. «Ծիծաղում է նա, ով վերջում է ծիծաղում»... Էտիպե հանրմ, իսկապես սարսափում եմ քո գաղափարներից. ամերիկյան բարձրագույն կրթությունն ստացել ես և այսքա՛ն հրեշային գաղափարներ սնուցանում ես քո մտքի մեջ:

ԹԱԼԵԱԹ — Դու տեղդ հանգի՛ստ կաց, Ահմետ Րիզա պեյ, չլինի թե մեր տաք ապուրի վրա սառ ջուր լեցնել հանդգնես. մենք գործելու ենք մեր մեծ ղինակից դեսպանի ցուցմունքներով և ընդառաջելու ենք նրա փափազներին: Դեռ ուզու՞մ ես պաշտպանել այս անիծյալ ցեղը, չենք մոռանա երկու օր առաջվա քո ելույթը մեպուսանում... ուզում էիր անմեղ գառներ ցույց տալ այս գաղաններին:

ԱՀՄԵՏ ՐԻԶԱ — Թալեաթ փաշա՛, մի՛ սխալվեք, հիշեք՝ մոտ վեց ամիս առաջ այս ազգի առաջավոր ղեկավարներին «եղբայր» էիր անվանում, և մանավանդ հիշեք Զոհրապ էֆենդին, որը ձեր կյանքը փրկել էր՝ ձեզ ազա-

տելով 1909 թվի մարտ 31-ի դեպքերին իսկական մահից, և սակա՛յն, քչե՛լ տվիք նրան դեպի մահ, առանց խղճա-  
հարվելու. սա թուրքի մերտուլթյան վայե՞լ է:

ԹԱԼԵԱԹ — Էնվերի՛ն ասացեք. ճիշտ որ չէի ուզում  
նրա մահանալը. նա պե՛տք կգար մեզ պատերազմի վեր-  
ջում. ես առաջարկում էի պահել նրան մեկուսացված մի  
հեռավոր վայր՝ մինչև պատերազմի վերջ. ի՞նչ անեմ, որ  
էնվեր փաշան չհամաձայնվեց:

ԷՆՎԵՐ — Ձգե՛ք այդ անպետք խոսքերը, ժամավաճառ  
չլինենք, ասացե՛ք՝ Վանկենհայմի հրահանգները գործա-  
դրելու՞ ենք, թե ոչ... Լավ խորհեցե՛ք, չենք կարող  
վշտացնել կայզեր Վիլհելմին՝ ամենազոր գերման կայսրին,  
որը ինքզինք հռչակել է մահմետականների և թուրք ազ-  
դի պաշտպան:

ԱՄԵՆ-ՔԸ (բացի Ահմետ Բիզա պեյից) — Համաձայն  
ենք:

ԷՏԻՊԵ ՀԱՆԸՄ — Խնդրում եմ, ինձ էլ պաշտոն տաք՝  
շրջելու վեց վիլայեթները և հետևել մեր քաջ չեթեների  
գործունեությանը՝ հավաքելով որբերին:

ԹԱԼԵԱԹ — Լա՛վ, լա՛վ, պեյե՛ր, գործենք այսօրվանից  
և արժանի լինենք կայզերի համակրանքին:

ԱՀՄԵՏ ԲԻԶԱ — Ես պատմության առջև պատասխա-  
նատու չե՛մ մնա. ա՛յս օրվանից հրաժարվում եմ պառլա-  
մենտի նախագահությունից:

ԷՆՎԵՐ — Թե կարող ես, հրաժարվի՛ր, էլ բավական է,  
որքան ձեր քեֆին ծառայել ենք. սրանից վերջ ե՛ս եմ  
պատասխանատուն և ա՛յս ըոպեից ինձ հռչակում եմ դիկ-  
տատոր...

ՄԻՏՀԱՏ — Ես՝ որպես կուսակցությանս պատասխա-  
նատու քարտուղար, առաջարկում եմ գործել մեր սիրելի  
և քաջ Էնվեր փաշայի հրամանին համաձայն: Մի՛ մոռա-  
նաք, պեյե՛ր, մեր մեծ պարտությունը Բալկանյան պատե-  
րազմում, և սակայն հերոս Էնվեր փաշան էր, որ նորից  
փրկեց էտիրենն, և քի՛չ վնասով դուրս եկանք կովից:  
Առա՛ջ գնանք մեր մեծ հերոսի հրամանով:

## ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՎԱԾ

Կարին. Սանասարյան դպրոցի շենքը՝ թուրք որբանոցի վերածված, դիրեկտորի կաբինետը՝ չքեղորեն կահավորված. թիկնաթոռին բազմել է դիրեկտոր Շյուքրյու Քյազիմ պեյը, սեղանի վրա գտնվող մի մատյան աչքե անցկացնում է, ունի անհանդարտ երևույթ:

*ՔՅԱԶԻՄ — Ուշացա՛ն, ընդհանուր քննիչը պետք է հասած լիներ... արդյոք ի՞նչ է պատահել... (Ձանգակը հնչեցնում է. ներս է մտնում ծառա Զեքին, որը բարեկե-  
լուց վերջ. «Համեցե՛ք, պեյ էֆենդի»:) Զեքի՛, մեկ դուրս  
թո՛ւր, դնա՛ մինչև Կանա ճամփա. միասին առ երկու  
ոստիկան, տես թե ու՞ր մնացին հյուրերը...*

*Զեքի — Շատ լավ, պեյ էֆենդի: (Մեկնում է:)*

*ՔՅԱԶԻՄ — Ընդհանուր քննիչը ո՛վ գիտի ի՞նչ նոր  
հրահանգներ է բերելու. իսկապես շվարել եմ. ու՞ր ենք  
տեղավորելու այսքան որբերը: Սվազից իմացնում են, թե  
օրեցօր ավելանում է փախչող որբերի թիվը, զարմանում  
եմ՝ ինչի՞ պետք կգա սա անիծյալ կյավուրներին պահելը:*

Հանկարծ լսվում է կառքի ձայն. լուսամուտից ցած է նայում. տեսնում է, որ մի կառք Սանասարյան դպրոցի մեծ դռան առաջ կանգ է առնում, Շյուքրյու Քյազիմ պեյն էլ արտորանքով վար է իջնում, դիմավորում հյուրերին: Կառքից իջնում են ընդհանուր քննիչ Հասան Թահսին պեյը և որբահավաք Խալիտե Էտիպ հանըմը: Շյուքրյու Քյազիմ պեյը վեր է առաջնորդում ականավոր հյուրերին

դիրեկցիայի կաբինետը, իրար բարեկեցիկ վերջ բազմում են թիկնառոթներն:

*ՔՅԱԶԻՄ* — Բարի եք եկել, Թահսին պեյ, և դուք, էտիպե հանըմ, իսկապես ինձ անհանգստացրիք. տասնհինգ օրից ավելի կլինի, որ հայ չեթենները ռուս զորքի հետ սարսափ են ձգում էրզրումի շրջակաները. մանավանդ Հասան Ղալայից Սարը Ղամըշ... Սվազի որբանոցի դիրեկտոր Օսման Ֆախրի պեյից ստացված տեղեկանքները մխիթարական չեն. մեկ շաբաթվա մեջ ավելի քան հարյուր լակոտներ փախել են: Եթե այսպես գնա, վախենում եմ, որ ստիպված ենք լինելու ցրել Տար-յուլ էյթամը:

*ԹԱՀՍԻՆ* (ծիծաղկոտ) — Որքա՛ն էլ վախկոտ եք Շյուքրյու պեյ, ձեզ պես երիտասարդ, մանավանդ մեր պարտիայի գաղափարներով սնված եք, ինչպե՞ս եք սարսափում... մի քիչ պաղարյուն եղեք, ոչինչ կա վախենալիք. հիմի գերման սպայակույտից կարևոր սպաներ ղեկավարում են մեր բանակը՝ Հասան Ղալայից Սարը Ղամըշ տանող ճամփան: Դուք ինձ ա՛յն ասացեք՝ ինչպե՞ս է ընթանում գործը: Հենց երկու օր վերջ էրզրում է հասնելու Սվազի որբերից մի մաս. նրանց տեղերը պատրաստվե՞լ են...

*ՔՅԱԶԻՄ* — Քննի՛չ պեյ, ներեցեք, ու՞ր ենք տեղավորելու այս նորեկներին: Այս խոշոր շենքի դասարանները, հանդերձարանը և հիվանդանոցը վերածել ենք արդեն ննջարանի. տեղ չկա՛, չվարել եմ, թե ի՞նչ ենք անելու...

*ԹԱՀՍԻՆ* — Շվարելու պետք չկա՛, Շյուքրյու պե՛յ, թաղ քիլիսեն պարապ է մնում, չէ՞... ընդարձակ շենք է. ավելի քան հինգ հարյուր կարելի է տեղավորել: Սակայն, ուշադրությու՛ն, ո՛չ մեկ կրոնական նշան չե՛մ ուզում:

*ՔՅԱԶԻՄ* — Ի՞նչ անենք եկեղեցու անթիվ նկարները:

*ԹԱՀՍԻՆ* — Այրեցե՛ք.

*ՔՅԱԶԻՄ* — Եկեղեցում մետաքսե հագուստներ կան. արծաթե և ոսկյա զարդեր, ի՞նչ անենք...

*ԷՏԻՊԵ ՀԱՆԸՄ* — Եկեղեցու մետաքսե հագուստները

բաժանեցեք ծառայողներին. թող հագուստ կարել տան իրենց հանքմաներին. ոսկե և արծաթե բաժակներն ու ափսեները հատեղ բերել տվեք, խնջույքներին կարելի է գործածել. մոտ օրերս մեր հերոս էնվեր փաշան գալու է այցելության:

ՔՅԱԶԻՄ — Գնալով երեխաների թիվը ավելանում է. պաշտոնյաների պետք ունենք լուրջ հսկողություն անելու համար... Երեկ նորից փախել էին մոտ հիսուն երեխաներ...

ԹԱՀՍԻՆ — Այսօր իսկ հեռագրելու եմ Պոլիս, երիտասարդ ուժեր եմ պահանջելու, որոնք մեր պարտիայի գաղափարներով սնված լինեն. ես չե՛մ կարող տեղացիների վրա հույս դնել. նրանց մի մասը ծախել են իրենց հոգին. իմացել ենք, թե մեկ մասն էլ փախել, միացել է սահմանամերձ ռուսական բանակին:

ՔՅԱԶԻՄ — Այո՛, շատ ճկուն պաշտոնյաների պետք ունենք:

ԷՏԻՊԵ ՀԱՆԸՄ — Պե՛յ էֆենդիներ, ես չափից ավելի զբաղված եմ. հիմի պետք է գնամ նահանգապետ փաշայի մոտ, ուր ժողով է կայանալու: Գիտե՞ք, թե որքան տաժանելի է եղել այս սուրբ գործը. 10 000-ը անց է հավաքած երկսեռ որբերիս թիվը, մանավանդ, ի՛նչ գեղեցիկ աղջիկներ կան նրանց մեջ, որոնք սահմանվել են մեր ցեղը աղնվացինե...

ԹԱՀՍԻՆ — Հաջողությունը մեզնից կախում ունի. պետք է աշխատենք մոռցնել տալ նրանց ծագումը. հետո ատել տալ Հայ ցեղը, արդիական ենիջերիություն ստեղծել, սրա համար պետք է ջնջել ամեն հիշատակ, որը կարող է պատմել հայ ցեղից մի բան. ահա՛ մեր պատրաստած ծրագիրը:

ԷՏԻՊԵ ՀԱՆԸՄ — Ապրե՛ս Թահսին պեյ, ես արդեն վստահ էի ձեզ վրա: Ձեզ մի ուրախ լուր հայտնեմ. Արևելյան վեց նահանգները, որոնց համար հայերը ճրգնում էին ցույց տալ, թե հայկական են և Տաճկահայաստան է կոչվում, մաքրվել են այս անիծված գյավուրներից.

մեկ և կես միլիոնից ավելին տարագրել ենք մինչև Դեյր էզ Զորի անապատները, ուր Զեքի պեյն իր մարտիկներով նրանց հաշիվը մաքրել է... 160 000 ծեղ, պառավ, ծծկեր, բոլորին էլ այրել են նավթով՝ նախապես բացված ընդարձակ փոսի մեջ լեցնելով նրանց: Փա՛ռք ալլահին, սրանից վերջ ո՛չ Հայկական հարց է մնում և ո՛չ էլ մի հատ հայ՝ աղպղպեղի համար: Ահա՛, ես գնում եմ, Շյուքրյու՛ պեյ, քո զիտցածի պես գործի՛ր, արե՛ք ինչ որ ուզում եք...մնաք բարով:

ԹԱՀՍԻՆ — Ես էլ գնամ Իթթիհատի կլուբ՝ տեսնելու մեր էֆենդիներին...

Էտիպե հանձմը և Թահսին պեյը գնում են մինչև դուռը, Շյուքրյու պեյն առաջնորդում է նրանց. հետո վերադառնում և նստում է թիկնաթուղին:

ՔՅԱԶԻՄ — Մի լավ գաղափար է գալիս միտքս. գործը հեշտացնելու և ապահով նպատակին հասնելու համար լավ կլիներ մի քանի հարյուր թուրք որբեր բերել, խառնել նրանց մեջ. մի քիչ թթվածորը, ասում են, կարող է ամբողջ զանգվածը խմորել... Ամենքն էլ դեռ փո՛քը են, քիչ ժամանակից հետո կարող են մոռանալ իրենց ծագումը և թուրք են կարծելու իրենք իրենց: (Զանգակը հնչեցնում է. ներս է մտնում ծառա Զեքին): Զեքի, ասա Ֆիրիտուն պեյին, թող մոտս գա:

ԶեՔի — Շատ լավ, պեյ էֆենդի (գնում է, ներս է մտնում Ֆիրիտուն պեյը՝ բարեկրկով):

ՔՅԱԶԻՄ — Համեցե՛ք, նստե՛ք, Ֆիրիտուն պեյ, կարևոր հրահանգներ եմ տալու: (Սիգարետ հրամցնելով) Այս օրվանից արգելի՛ր հայերեն խոսել, թուրքերի՛նը պարտավորի՛չ արեք ամենքին. փոխեցե՛ք նրանց անուններն էլ, դուրս աղգային թրքական անուններով թող կանչեն...

ՖԻՐԻՏՈՒՆ — Այս գեղեցիկ որոշումները գովարտելովունները չեն՝ կարող հարթել, ընդհակառակը, էլ ավելի բարգացնում են:

ՔՅԱԶԻՄ — Խնդրեմ, բացատրեք ձեր միտքը:

ՖԻՐԻՏՈՒՆ — Հայ երեխաները չա՛տ են տարբերվում մեր ցեղի երեխաներից. նրանք ավելի ուշիմ են և արթնամիտ. մանավանդ ազգային դաստիարակությունն ստանում են օրորոցից: Հայ երեխան մոր կաթի հետ ծծում է ազգությունից գաղափարը: Գիտի, թե ինքը հա՛յ է ցեղով, սրա համար էլ պատրաստ է մերժել որևէ գաղափար:

ՔՅԱԶԻՄ — Մերժե՛լ... հա՛, հա՛, հա՛, ծիծաղելի բան... երբ երկու միլիոնի մոտ հայեր մեր ափի մեջ ճգմել և փետուրների պես չորս կողմ ցրել ենք, ու՞ր է մնում նրանց ընդդիմությունը... սա վախկոտ լակոտե՞րն են, որ դեմ են դնալու մեր ծրագրին:

ՖԻՐԻՏՈՒՆ — Ես, ընդհակառակը, շատ տրամաբանական եմ գտնում. այս երեխաների աչքերում նշմարում եմ արյունի սարսափը, որը ապրում է իրենց սպանված ծնողքի արյունով, որը ոչ մի բան չի կարող ջնջել: Իրենց հե՛տ է մեծանում... պատմելու են, թե ումի՞ց սերած են, ինչու՞ են հայածվել և սպանվել իրենց ծնողքը, ահա՛, հենց այսպես մեր դեմ վրեժխնդրություն են սնուցանելու: Ես առաջարկում եմ տարբեր մեթոդ:

ՔՅԱԶԻՄ — Ո՞րն է այդ մեթոդը:

ՖԻՐԻՏՈՒՆ — Վարժեցնել նրանց մոլություն, քաջալերել ամեն ցած գործերի և այսպես մեռցնել նրանց հոգին. ասածիս ճշմարտության վկա՛ է պատմությունը: Վեց դարուց ի վեր կոտորելով՝ հոգնեցին մեր սուրերը: Նրանք, սակայն, ավելի ուժեղ ու կենսունակ մնացին. փտություն պետք է սրսկել այս ազգի արյունին մեջ. նա լուռ ու ապահով գետնի վրա կարող է իր պայքարն առաջ մղել, և ահա՛, մի սերունդ վերջ, իրենք իրենց ձեռքով ստորագրելու են իրենց մահավճիռը...

ՔՅԱԶԻՄ — Որսը մեր ափի մեջ է. կարող ենք մեր բոլոր ծրագրերը փորձել, բայց հիմի մեր հերոս էնվեր փաշայի հրամանը ա՛յս է. դպրոցը ենթարկել զուտ թրքական կրթության: Խնդրում եմ՝ խիստ հսկողություն կատարեք մանավանդ խելացի և ուրիշների վրա ազդող երե-

խաներին. քաղցրությամբ և նվերներով սիրաշահեք  
նրանց:

ՖԻՐԻՏՈՒՆ — Իսկ եթե չսիրաշահվեն...

ՔՅԱԶԻՄ — Ծե՛ծ, բանտարկություն, սոված պահել,  
եթե սրանք էլ բավարար չլինեն, մաքրե՛լ, այո՛, մաքրել  
մեջտեղից...

ՖԻՐԻՏՈՒՆ — Շա՛տ լավ, ուրեմն գնամ՝ պետք եղած  
կարգադրություններն անելու:

ՔՅԱԶԻՄ — Չմոռանաք ինձ ուղարկել այն տղային,  
որի մասին գանդատվում էիք, ուզում եմ մի լավ դաս  
տալ նրան...

ՖԻՐԻՏՈՒՆ — Շա՛տ լավ, հիմի ուղարկեմ: (Մեկնում  
է: Ներս է մտնում Վահանը, խոնարհվում է և բարեօր  
դվիսով, դռան մոտ կանգնում է):

ՔՅԱԶԻՄ — Ո՞րտեղացի ես, տղա՛ս...

ՎԱՀԱՆ — Վանեցի... պե՛յս...

ՔՅԱԶԻՄ (դեմքը խոթոռելով) — Անունդ ի՞նչ է...

ՎԱՀԱՆ (համարձակ) — Անունս Վահան Վարդանյան  
է:

ՔՅԱԶԻՄ (բարկացած, թիկնաթուից կես վեր է կենում,  
հարձակվելու պես) — Այդ չէ՛, այդ չէ՛ անունդ. ճիշտ  
անունդ եմ ուզում (հետո մեղմելով իր ձայնը, անուշու-  
թյամբ). մի՛ վախճար, տղա՛ս, մի՛ սխալվիր...

ՎԱՀԱՆ — Ուրիշ անուն չունեմ, պեյս, անունս Վահան  
է:

ՔՅԱԶԻՄ (Վահանի վրա է հարձակվում սպառնական)  
— Լռե՛, լռե՛, ստախոս, անունդ Իսրահիմ է. ես գիտեմ  
թե դու ո՛վ ես (մատը դնում է սեղանի վրա գտնված մատ-  
յանի վրա և աչք է անցկացնում): Այստեղ գրված է. հայր  
չունես, Անկարայից են բերել քեզ: Ֆիրիտուն պեյն իրա-  
վունք ունեցել է, երբ ասում էր, թե դու ստախոս, ան-  
հաղանդ տղա ես:

ՎԱՀԱՆ — Ո՛չ, պեյս, ո՛չ, ես վանեցի եմ, հորս սպանել  
են թուրքերը, մայրս ողջ է, նրան փախցրին, ինձ էլ այս-  
տեղ բերին...

ՔՅԱԶԻՄ (բարկությամբ) — Լուե՛, հայրդ անհնազանդ էր կառավարության, ըմբոստ էր, պատժվել է. քեզ էլ հիմի պատժելու եմ, եթե շարունակես անպատկառ լինել:

ՎԱՀԱՆ — Աղաչում եմ, պեյս, որքան ուզեք պատժեք ինձ, բայց մի՛ անարգեք հորս, նա պարկեշտ մարդ էր, ո՛չ մեկին չարիք չէր արել, բնավ մի օր ինձ չէր բարկացել. ո՛հ սիրելի հայր: (Սկսում է լալ):

ՔՅԱԶԻՄ (մեկուսի. «անուշ խոսեմ, գուցե համոզվի», հետո՝ բարձր) — Մոռացի՛ր, տղա՛ս, մոռացի՛ր այդ բաները, տե՛ս, այստեղ ի՞նչ լավ տեղ է, և լավ մարդիկ կան, քեզ սիրում են և խնամում. եթե խելոք և հնազանդ լինես, ամենքը դովելու են քեզ (մեկուսի. «գուցե սովորեցնողներ կան, մի քննարկեմ», բարձր): Նայի՛ր, տղա՛ս, դու միշտ դովելի ես եղել, անշուշտ մի չար տղա քեզ սովորեցնում է:

ՎԱՀԱՆ — Ո՛չ ոք, պե՛յս, ո՛չ ոք...

ՔՅԱԶԻՄ — Եթե ճիշտն ասես, տե՛ս սա գեղեցիկ ժամացույցը քո՛նն է լինելու, ո՞վ ասաց քեզ, թե դու հայ ես:

ՎԱՀԱՆ (մի քիչ խորհելուց վերջ) — Ո՛չ ոք, պեյս. մայրս ասաց, ա՛խ, սիրելի՛ մայր (աչքերն հառելով՝ երկինք է բարձրացնում, հետո թաշկինակով սրբում է): Երբ նրան տանում էին, վզիս փաթաթվեց, համբուրեց ու ասաց. «Վահան, տղա՛ս, ինձ տանում են. գուցե էլ քեզ չտեսնեմ. մի՛ մոռանա, սիրելի որդի, որ դու հա՛յ ես, քո հոր անունը Տիգրան էր, իմ անունն Արշակունհի է. քա՛ջ եղիր և խոստացիր, որ միշտ հա՛յ ես մնալու: (Ծունկի է գալիս՝ ձեռներն երկարած): Ախ, սիրելի՛ պեյս, աղաչում եմ ձեզ, պատժե՛ք, ծեծե՛ք ինձ, բայց իմ անունը մի՛ փոխե՛ք, ես հա՛յ եմ, հա՛յ եմ մնալու, մորս խո՛սք եմ տվել, խոսքս պահելու եմ:

ՔՅԱԶԻՄ (զայրանալով վեր է կենում, հրում է ոտքով և գոռում է) — Լուի՛ր, շուն գլավուր, ճիպոտի հարվածները կարող են միայն կարգի բերել քեզ և խելոքացնել: (Զամգակը հնչեցնում է. ներս է մտնում ծառա Զեքին):

Զեֆի — Համեցե՛ք, պե՛յ էֆենդի...

ՔՅԱԶԻՄ — Հիմի Ֆիրիտուն պեյն այստեղ թող դա:

Զեֆի — Շա՛տ լավ, պեյ էֆենդի:

(Գնում է, ներս է մտնում Ֆիրիտուն պեյը):

ՔՅԱԶԻՄ (Վահանի մազերից բռնած՝ հրում է դեպի Ֆիրիտուն պեյը) — Բա՛նտն ու ծեծը, սովածությունը հասկացնելու են քեզ, թե դու ո՛վ ես, հիմա՛ր (խոսքը ուղղելով Ֆիրիտուն պեյին): Տարե՛ք սա շունը, բանտարկեցե՛ք, օրական քսանհինգ ճիպոտի հարված զարկեք ոտքերին. պատի՛ժը միայն կարող է ուղղել այսպիսի ստախոսներին:

(Ֆիրիտուն պեյը ծեծելով տանում է Վահանին):

ՔՅԱԶԻՄ — Սոսկալի՛ բան... զգվանքը դողացնում է ամբողջ էությունս. կարծես այս տղան ամբողջ ա՛ղբն է. ա՛յն ազգը, որի արյունը կազմվել է ահավոր ատելություն հյու՛ւններով. այն, որին մենք տարագրել ենք, մորթոտել ենք անապատում, վերջին հյու՛ւնն, խրոխտ ու ըմբոստ պայքարում է. բայց սա մահվան վերջին գալարումն է. մեռնելու՛ է. պե՛տք է մեռնի (ինքն իրեն է գալիս). հանդա՛րտ, հանդարտ պետք է լինել, ջիղերս սաստիկ զրգռվել են. տրամաբանությունը գործենք, կարծում եմ, թե բավական ազդեցություն անելու է տված պատիժս... օրինակ է լինելու ուրիշներին: Երբ նրա աղիքները գալարվեն սովածությունից, այն ժամանակ նա կհասկանա արած անմտությունը և տեղի կտա: (Ձայնը փոխելով՝ բարձրաձայն կանչում է) Զեքի՛...

Զեֆի — Համեցե՛ք, պեյ էֆենդի:

ՔՅԱԶԻՄ — Լուր տվե՛ք բոլոր դասատուներին, պաշտոնյաներին և Ֆիրիտուն պեյին՝ շուտով հավաքվեն հյու՛ւրասարհը, կարևոր հրահանգներ ունեմ նրանց հաղորդելիք:

Զեֆի — Շատ լավ, պեյ էֆենդի: (Մեկնում է):

ՔՅԱԶԻՄ — Խիստ քննություն պետք է ենթարկել ամբողջ տղաքները, զատե՛լ պետք է ուշիմ ու գիտակիցները. եթե ենթարկվեն մեր գաղափարներին՝ լավ, եթե ոչ, պետք

է մաքրել, այո՛, մեջտեղից վերցնել նրանց: Անշուշտ աշխատակիցներս հիմի հավաքվել են: Գնա՛մ կարևոր հրահանգներ հաղորդեմ նրանց: (Մեկնում է):

## ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՎԱԾ

Կարին. Սանասարյան դպրոցի ընդարձակ պարտեզում տղաքները խումբ-խումբ ման են դալիս ծառերի տակ, խոսելով դալիս են Հովհաննեսը, Գարեգինը, Գևորգը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ — Այստեղ առանձին ենք, կարող ենք անվախ խոսել: (Չորս կողմն է լրտեսում):

ԳԱՐԵԳԻՆ — Ուշադրություն... լրտեսներ կան, ցածր խոսենք:

ԳԵՎՈՐԳ — Ո՛չ մեկը չկա... Հսկիչն էլ հեռու է, նստենք: (Նստում են երեքն էլ): Պատրաստ եք...

ԳԱՐԵԳԻՆ — Ես պատրաստ եմ (խորհում է):

ՀՈՎՀԱՆՆԵՍ — Ես ամեն բան խորհել եմ. գիշերն արթուն եմ մնալու, պահակների փոխվելու ժամին ձեզ իմաց կտամ:

ԳԱՐԵԳԻՆ — Որտեղի՞ց ենք փախչելու...

ՀՈՎՀԱՆՆԵՍ — Ննջարանի լուսամուտները երկաթ չունեն, մեր դռները իրար ենք միացնելու, այս պարանն էլ (մեջքիցը քակում և ցույց է տալիս) ծայրից ենք կապելու և լուսամուտի փեղկի ծխնուց ենք հաստատելու, հետո իջնելու ենք երկրորդ հարկի կորիդորը...

ԳԱՐԵԳԻՆ — Վերջը ու՞ր ենք գնալու, ճամփա էլ չգիտենք:

ՀՈՎՀԱՆՆԵՍ — Երկրորդ հարկի կորիդորից վար ենք ցատկելու, շրջափակից մե՛կ որ դուրս ելլենք, պրծանք... անտառն էլ մոտ է, կազատվենք. մինչև արևածագ դուրս կգանք Հասան Ղալայի ճամփեն, միշտ անտառի միջով

ենք քայլելու՝ հասնելու համար ուռւ ազատարար բանակին: Երեկ թուրք լակոտներից մեկը ինձ ասում էր, թե ուռւական բանակը մոտեցել է էրզրումին, և իրար մեջ խոսում են, թե մի դուլցե որբանոցի տղաքը տեղափոխվեն ուրիշ վայր... Ազատվե՛նք, տղա՛ք, սա անիծյալ վայրից. ավելի լավ է, հակառակ դեպքում, քուրդերին հանձնվենք, քան թե թուրք լինենք...

ԳԵՎՈՐԳ — Եթե սովածությունից նեղվենք, ի՞նչ ենք անելու, ո՛չ մարդ ենք ճանաչում, ո՛չ էլ կարգին թուրքերեն գիտենք խոսել:

ՀՈՎՀԱՆՆԵՍ — Ի՞նչ պետք կա թուրքերենի: Բոլորս էլ քրդերեն խոսել գիտենք... Ես հինգ հատ սոմուն հաց ճարել եմ ու պահել, դուք էլ ձեր բաժինները պահեցեք, այն ժամանակ մենք կկարողանանք մի շաբաթ քայլել...

ԳԱՐԵԳԻՆ — Վե՞րջը...

ՀՈՎՀԱՆՆԵՍ — Վերջը, ի՞նչ ուզում ես ասել... Եղբայրնե՛ր, ես հանձն առնում եմ սարերի վրա թափառել, անտառներում խոտ ուտել, նույնիսկ սոված մեռնել, քան թե ազգությունս ուրանալ և թուրք լինել...

ԳԵՎՈՐԳ — Ե՛ս էլ քեզ հետ, Հովհաննես:

Գարեգինը տեղիցը չի շարժվում, նա տխուր է, խորհում է:

ՀՈՎՀԱՆՆԵՍ — Ուրեմն պատրաստ լինենք... Բայց դու, Գարեգին, ինչի՞ տխուր ես, վախենում ես ինձ հետ գալ...

ԳԱՐԵԳԻՆ — Ո՛չ, ո՛չ. վահանի վրա խորհում եմ, խեղճ վահան, մենակ է բանտում և երեք օրն ի վեր սոված... ոտքերն էլ ուռել են ճիպոտի հարվածներից, ու տանջվում է վերքերիցը, որքան ցավելու և հուսահատ է լինելու, երբ բանտից ելնի և մեզ չգտնի... Խեղճ վահան, պետք չէ գնանք առանց նրան և փոքր եղբորը հետներս տանելու...

ԳԵՎՈՐԳ — Ես զինքը այս առավոտ տեսել եմ և հետն էլ խոսել. «Վահան, — ասացի, — մենք որոշել ենք փախչել այս գիշեր, ուզում ենք, որ դու և փոքր եղբայրդ էլ մեզ

Հետ գալու որոշում տաք. քեզ սպասելու ենք, թե որ ուզենաս, մինչև բանտից ելնես, ոտքերդ լավանան և կարող լինես մեզ հետ քայլել:» Մի րոպե լուռ մնաց, հետո ասաց. «Դուք փախե՛ք, ես չեմ կարող ձեզ ընկերանալ»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ – Զարմանալի տղա է, այսքան տանջանքներից վերջ ինչպե՞ս ուզում է դեռ մնալ:

ԳԵՎՈՐԳ – «Այո, – ասաց, – գիտեմ, ինձ հալածելու են, պատժելու և դուցե... սպանեն: Բայց ես մահից չե՛մ վախենա, այստեղ փոքր եղբայրներ ունենք, կարո՞ղ ենք մենակ թողնել և փախչել... Ո՛չ, ես այստեղ եմ մնալու, որ նրանց հիշեցնեմ, թե իրենք հայ են, հայի զավակներ, սպանված ծնողների տղաքներ... Դուք փախեք, ինձ մի՛ նայեք...»

ՀՈՎՀԱՆՆԵՍ – Ո՛հ, ի՛նչ ազնիվ տղա... (խորհում է). ո՛չ, ո՛չ, միտքս փոխել եմ, մնալու եմ այստեղ, որ նրանց օգնեմ...

ԳԵՎՈՐԳ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ – Մենք էլ ենք մնում, ուշադրություն, հսկիչը մեր կողմն է գալիս. հեռանա՛նք:՝

Տղաքը ցրվում են:

ՖԻՐԻՏՈՒՆ (խարազանը ձեռին, կատաղած, վազելով գալիս է) – Զկարողացա՛ սրանց հանկարծակիի բերել... փախա՛ն... Հետապնդելու եմ, անշուշտ ձեռք ձգելու եմ նրանցից մեկը. սրանք միշտ մեկտե՛ղ են, իրար հետ են պտտվում, սա անիծված վանեցուն պես նրանց էլ մի լավ դաս տալու է... Բայց ի՞նչ օգուտ, ամեն պատիժ պարապ անցավ, քաջությամբ համբերեց սոսկալի ծեծին, տրված չոր հա՛ցն անգամ մերժեց ուտել. ո՛չ էլ զղջումի նշան ցույց տվեց, ի՛նչ համառություն... սակայն պետք չէ՛ պարտվել... արդեն սա իմ համոզումի հակառակ էր: Խստությունը ըմբոստացնում է մարդուն, խորամանկությամբ որսալու եմ, առայժմ արձակեցի նրան բանտից, խրատել եմ, նվերներ էլ խոստացա, տեսնենք՝ ինչ արդյունք կտա այս: (Նայում է հեռուն, մի բան նշմարածի պես): Բայց սա երեք տղաքը, բոլորովին կասկածելի ընթացք ունեն... Նորից իրար մոտ են գալիս, անշուշտ փա-

խուստի վրա են խորհում: Փախչողների թիվը երթալով  
չատանում է, ոստիկանները եկել են, պաշակությունն էլ  
խստացրի... Հետապնդեմ: (Գնում է):

Տիգրանը, Վահրամը, Միհրանը, Արամը, Գևորգը և Կա-  
րապետը վազելով գալիս և կանգ են առնում մի թթենու  
տակ:

ՎԱՀՐԱՄ — Աղաչում եմ, ցույց տուր քո ժամացույ-  
ցը:

ՄԻՀՐԱՆ (պահում է ժամացույցը, մերթնդմերթ ական-  
ջին է տանում) — Սքանչելի՛ է... սքանչելի՛...

ՎԱՀՐԱՄ — Իմը ավելի լա՛վն է, տեսե՛ք...

ԿԱՐԱՊԵՏ — Տեսե՛ք, ինչ գեղեցիկ գրիչ ունեմ...

ՏԻԳՐԱՆ — Իմ ժամացույցը իսկական ոսկու՛ց է, ի՛նչ  
էլ լավ ձայն ունի...

ԳԵՎՈՐԳ — Տեսե՛ք իմ բաճկոնն ի՛նչ լավն է... Բոլո-  
րովին նոր է, պեյը խոստացել է ինձ վաղն էլ կարմիր  
եմենի տալ...

ՎԱՀՐԱՄ — Իմ եմենիներն ի՛նչ լավն են, ինչքա՛ն  
հեշտությամբ վազել կարողանում եմ...

ԱՐԱՄ (Վահանի փոքր եղբայրը, որը մինչև այդ  
ժամանակ լուռ և տրտում դիտում էր ընկերներին) — Ա՛հ,  
եղբայրս է գալիս (վազում է առաջ):

Վահանը, Գարեգինի ուսին կռթնած, գալիս է առաջ և  
տրտում բարևում տղաներին:

ՏԻԳՐԱՆ — Խե՛ղճ Վահան, շա՛տ են ցավում ոտքերդ:

ՎԱՀՐԱՄ — Չվախեցա՞ր բանտից:

ՄԻՀՐԱՆ — Ինչպե՞ս սոված մնացիր երեք օր...

ԿԱՐԱՊԵՏ — Անխե՛լք գիժ, պարապ տեղը այսքան  
տանջվեցար...

ՏԻԳՐԱՆ — Նայի՛ր, ի՛նչ գեղեցիկ նվերներ ենք ստա-  
ցել, մենք որքան ուրախ ենք...

ՎԱՀԱՆ — Ո՞վ տվեց ձեզ այդ նվերները...

ՏԻԳՐԱՆ — Ֆիրիտուն պե՛յը...

ՎԱՀԱՆ — Ինչի՞ համար է տվել, Տիգրա՛ն...

ՏԻԳՐԱՆ — Իմ անունը սրանից վերջ Տիգրան չէ՛, Ֆիրիտուն պեյը ինձ նոր անունով է կանչում, անունս Շաբի՛ր է...

ԲՈԼՈՐ ՏՂԱՔԸ ՄԻԱԲԵՐԱՆ — Մեր անուններն էլ փոխել է Ֆիրիտուն պեյը:

ԱՐԱՄ — Աղբե՛ր ջան, ես ոչ մի անգամ չգնացի պեյի մոտ, նա ինձ չի էլ տեսել բնավ...

ՎԱՀԱՆ — Տարե՛ք, տարե՛ք այդ անպիտան նվերները, ես չե՛մ կարող նրանց նայել... վատություն է, ուրացություն է... (Տիգրանին դառնալով) Ինչի՞ են մեր հայրերը սպանվել, Տիգրա՛ն, եթե նրանք թուրք լինեին, ո՞վ կարող էր նրանց սպանել... Ինչի՞ էստեղ են մեզ բերել... Թրքացնելու, չէ՞... Ո՛չ, ո՛չ, ես չեմ թողնի, որ անունս փոխեն, չե՛մ կարող թուրք լինել...

ԿԱՐԱՊԵՏ — Այն ժամանակ՝ բանտը, ծեծը, սովածությունը քե՛զ են սպասում:

ՎԱՀԱՆ — Շա՛տ էլ ուրախ եմ, որ ծեծ եմ կերել, սոված մնացել, պատրաստ եմ հազար անգամ ծեծ ուտել, մինչև անգամ մեռնել, քան թե հայ լինելս ուրանալ, ազգս ուրանալ: (Կրծքի տակից դուրս է հանում մի արյունոտ թաշկինակ և ցույց տալիս տղաներին): Տեսեք այս արյունոտ թաշկինակը (տղաներն ուշադիր դիտում են): Սա մայրս տվել է ինձ, երբ վերջին անգամ մեզանից բաժանվում էր՝ թուրքերը տանում էին մեր գեղանի մորը, ասաց ինձ. «Վահա՛ն, տղա՛ս, առ այս նվիրական հիշատակը... սրտիդ վրա պահիր, սա քո սիրելի հոր արյունն է, ես թաթախել եմ նրան քո հոր թափված արյունի մեջ, երբ թուրքերն սպանեցին նրան, մոտը կանգնել էի և տեսա, թե ինչպես քաջությամբ սպանվեց, առանց հայությունն ուրանալու... Պաշտպանի՛ր փոքր եղբորդ էլ, թե կարողանաք սա անիծյալ վայրերից փախչել և Հայաստան ընկնել, լավ կլինեք»: Տղա՛ք, այս արյունն է, որ քայլում է երակներիս մեջ և ուզում է, որ ես էլ արժանի լինեմ հորս... Կա՛մ Հայաստան ապաստանել, կա՛մ արյունս թա-

փել, մահանալ... (Աչքերը երկինք է բարձրացնում՝ ձեռ-  
ները տարածած): Պաշտելի հա՛յր, օգնի՛ր ինձ, որ քեզ  
արժանի զավակ լինեմ:

Այդ ժամանակ տղաները գլուխները ցած են խոնար-  
հում:

ԿԱՐԱՊԵՏ — Ամո՛թ մեզ, հազա՛ր ամոթ... (Բոլոր տղա-  
ները միաբերան). ամո՛թ, ամո՛թ մեզ: (Գետինն են նայում):

ՏԻԳՐԱՆ — Սիրելի՛ Վահան, ների՛ր ինձ, սխալվել եմ...

ԿԱՐԱՊԵՏ — Թող կորչե՛ն այս նվերները: (Գետինն է  
նետում գրիչը և կոխոտում է, տղաքները հետևում են  
նրա օրինակին):

ԲՈԼՈՐԸ — Մե՛նք էլ քո օրինակին հետևելու ենք,  
տո՛ւր այդ նվիրական թաշկինակը համբուրեմ: (Բոլոր  
տղաներն էլ համբուրում են և ասում) Ուխտե՛նք մեռնել,  
քան թե մեր ազգությունն ուրանանք և թուրք լինենք...  
(Զեռքերը վեր են բարձրացնում՝ բռունցքները սեղմած).  
Ուխտե՛նք հաստատ մնալ և պահել մեր ազգությունը:

Ֆիրիտուն պեյն այդ պահին հանկարծ վրա է հասնում  
կատաղած և հարձակվում է Վահանի վրա:

ՖԻՐԻՏՈՒՆ — Ա՛յ իժի ծնունդ, լսեցի՛ ամեն բան, էլ  
չափը անցկացրի՛ր: (Վահանի մազերից քարշ տալով՝ տա-  
նում է: Գարեգինը հետևում է նրանց):

ՏԻԳՐԱՆ — Պե՛յ, ինչի՞ տանում եք Վահանին. նա չէ  
հանցավորը, մե՛նք ենք, մե՛նք, մեզ պատժեք...

ՖԻՐԻՏՈՒՆ (բնավ մտիկ չի տալիս նրանց, վայրենու  
պես ոտքով զարկում և վռնդում է) — Հեռացե՛ք, իժի՛  
ծնունդներ, հեռացե՛ք...

ԿԱՐԱՊԵՏ — Խե՛ղճ Վահան, արդյոք ի՞նչ ցավեր է  
կրելու...

ՏԻԳՐԱՆ — Ինչի՞ ենք անտարբեր մնում...

ԳԵՎՈՐԳ — Ի՞նչ ենք անելու, ի՞նչ...

ՄԻՀՐԱՆ — Առիթը ներկայացել է. ահա ամենալավ  
ժամանակը՝ մեր այսօրվա վատությունը ջնջելու:

ՎԱՀՐԱՄ — Թող իմանան, որ մենք պարզապես խաբ-  
վել ենք:

ԿԱՐԱՊԵՏ – Մեր անունը ուղղելու և մեր քաջությունը ցույց տալու ժամանակն է:

ՏԻԳՐԱՆ – Եվ մեր նահատակ հայրերն ուրախացնելու...

ՄԻՀՐԱՆ – Գնանք ասե՛նք, որ նետել, կոխոտել ենք այդ անպիտան նվերները:

ՏԻԳՐԱՆ – Եվ բանտվելու, նույնիսկ մեռնելու գնանք, թո՛ղ մեզ էլ Վահանի հետ պատժեն...

ԱՐԱՄ (որը մինչ այդ պահին թթենու տակ քաշված՝ ողբում էր իր եղբոր վրա) – Եղբայրնե՛ր, խորհենք ժամ առաջ այս գեհենից ազատվել, մտածենք գործել:

Բոլոր տղաքը պատրաստվում են գնալ, այդ ժամանակ վրա է հասնում Գարեգինը:

ԳԱՐԵԳԻՆ – Սոսկալի՛ բան...

ՏԻԳՐԱՆ – Ու՞ր տարան Վահանին, ի՞նչ է եղել խեղճ տղին...

ԳԱՐԵԳԻՆ – Սոսկալի՛ բան, սոսկալի... երանի չտեսնեի, դեռ դողում եմ... խե՛ղճ տղա...

ԱՄԵՆՔԸ ՄԻԱԲԵՐԱՆ – Ի՞նչ կա, ի՞նչ եղավ. ու՞ր է Վահանը, ու՞ր տարան, ի՞նչ արին խեղճ տղին, պատմի՛ր... ի՛նչ հայրենասեր տղա...

ԳԱՐԵԳԻՆ – Ֆիրիտուն պեյը Վահանի մազերից քարշ տալով, ոտքով զարկելով տարավ. հետևեցի մինչև երրորդ հարկը, դիրեկտոր Շյուքրյու պեյի մոտ: Ես գաղտուկ դիտեցի և լսեցի, թե ինչպիսի ստույգումներ պատմեց, որ պեյը կատաղած վագրի նման հարձակվեց Վահանի վրա... Դիրեկտորն ու հսկիչը ուզում էին բզկտել նրան: Վահանը գետինը, հրեշների ոտքերի տակ թավալվում էր: Զարկում էին, հա զարկում անգուլթ կերպով, վերջապես մեր սիրելի ընկերոջ շունչը կտրվեց, տարածվեց... Սրանով էլ գոհ չմնացին, ուզում էին կտոր-կտոր անել, բռնեցին և լուսամուտից վայր նետեցին:

ԲՈԼՈՐ ՏՂԱՆԵՐԸ ՄԻԱԲԵՐԱՆ – Մեռա՞վ... մեռա՞վ...

*ԳԱՐԵԳԻՆ — Բոլոր ոսկորները ջարդվել էին, արյունը հոսում էր ամեն կողմից, նա կրծքին սեղմած ուներ մոր նվիրած թաշկինակը:*

Այդ ժամանակ բոլոր տղաները սկսում են լաց լինել:

*ԳԱՐԵԳԻՆ — Եվ նա մեռավ մե՛ր պատճառով, խեղճ Վահան, դնա՛նք նրա ճակատիցը համբուրենք...*

*ՏԻԳՐԱՆ — Էլ չե՛մ կարող դիմանալ, չե՛մ էլ համբերի, եղբայրնե՛ր, ուխտենք այսօրվանից փախչելու վրա խորհել, Հասան Ղալայի ճամփով և Սողանլու տաղի միջով, միանա՛նք մեր ազատարարներին՝ ոռւս զինվորներին, և դնա՛նք Հայրենիք...*

Տղաքը տեսնում են, որ դերեկտորն ու հսկիչը խարազանով իրենց կողմն են գալիս, սկսում են աղմկել. «Մենք հայ ենք, թուրք չենք լինի, թե ուզում եք, սպանե՛ք մեզ»:

Այս իրարանցման պահին վազելով գալիս են ավելի քան հիսուն որբեր և գոռում են՝ հակառակ Շյուքրյու և Ֆիրիտուն պեյերի իրենց վրա իջեցրած խարազանի հարվածներին: Նրանք իրենց ձեռքերն են թափահարում և գոռում. «Մենք հայի զավակներ ենք, մեր ծնողները սպանելուց վերջ ուզում եք մեզ թրքացնե՞լ... Ո՛չ, ո՛չ, կմեռնենք և մեր ազգությունը չենք փոխի...»

*ՔՅԱԶԻՄ — Ֆիրիտուն պեյ, հալածի՛ր սա իժի ծնունդներին, զարկե՛ք անխնա, մի՛ խնայեք... (ձեռքի խարազանով ճամփա է բաց անում). զինվորնե՛ր, զարկե՛ք, մահացրե՛ք այս իժի ծնունդ դժավորներին... (Հետո ատելությունով նայում է տղաներին, որոնք դեռ աղմկում են, հոգնած մարդու երևույթով, ձեռքերը թուլացած, վայր է դրում խարազանը): Անիծյա՛լ ազգ, մեկ և կես միլիոնից ավելին տարագրեցինք, մե՛կ միլիոնը մորթոտեցինք և սոված մահացրինք անապատում, սակայն ի՛նչ օգուտ... ի՛նչ օգուտ, հոգիդ ապրում է դեռ...*

## ԷՊԻԼՈԳ

Տեսարանը ներկայացնում է մոլթ անտառ...

Ռուս Հետախույզ զինվորները ման են գալիս խումբ-խումբ, հանկարծ առաջավոր պահակներից մինը նշմարում է մարդկային փոքրիկ էակների... Ձայն է տալիս. «Ստո՛յ... կտո՞ իդյոտ»\*: Այս ձայնի վրա. «Հայ ենք, արմյանին, որբեր, դժբախտներ ենք, ազատե՛ք մեզ, թե չէ մեռնելու ենք...»

Անմիջապես Հետախույզների մի ջոկատ առաջանում է և տեսնում փոքրիկների մի խումբ, ոչ պակաս Հիսուսից, 10-12 տարեկան տղաների: Այս խմբին առաջնորդում են և բերում ուղիղ Հրամանատարի վրանի առաջ կանգնեցնում: Խմբի միջից առաջ են գալիս Գարեգինը, Տիգրանը և սպանված Վահանի եղբայրը՝ Արամը: Վրանից ներս են մտնում զինվորի առաջնորդությունը և կանգ են առնում շարքի առաջ: Հրամանատար գնդապետը, հայրական գուլթով լցված, դիմում է իր մոտ գտնվող հայ լեյտենանտ Գուրգենին, որ հարցաքննի նրանց:

*ԼԵՅՏԵՆԱՆՏ ԳՈՒՐԳԵՆ — Ուլքե՞ր եք, որտեղի՞ց եք գալիս:*

*ՏԻԳՐԱՆ — Դժբախտ հայ որբեր ենք Վանա և Էրզրումի շրջաններից, մեր ծնողներին թուրքերն սպանել և մեզ առևանգել էին թրքացնելու համար: Էրզրում՝ Սանասարյան դպրոցում, ավելի քան երեք հազար որբեր*

---

\* Կանգնի՛ր, ո՞վ է գալիս (ռուս.):

գտնվում են մեր եղբայրներից. ամեն օր մահացնում են ծեծի տակ ութից տասին: Սրա եղբայրն էլ (ցույց է տալիս Արամին) դեռ ութ օր առաջ երրորդ հարկի լուսամուտից վայր գցեցին և մահացրին: Այս խմբի առաջնորդ ենք հղել ես, Գարեգինը և Միհրանը, վեց օրն ի վեր քայլում ենք անտառների միջով և սարերի վրայով...

Լեյտենանտ Գուրգենը թարգմանում է հրամանատարին, ինչ որ տղաքը պատմել են: Հրամանատարը հուզված, մի րոպե լուռ, մորուքն է շոյում... հետո հրամայում է լեյտենանտ Գուրգենին.

*ՀՐԱՄԱՆԱՏԱՐ – Բա՛վ եմ համարում այսքա՛ն հետախուզությունը, հրամայում եմ՝ հենց այս բոպեից գրոհի անցնել, երեք օր վերջ պետք է գրավված լինի Էրզրում բերդաքաղաքը: (Հետո, հայրական գորովանքով դիտում է Արամին): Մոյ բեզվիհնի սին... Բու՞ղիշ մոյ սին\*...*

Արամն առանց հասկանալու, թե ինչ է ասում հրամանատարը, առաջ է անցնում, հրամանատարի ձեռքն է համբուրում, որը գրկում է փոքրիկին և ճակտիցը համբուրում, հետո խոսքը ուղղում է լեյտենանտ Գուրգենին.

*ՀՐԱՄԱՆԱՏԱՐ – Այս փոքրիկին ե՛ս եմ որդեգրում, տարե՛ք նրան բաղանիս, մաքրել տվե՛ք, ուղարկելու եմ Մոսկվա՝ սովորելու, բոլոր սպաներին հրամայում եմ որդեգրել մեկ-մեկ այս դժբախտ որբերից: Հա՛յ ազգ, ահա գալիս ենք քեզ ազատագրելու դաժան լուծից... Լեյտենանտ Գուրգեն՛ն, հրամայում եմ նույնպես՝ փակե՛ք ճամփաները, ո՛չ մի փախուստի ճամփա, բաց չթողնել թշնամուն: Գրոհը լինելու է անակնկալ, և պետք է ազատագրե՛լ այս դժբախտ բեկորներին...*

---

\* Իմ անմեղ որդի... Կլինե՞ս իմ որդին (ռուս.):

ՀՈՒՇԵՐ

Հանգիստի Ա. Մարտի

« ԲՆ Հանգիստ »

Արեւիկայի արդիւնները խմբի

Վ. Բյուրատի հուշագրության անվանաթերթը  
(ԳԱԹ, Վ. Բյուրատի ֆոնդ, թիվ 5)

ՍՄԲԱՏ ԲՅՈՒՐԱՏ  
(Տեր Ղազարենց)\*



Սմբատ Բյուրատը ծնվել է Զեյթունում, 1862 թվականին: Երուսաղեմի ժառանգավորաց ուսումնարանը 1880 թվականին ավարտելուց հետո, ուղարկվում է Փարիզ՝ Սորբոնի համալսարանը, որպես մանկավարժական ֆակուլտետի ազատ ունկնդիր: 1883 թվականին մեկնում է Զեյթուն՝ ուսուցչական պաշտոնի:

1885 թվականին մեկնում է Կ. Պոլիս, ծանոթանում ժամանակի գրական խոշոր դեմքերի՝ Եղիա Տեմիրճիպաշյանի, Գրիգոր Զոհրապի, Ռեթեոս Պերպերյանի, Լուսինյան Նար-Պեյի, Մինաս Զերադի, Թովմաս Թերզյանի և Նահապետ Ռուսինյանի հետ: Բյուրատի առաջին բանաստեղծությունը՝ «Մեռյալները», լույս է տեսնում Եղիա Տեմիրճիպաշյանի «Երկրագունդ»-ում, 1885 թվականին: Այդ նույն թվականին Բյուրատը մեկնում է Զեյթուն՝ այս անգամ Հայոց միացյալ ընկերության կողմից նշանակվելով Կիլիկիայի հայկական 36 վարժարանների ընդհանուր տեսուչ:

1887 թվականին Հալեպի կուսակալի գաղտնի հրահանգով հրդեհվեց Զեյթունը, և քաղաքը կործանվեց, մոխրացավ: Բյուրատը ստիպված վերադարձավ Կ. Պոլիս և այն-

\* Տպագրվում է «Սովետական գրականություն» ամսագրից (1965 թ., թիվ 4)՝ որոշ կրճատումներով:

տեղից Գրիգոր Զոհրապի թելադրանքով մեկնեց Սամսոն՝ որպես Ազգային վարժարանի ղեկեկտոր:

Մասնավոր դպրոցը երկու շրջան էր բոլորել, երբ Թբիլիսիից Սամսոն եկան Ռուբեն խան Ազատը և Սարգիս Դոնապետյանը (վերջինս 1919 թ. Լոնդոնում հրատարակեց «Ձայն տառապելոց» երկը՝ 1915 թ. հայկական եղեռնի մասին): Օսմանյան կայսրության աչքին երկուսն էլ անբաղձալի-կասկածելի էին, և հայրս, պարսկական հյուպատոսից իրանական անձնագրեր ստանալով, նրանց արտասահման ուղարկեց:

1890 թվականին արձակուրդին Բյուրատը Զեյթուն մեկնեց՝ հորը տեսնելու: Սակայն այնտեղ ձերբակալվեց: Մարաշ քաղաքի բանտը նետեցին հորս և մորս, ինձ էլ Զորբաջյանների ընտանիքին հանձնեցին:

Մայրս հորս ամիս հետո ազատ արձակվեց, իսկ հորս, մեկ ու կես տարի Մարաշի բանտում պահելով, փոխադրեցին Հալեպ, որտեղ դատապարտեցին հինգ տարվա ազատազրկման՝ մեծագույն հանցանք համարելով նրա զեյթունցի, առավել ևս ուսուցիչ լինելը:

1895 թվականի հուլիսին, ազատազրկման հինգ տարին լրանալուց հետո, հայրս նորից դատապարտվեց հինգ տարվա բանտարկության: Բայց շնորհիվ Պոլսի ուսուսական և անգլիական դեսպանների ազդու միջամտությունների՝ 48 զեյթունցի բանտարկյալների հետ ազատ արձակվեց: Նա փոխադրվեց Կ. Պոլիս և նշանակվեց Քաղկեդոնի ազգային վարժարանի հայերենի ու ֆրանսերենի ուսուցիչ:

1896 թվականին, Բանկ Օթոմանի դեպքերի ժամանակ, հորս Սորբոնի ընկերներից Պոլսի ֆրանսիական դեսպան Մյունիեի պաշտպանությունը փոխադրվեցինք եգիպտական մի շոգենավ և Ադեքսանդրիա հասանք: Հայրս տեղի ազգային Պողոսյան վարժարանում երկու տարի որպես ուսուցիչ պաշտոնավարելուց հետո, 1898 թվականին մեկնում է Կահիրե, ներկայանում Եգիպտոսի արտաքին գործերի մինիստրին և խնդրում թույլ տալ Կահիրեում մասնավոր բարձրագույն ուսումնարան բանալու: Այստեղ նա

Հիմնեց Կահիրեի Կեդրոնական կրթարանը: Այդտեղ էլ 1899 թվականին հրատարակեց «Փյունիկ» թերթը (կիսամսյա գրական թերթ):

Նույն տարվա աշնանը աղեսքանդերիաբնակ Կարապետ աղա Մելքոնյանը հորս ներկայացրեց Թալեաթին, որը սուլթան Համիդի կողմից հալածական վտարանդի էր: Հայրս սիրով ընդունեց նրան: Բայց երեք օր անց հորս կանչում են Եգիպտոսի անգլիական բարձր կոմիսար Լորդ Գրոմերի մոտ:

— Մըստըր Բյուրատ, — խիստ ասում է Գրոմերը, — մենք ձեզ ճանաչում ենք որպես մտավորական և ուսուցիչ, սակայն չգիտեինք, որ դուք ձեր կրթական հարկի տակ պատսպարում եք անբաղձալի փախստականների: Այդ անձը պետք է 24 ժամվա ընթացքում թողնի ձեր բնակարանը. մինչ այդ ձեզ չենք հետապնդի, — վճռում է Գրոմերը:

Նույն գիշեր հայրս Թալեաթ բեյին կեսգիշերվա գնացքով փոխադրում է Աղեքսանդրիա՝ Բյուլբյուլյանի «Արմենիա» հյուրանոցը: Ապա ծանոթ հունական դեսպանի միջոցով հուլյանի անձնագիր ձեռք բերելով՝ Թալեաթին տանում են հունական մի նավ, որ նույն օրը մեկնելու էր Աթենք. ճանապարհում են և որոշ գումար են տալիս ծախսելու:

Մեկ ամիս անց Աթենքի «Թահիտրոմոս» թերթում տպագրվում է հետևյալ տեղեկությունը.

«Թալեաթ բեյ, հայրենասիրական պարտքե մղված, գաղտնի Եգիպտոս երթալով, Կահիրեի մեջ հայերու ռեուլյուցիոն գործունեություն տեղյակ լինելով՝ Աթենքի թուրքական դեսպան Մյունիր փաշային կհայտնե, և դեսպանը պաշտպանելով զայն, սուլթանեն ներում կը ստանա: Թալեաթ էտիրեն (Ադրիանապոլիս) փոստ-հեռագրական ընդհանուր գիրեկտոր կը նշանակվե...»

1901 թվականին հայրս «Նոր օր» թերթի խմբագիրն էր: Հետո նորից Աղեքսանդրիայում՝ Պողոսյան վարժարանի ղեկավարը: Կրկին հրատարակում է «Փյունիկ»ը՝

այս անգամ՝ իբրև շաբաթաթերթ, որոշ ժամանակ էլ՝ իբրև օրաթերթ:

Սահմանադրությունից հետո Գրիգոր Զոհրապը նամակով խորհուրդ տվեց հորս Պոլիս տեղափոխվել՝ բավ համարելով նրա երկարամյա աստանդական կյանքը: Հայրս մեկնեց Պոլիս, իր հետ նաև Երվանդ Արմաքեշխանյանն ու Երվանդ Օտյանը:

Պոլսում հայրս դարձավ «Մանգումեի էֆքյար» օրաթերթի խմբագրական կազմի անդամ:

Ստանձնելով թերթի ազգային բաժինը՝ նա այդտեղ, որպես թերթոն, տպագրեց «Բանտե բանտ» վեպը՝ 1890—1895 թվականների դեպքերի մասին, ֆրանսերենից թարգմանելով՝ հրատարակեց «Համիդի ներքին կյանքը» վեպը և այլն...

Հայրս նորից սկսեց հրատարակել «Փյունիկ» թերթը, սակայն՝ հինգ համար միայն, որին հաջորդեց «Գաղափար» օրաթերթը:

Աղանայի կոտորածի առթիվ նա տաքացած հոգվածներ և խմբագրականներ գրեց՝ մեղադրելով Իթիհատ պարտիային. «Դուք ըրիք այս ոճիրը, որուն երեսուն հազար անմեղ հայեր զոհ գացին: Ոճրագործնե՛ր, այլևս բավական է, հասկացանք ձեզ...»: Եվ այս հոգվածի կապակցությամբ գրաքննությունը արգելեց թերթի 42-րդ համարը:

1910 թվականի ամռանը, քսաներեք տարվա աստանդական կյանքից հետո, հայրս մեկնեց Զեյթուն և այնտեղ գրեց «Զեյթունի վրեժը ազատության համար» պատմական վեպը...

Անցավ երկու տարի ևս, մինչև 1915 թվականի դարհուրելի կոտորածը:

1915 թվականի ապրիլի ուրբաթ օրը (22-ին) հայրս և Թալեաթը «Սերբլը դը Քոստանդինոբլը» ակումբում շախմատ են խաղում: Հայրս մտազբաղ սկսում է տանուլ տալ: Թալեաթը նեղսրտում է:

Ապրիլի 23—24 լուսադեմին իթիհատականները գործադրեցին իրենց ճիվաղային մտահղացումը. Պոլսից հա-

վաքեցին հայ մտավորական ընտրանին, թվով՝ 284 անձ։ Առավոտյան Պոլսի հայությունը սուգի մեջ էր։ Իրանական հպատակության անձնագիրը, որ տրված էր թուրքական զինվորական իշխանության կողմից, գրպանս դրի և մեկ ու կես ժամից հասա հորս բնակարանը։ Ինձ տեսելով՝ ասաց.

— Լավ է, որ եկար, ծովեզերքի սրճարանը երթանք։

Միասին գնացինք Խասգյուղի նավամատուցյի սրճարանը, երկու սուրճ և հորս համար նարգիլի պատվիրեցի։ Նա չափազանց մտածկոտ էր. հանկարծ ասաց.

— Պատուհանը բաց, զավակս, ծովի օդ շնչեմ, գուցե այս վերջինը լինի։

— Ինչե՞ր ես ասում, հայր, քեզ համար ի՞նչ կա. մի՞թե Թալեաթ փաշան քեզ չի պաշտպանի...

— Զավակս, այս ուրիշ բան է. տեսնում եմ՝ հայ ազգի բնաջնջման ծրագիրն են ուղղում գործադրել...

Հանկարծ սրճարան մտան երկու թուրք լրտեսներ, մոտեցան սրճարանատիրոջը.

— Այստե՞ղ է Սմբատը։

— Ես չեմ ճանաչում, — պատասխանեց սրճարանատերը։

Հանկարծ հայրս ձայնեց լրտեսներին և առանց պաղարյունությունը կորցնելու ասաց.

— Ես եմ։

Հորս աքսորեցին մյուս մտավորականներին հետ։

Ութ օր հետո՝ մայիսի 1-ին, ստացա առաջին բացիկը. հայրս գրում էր, թե իրենք ութսունչորս հոգի են և գտնվում են Այազ գյուղաքաղաքի Սարը դըշլան կոչվող շենքում։ Երկրորդ բացիկում խոսքը Թալեաթ փաշային էր ուղղված. «Փաշա՛, չէի կարծում, որ կյանքդ փրկողին դեպի մահ կուղարկես։ Սա ազնվությունն է»։ Այդ բացիկը մայրս տարավ Թալեաթ փաշայի ապարանքը։ Քիչ հետո գալիս է Թալեաթը։ Նրա կինը խնդրում է, որ Սըֆաթ էֆենդիին (Սմբատ) ազատի։

Թալեաթը պատասխանում է մորս.

— Տիկին, ես չէի կարող էնվեր փաշայի հրամանին դիմադրել. գնա՛, նրան աղաչիր:

Երբ խուզարկել էին հորս բնակարանը, բոլոր ձեռագրերը, պարկի մեջ լցնելով, տարել էին քաղաքական բաժնի նկուղը: Տարիներ հետո, 1919 թվականի գարնանը, կաշառեցի քաղաքական բաժանմունքի մի կոմիսարի, գնացինք այդ նկուղը: Երկար պրպտումից հետո գտա միայն հորս «Բանաստեղծությունների» կազմած հատորը, նույնպես՝ կազմած «Լեռնականի մը հուշատետրը»: Իսկ անկազմ տետրակներով՝ «Արշակ երկրորդ» պատմական վեպը, «Լեռին կույսը»՝ 1 600 թվականի ղեյթունցի Զարմոն հերոսուհու մասին, և Իզմիրյան կաթողիկոսի մասին գրված «Խուժանին կուռքը» ուրիշ շատ ձեռագրերի հետ միասին վանդալները այրել էին:

Որոնումներիս ժամանակ հանդիպեցի Դանիել Վարուժանի կնոջը՝ Արաքսին, որը նույնպես փնտրում էր Վարուժանի ձեռագրերը: Ի՛նչ մեծ բարեբախտություն, որ գտնվեց «Հացին երգը»:

1919 թվականի մարտի 27-ին Պոլսից Անկարայի ճամփով գնացի Այաշ: Գյուղաքաղաքը գրավված էր իտալացիների կողմից: Առավոտյան գնացի այն շենքը, ուր բնակվել էին աքսորականները: Պատերն ամբողջովին ծածկված էին մեր անմահ նահատակների գրություններով: Հորս ձեռքով գրված էր.

«Այո, վստահ եմ, որ մենք սպանվելու ենք. սակայն այս պատերազմի վախճանը հայտնի է. թուրքը շատ բան պիտի կորցնի, հայ ազգը չի մեռնելու. 1915, օգոստոս 14, Այաշ»:



## ԿՈՄԻՏԱՍ

Ի՞նչ հմայիչ և ոգեկոչող անուն.  
Հայ ազգի նոր Նարեկացին:

Նրան ճանաչել եմ 1911 թվին,  
ամռանը՝ հորս Հասգյուղի Հալըջօղ-  
լու հայկական թաղամասի բնակա-  
րանում, որը Ալթուն Տյուրքի ամի-  
րայի անտառախիտ վիլլան էր, որ-  
տեղ մեծ Վարպետը հյուր էր եկել տասնևհինգ օր:

Երբ առաջին անգամ հանդիպեցի նրան, ինձ վրա մեծ  
տպավորություն գործեցին նրա վառվռուն աչքերը և լու-  
սաշող ճակատը. գեղգեղ ձայնի զողանջն էլ դեռ չի գնում  
ականջներիցս:

Հայրս նրան ճանաչել էր թղթակցություններով՝ 1907  
թվից, երբ Վարպետը իր փառքի օրերն էր ապրում: Գեր-  
ման երաժշտական հրատարակությունների մի հայտնի  
տուն Լայպցիգում հրատարակել էր Կոմիտասի «Հայ գեղ-  
ջուկ երգերը»՝ չորս մեծագիր մամուլներից բաղկացած: Կո-  
միտասն այդ հրաշալի հատորներից նվեր էր ուղարկել հորս:

Ի՞նչ թանկագին հիշատակներով նրանք կապված էին  
իրար հետ...

Կոմիտասը հռչակավոր դաշնակահար էր: 1911 թվին,  
հունվարի կեսին, Լոնդոնում, գրականագետ և մի քանի  
հայտնի մեծ առևտրականների առաջնորդությամբ, Տաճ-  
կահայաստանի կարոտյալներին ի նպաստ տվել է համերգ,  
որին մասնակցել են նաև իր առաջագեմ աշակերտուհի-  
ներից Մարգարիտ Բաբայանը և ուրիշներ: Համերգը տեղի

է ունեցել ավելի քան 3 000 ունկնդիրներ չհերկայութեան, մեծ մասով օտարազգիներ:

1912 թվի աշնանը Հայրս առաջնորդում է Կոմիտասին Թուրքիայի գազաժառանգ պրենս Յուսուֆ Իզզետտին էֆենտու մոտ, որը մեծ Վարպետին ընդունում է բացառիկ պատվով և խնդրում է, որ դաշնամուրի դաս տա իրեն:

Հորս աչքով նշանացի հասկացնելուն վրա, Կոմիտասը սիրով ընդունում է առաջարկը, և գազաժառանգ իշխանը անքակտելի կապերով կապվում է նրա հետ:

Անմոռանալի, հիշատակալի օր է մնում 1913 թվի սեպտեմբերի վերջում, Գրերի գլուտի 1 500 և տպագրութեան 400-ամյակի առիթով կազմակերպված մեծ նվագահանդեսը, որի նախագահութիւնը սիրահոժար ընդունել էր գազաժառանգ իշխանը:

Այդ օրը Կոմիտասը հասել էր իր ապոթեոզին՝ հիացմունքի առարկան լինելով օտարերկրյա դեսպանների, թուրք և հայ պետական պաշտոնատարների և բարձր դասի:

Այդ համերգից վերջ Ազգային իշխանութիւնը թախանձանքով Կոմիտասին հրավիրում է Պոլսո Ղալաթիա թաղամասի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ դարավոր եկեղեցում ամեն հինգշաբթի Ամենափրկչի սեղանին պատարագ մատուցանել, ինչպես նաև նույն եկեղեցիի շրջափակում գտնվող Կեդրոնական վարժարանում հայկական երաժշտութեան դասախոս, և նա անձնվիրաբար, առանց որևէ նյութական ակնկալութեան, ստանձնում է այդ պաշտոնը:

Պոլսում հնավանդ սովորութիւն կար. Ղալաթիայի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ դարավոր եկեղեցում ամեն հինգշաբթի օր պատարագ էր լինում, և Կոմիտասը <մասնակցում էր> իր երգչախմբով, որի մեջ գտնվում էին հայտնի դպրապետներ և քահանա հայրեր: 1914 թվի Մեծ պահլի յոթ շաբաթներին հայկական երգեցողութիւնները՝ Կոմիտասի կողմից պատրաստված, փայլ էին ավելացնում:

Կոմիտասը Պոլսում բնակարան է վարձում նախապես Բերա, Սաքըզ աղաջ, Լալե փողոցում՝ մի պանսիոն-հյու-

րանոց, որը Համադգային օրիորդաց դպրոցի դեմն էր գտնվում: Շատ կարճ ժամանակ մնում է այնտեղ և 1912 թվից սկսած՝ փոխադրվում է Բանկալթի՝ հայ կաթոլիկ համայնքի եկեղեցիի կալվածքներից Սուրբ Հակոբա ազարեթլեի վերջին բնակարանը, որը վարձել էր հայտնի նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Այդ բնակարանը համարյա թե եղել է ուխտատեղի հայ և օտար մտավորականության: Այնտեղ այցելության էին գալիս հայ և օտարազգի երաժշտագետներ, արևելահայ մեծ վարպետը՝ Ավետիք Իսահակյանը, որը համարյա թե չէ՛ր բաժանվում Կոմիտասից:

1912 թվի մայիսյան մի գեղածիծաղ առավոտ հայրս Կոմիտասին և մեր մեծանուն վարպետին՝ Ավետիք Իսահակյանին, հրավիրում է Պոլսի ասիական եզերքի գյուղերից Բեյդոզում, Աբրահամ փաշա Երամյան (Գարաբեհյայի) անտառում ճաշակելու թրքական համբավավոր փաչան՝ պատրաստված թուրք անվանի փաչաջի Օսման աղայի կողմից:

Այդ անմոռանալի օրը բնավ մտքիցս չի՛ հեռացվում. այդ ուրախության ժամանակ ես հատվածներ էի արտասանում մեծ վարպետի «Աբու Լալա»ից:

Փաչայի քեֆի ժամանակ հանկարծ մեր խմբի մոտ է գալիս մեկի աղանդին պատկանող, նշանավոր սրնգահար շեյխ հաջի Ռուհին: Նրան մեզ մոտ առաջնորդում է նկարիչ Թերլեմեզյանը, որը մի քանի բոպե առաջ սեղանից բաժանվել էր՝ անտառում մի պտույտ անելու:

Ռուհին վաղուց ծանոթ լինելով վանեցի վարպետին՝ փափագ է հայտնում ծանոթանալ մեծ Կոմիտասի հետ, որի համբավը, որպես մեծ երաժշտագետ, հասել էր մինչև մեկի շեյխերի թեքքեն: Թերլեմեզյանը սիրով ընդառաջել էր շեյխի փափագին և ուղիղ բերում է Կոմիտասի մոտ և ծանոթացնում: Հաջի Ռուհին քեզն քյուլահը գլխին, մոխրագույն պատմուճանը հագին եկավ ամբողջ մարմնով ծռվելով Կոմիտասի առաջ՝ այսպես խոսեց.

— Ո՛վ աստվածային շունչով պարուրված սոխակ, թա-

խանձում եմ քեզ, արժանի արա ինձ՝ քո նվաստ ծառային, մտիկ անել մի քանի պեյիդներ։ Նույնպես ձեզ, Հարգելի Հյուրեր, խնդրում եմ, որ բոլորդ միասին այցելեք Շեհիտ-լիքի մեր մենաստան թեքքեն։

Կոմիտասը խոսք է տալիս խմբով գնալ նրանց մենաստանը։ Շեյխ Հաջի Ռուհին՝ չափից ավելի ուրախացած, էլ չբաժանվեց մեր սեղանից։

Կոմիտասն այդ օրը ապրեցրեց թե՛ մեր խմբին և թե՛ մեզ շրջապատող հետաքրքիրներին իր գեղանույշ ձայնով։

Հաջորդ ուրբաթ, Կոմիտասն իր խմբով՝ նախորդ շաբթրվա փառայի քեֆին մասնակցողների հետ գնում է Շեհիտլիքի մենաստանի թեքքեն։ Շեյխ Ռուհին Կոմիտասին և Հյուրերին ներկայացնում է թեքքեի մեծավորին՝ ութսունն անց մի պատկառելի ծերունու, որը համակրում է նրան։ Պատվասիրում են սուրճով և օշարակով։ Այն օրվանից Կոմիտասը լինում է թեքքեի կուռքը և հաճախ գնում ու մտիկ է անում արաբական և պարսկական երաժշտություն։ Միշտ էլ Կոմիտասի շուրջ հավաքված են լինում թեքքեի մեծ ու փոքր մեկերի շեյխերը։

1913 թվի՝ հայոց գրերի գյուտի առթիվ տեղի ունեցած համերգին ներկա է լինում նաև հայ կաթոլիկ համայնքի գերապայծառը՝ Նազլյան արքեպիսկոպոսը, որը հիացած, հուզմունքից վերացած՝ համերգից վերջ խնդրում է երգահան մեծ Վարպետից, որ մի կիրակի պատվե Սուրբ Հովնան Ոսկեբերան աթոռանիստ եկեղեցին և հայկական երգեցողությամբ կոմիտասյան պատարագ կատարե։ Կոմիտասը չի մերժում։ Անմիջապես Պոլսի հայտնի դպրապետներին և պատրիարքանիստ Մայր եկեղեցիի (Գում Գափու) դպրաց դասը (որը երկու հարյուր տարվա հնություն ունեն) իր հետն ունենալով՝ գնում է Նազլյան գերապայծառի փափագին ընդառաջ։ Պատարագը կատարվում է քառաձայն։ Չմոռանամ ասել, թե Նազլյանը հրավիրել էր օտարերկրյա դեսպանների, ինչպես և բանկերի դիրեկտորներ և առևտրական օտար հաստատությունների պետեր։ Մեկ խոսքով՝ Պոլսի ընտրանին։ Հետևյալ օրն իսկ

Պոլսի ֆրանսերեն “Stamboul” օրաթերթում, առաջին էջի վրա վարպետի պորտրետը փայլում էր, և մի ամբողջ էջ Կոմիտասի ներբողն էր հյուսվում:

Ափսո՛ս, ինչպես որ վարդը շուտ է թառամում, աննման վարպետի կյանքն էլ շուտ թառամեց: 1915 թվի Ապրիլյան եղեռնին թալեաթ – էնվեր գազանացած ոհմակի կարգադրությամբ տանում են Կոմիտասին էլ դեպի Չանդըրը գյուղաքաղաք, որտեղ տարվել էին նույնպես Վարուժանը, Սևակը, Քեչյան Բյուզանդը և բժիշկ – գիտնական Վահրամ Թորգոմյանը:

Չանդըրը մեջ Կոմիտասն ինքզինք սիրցնում է այն օրերի գայմաքամ Նուհ պեյին, որը հարգում է Կոմիտասին և չի մերժում նրա խնդրանքը՝ իր աքսորվելը տեղեկագրել գահաժառանգ իշխանին: Երբ Յուսուֆ Իզզետտին էֆենդին այս ցավալի լուրն իմանում է, բորբոքված՝ անմիջապես գնում է Չանաք զալա (Դարդանելի նեղուց), պատերազմի թատերաբեմ հանդիսացող Արը Բուռնու՛ ուղղակի էնվեր փաշային, որի հետ ունենում է բանավեճ, մինչև իսկ գահաժառանգ իշխանը՝ հուզված, էնվերի երեսին մի ապտակ է իջեցնում:

Անմիջապես գահաժառանգ իշխանի հրամանով աքսորից հետ են վերադարձնում Կոմիտասին. նրա հետ որպես «ոչ վնասարար» համարվող բժշկապետ Վահրամ Թորգոմյանը և «Բյուզանդիոն» օրաթերթի տեր Բյուզանդ Քեչյանն էլ ներման են արժանանում...

Կոմիտասի դեպի մահը գնալը և Չանդըրը ու մնալը, Հայկական եղերերգությունը և մեր մտավորականությունը ջնջվելը նրա հոգեկան ջրղերի վրա մեծ ազդեցություն են ունենում:

1915 թվի օգոստոսի 1-ին, մի անիծյալ գիշեր, հոգեկան ծանր տագնապների է ենթարկվում մեծ վարպետը: Կեսգիշերվանից սկսած մինչև արշալույս լսվում է հարևաններից նրա բղավելը և ոտնահարելը տախտակամածին, վերջում՝ նրա բարձրաձայն լաց լինելը:

Լուրը հասցնում են Կոմիտասի մտերիմ բժիշկ Թոր-

գոմյանին, որը իսկույն գալիս է, նախնական դարմաններ անում: Նույն օրը այցելության է գալիս Բյուզանդ Քեչյանը: Նրանք երեքով իրար անվանում էին «Գողգոթա բարձրացող ընկերներ»:

Նոպաները հաջորդում են իրար, վերջապես տարաբախտ Կոմիտասին ստիպված փոխադրում են Պոլիս, Շիշլի եվրոպական թաղամասում Օպիտալ դը լա պե՝ Ֆրանսիական Հիվանդանոցի հոգեբուժության հատկացված մասնավոր հարկաբաժին: Նրա սնարից չի բաժանվում խնամատար բժիշկ Վահրամ Թորգոմյանը, որն իր պարտականությունը խղճով և պատվով է կատարել:

Կոմիտասը Ֆրանսիացի հիվանդապահ քույրերի ջերմ գուրգուրանքին արժանի է լինում: Նրա մոտ ով որ գնում է մխիթարելու, նա հանգերգի նման ասում էր (թուրքերեն). «Բնավ չեմ ճանաչում ձեզ և ճանաչել էլ չեմ ուզում»:

1916 թվի նոր տարվա երեկոյան, ինձ հետ ունենալով իր երգչախմբի աշակերտներից Հակոբ Սարգիսյանին, գնացինք Կոմիտասի մոտ: Հազիվ թե ներս էինք մտել, նա երկու ձեռքերի մեջ առած գլուխը՝ խոկում էր...

«Աստված օգնական, հայր սուրբ պատվական» ասելս գիտեմ: Նա հանկարծ ծառացավ, սպառնական նայեց երկուսիս և. «Տո, կորսվեք իմ դեմից, ես չեմ ճանաչում ձեզ»: Նորից խոսում եմ. «Սիրելի վարդապետ, Բյուրատն եմ, Հիշիր Իսահակյանին, նկարիչ Փանոսին, Բեյգոզ գլուղի անմոռանալի փաջան, մեկի շեյխ Ռուհին... ես Սմբատի զավակն եմ, Սարգիսյանն էլ՝ ձեր երգչախմբի սաներից...»

Հազիվ թե խոսքս ավարտել էի, հանկարծ սկսեց «Տեր ողորմյան» երգել և մեզ երկուսիս լացացրեց: Հետո, մի քանի րոպե անց. «Հա՛, դու ո՞ղջ ես մնացել... ու՞ր տարան մեր Սմբատին, ասա ինձ...»

— Հայրս անգերեզման կորավ Այաշում, շատ շատերի հետ. ես էլ կարողացա թաքնվել ինն ամիս, Հիմի աղատ եմ...

— Հը՛... գիտե՞ս, ես էլ եմ գնացել այդ ճամփեն, բայց

Հայի աստվածը ինձ ետ ուղարկեց: Բայց... ես ինձ այս օրերին լավ չեմ գգում...

Նրան հրամցրինք հետներս բերած ծրարից Հաջի պե-  
քիրի համբավովոր րահաթ լոխումից, և ասացի.

— Հայր սուրբ, սա մեր նոր տարվա արնոտ կաղանդն է:

Մեկ էլ հանկարծ տեղիցը վեր ցատկեց կատաղած. «Տո,  
կորավեք...»

Հաջիվ թե երկուսով դուրս նետվեցինք սենյակից, ես  
հիվանդանոցի երկար նրբանցքում չկարողացա լացս  
դսպել. ինձ հաջորդեց ընկերոջս լացը: Այս վիճակումն  
էինք, երբ մի քույր ինձ հարցրեց. թե ինչու<sup>՞</sup> ենք լաց  
լինում: Ասացի, թե մեր տաղանդավոր Կոմիտասի առող-  
ջությունը փլչել է:

Զինադադարից մի ժամանակ վերջ, Կոմիտասին ան-  
հրաժեշտ նկատվեց փոխադրել Փարիզ, արդեն նրա մտե-  
րիմ և խնամող բժիշկը՝ Թորգոմյանը, խոհեմություն  
համարել էր Թուրքիայից Փարիզ մեկնել, որտեղ էր նույն-  
պես նրա մտերիմ ծանոթ հայազգի գիտնական պրոֆեսոր  
Քոլոլյանը:

Կոմիտասը երկար տարիներ մնաց Փարիզում՝ առաջ-  
նակարդ հոգեբուժական մի հիվանդանոցում, մինչև մահը՝  
1935 թվականը...

Հաճախ եմ դիտել, թե եթե մի քիչ հուզմունք ունե-  
նար, կամ ջղային նույն դար նրա վրա, բարկությունից  
(չատ դյուրաբորբոք էր) անմիջապես խածոտում էր  
պրկունքները, մինչև կապուտնալ:

Ո՛հ, ամոթ թող չլինի, երբ հայտնում եմ, թե Կոմիտա-  
սը և երգչուհի Թորոսյանն իրար հանդեպ բարձր պաշ-  
տում ունեին, որն անվանում էր պղատոնական սեր:  
Կոմիտասը, լինելով սրբակյաց և խստակրոն, նախապա-  
շարված կրոնով, որը նրա պաշտամունքն է եղել, սրբա-  
պղծություն չէր անի սքեմի դեմ, որովհետև նվիրում կար  
նրա հոգու մեջ, և մինչև մահ այդպես էլ մնում է...

1919 թ. մարտի 8, Կ. Պոլիս


ԱՅՈՒՆ ԿՆՅՈՒՆ  
Մ. Վ. ԿՆՅՈՒՆ  
Կ. Մ. ԿՆՅՈՒՆ

# ՍԱՐՍՈՒՌՆԵՐ

ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ

ԵՐԳԵՑ

ՊԱՐՈՒԺԱՆ ԴԱՆԻԷԼ



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1906

Դանիել Վարուժանի ընծայականը Վ. Բյուրատին

## ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ



...Երբ ես մտա Մուրադ-Ռափայելյան գիմնազիոնը, Դանիելն արդեն ավագ կարգումն էր, իսկ ես, Պերճ Պռոշյանի որդին՝ էաչին, և Սողոմյան Հովակիմի որդին՝ Երեքով, անբաժան ընկերներ էինք կրտսեր կարգում: Նույնպես այնտեղ էր գտնվում Վահրամ Փափազյանը...

... Քուրմի էր նմանվում Վարուժանը, երբ մտնում էր իր խուցը՝ ընդունելու աստվածների հաղորդությունը իր սրտի մեջ: Երկյուղած, բազկատարած՝ նա սպասում էր, որ գա, իր հոգու մեջ թափվի աստվածների ժպիտը: Նա նմանվում էր մի արձանագործի, որը իր աշխատանոցն է մտնում՝ կյանք և շունչ տալու մարմարե կոշտ զանգվածին, այնտեղ էր անցկացնում տքնություն ցերեկներն ու գիշերները՝ մարմարից ծնեցնելու իր երազը...

... 1915 թվի մարտ ամսումն էր. մի օր իմ թանկագին ընկերոջ՝ Վարուժանի տուն էի գնացել այցելության. կինը՝ Արաքսին, ասաց ինձ, թե աշխատասենյակումն է: Գնացի մոտը. գրասեղանի վրա ցան ու ցիր թղթեր էին թափվել. կերտել, վերջացրել էր իր վերջին ստեղծագործության՝ «Հացին երգի» վերջին՝ երեսուներորդ ոտանավոր «Աղորիքը». մարտ ամսի 15-ին էր:

Թախանձանքով խնդրում եմ, որ ինձ հիշատակ տրվի

այդ ձեռագրերի սեագրությունները<sup>\*</sup>. Հի մերժում ինձ [...]:

«Որբուհին» ոտանավորը Վարուժանը գրել է 1905 թվի սեպտեմբերի 27-ին, Մուրադ-Ռափայելյան վարժարանի հովոյը՝ Ազոլոյում (Հյուսիսային Իտալիա) և ինձ էր նվիրել, երբ նա գնում էր Կանտի Համալսարանը սովորելու: Մինչև 1919 թիվն անտիպ մնում էր ինձ մոտ, և երբ Թեոդիկը հրատարակում է «Յուշարձան Ապրիլ տասնեմեկի» հատորը՝ նվիրված 1915 թվի Ապրիլյան եղեռնի մտավորականության, սիրով տրամագրել էի «Որբուհին»...

Սեբաստիայում Վարուժանը գժի նման սիրահարվում է իր աշակերտուհիներից Արաքսի անունով աղջկան, որի ծնողը, լինելով Հարուստ, չի՝ ուզում իր աղջկան հարսնության տալ մի վարժապետի...

Սակայն աղջկա համառ կեցվածքի, անդրդվելի կամքի առաջ ծնողը ստիպված է լինում իր աղջիկը կնության տալ Վարուժանին:

1912 թվին Վարուժանը պաշտոնի է կոչվում Մխիթարյան Հայրերի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ուսումնարանում՝ որպես մեծավորի (գիրեկտոր) տեղակալ և Հայերեն լեզվի-գրականության դասատու, մինչև իր գեպի մահ գնալը՝ 1915 թվի Ապրիլյան եղեռնը:

Գրական ասուլիսներ կազմակերպվում են. Վարուժանն ապրում է իր փառքի օրերը:

Որպես Վենետիկի Մխիթարյան Հայրերի սան՝ բնավ չի պատկանել այս կամ այն քաղաքական պարտիաներից մեկին...

1914 թվի սկզբին Վարուժանը գործակցում է դաշնակ գրող Ճոլոյանի հետ (կեղծանունը՝ Հ. Ճ. Սիրունի). միասին հրատարակում են գեղարվեստական մի ալմանախ-տարեգիրք՝ «Նավասարդը», որի չորս հազար օրինակները

---

\* Վարուժանի այդ ձեռագիր սեագրությունների բնագիրը Վենետիկ եմ ուղարկել՝ Հայր Սիմոն Երեմյանին, և պահվում է վանքի մատենադարանում՝ որպես սրբազան նշխար նահատակ բանաստեղծից:

տասնևհինգ օրվա մեջ արդեն սպառել էին:

Սակայն Առաջին Համաշխարհային պատերազմը ամեն բան տակն ու վրա է անում: 1915 թվի ապրիլի 10/11 (23–24) լուսանալուն երեք ժամ մնացած Վարուժանին էլ տանում են գիշերազգեստով. կեսօրվա մոտ հաղիվ հագուստները հասցնում են հետևիցը:

Տանում են ուղիղ Չանդըրը գյուղաքաղաքը, որտեղ գտնվում էին նույնպես Կոմիտասը, բժշկապետ Թորգոմյանը, Տիրան Քելեկյանը, Ռ. Սևակը, կազմարար Հրանդ Մաղադաճյանը, Տիրան Չեղկուրյանը և շա՛տ շատեր՝ երկու հարյուրից ավելի մտավորականություն: Չանդըրի աքսորվածները համարվում էին թեթև հանցապարտներ, իսկ Այաշ գյուղաքաղաքի Սարի զըշլա տարվածները (84 անձ), մեծ մասով քաղաքական գործիչներ, մեղադրված էին ծանր հանցանքով: Այաշ գնացողներից, բացի երեք հոգուց, 81-ը խողխողված են տեղի գազանացած գյուղացիների ձեռքով, թալանված և սպանված քարի, փայտի և սրի հարվածներով, դիակներն էլ մերկ գցել են Գանլը գերե ասված ձորը, անգերեզման, վայրի գազանների կեր:

Վարուժանը, Ռուբեն Սևակը և Մաղադաճյանը շա՛տ մոտ էին իրար. կազմել էին մի *triumvir* (եռապետություն):

Չարաբաստիկ օր է լինում 1915 թվի 13/16 օգոստոսը, Պոլսից եկած բարձրագույն հրամանով կառք են նստեցնում և տանում են Վարուժանին, Սևակին և Մաղադաճյանին՝ որպես թե դատելու:

Երբ կառք էին նստելու, մի բոսքե Վարուժանը մատիտով զրում է իր հոգեհատոր կնոջ՝ Արաքսին. «Տանում են մեզ դատելու. լա՛վ խնամիր երկու բալիկներին և մի՛ սպանիր հիշատակս»: Եվ երկտողը հանձնում է Բյուզանդ Պողաճյանին, որը ներման արժանացած լինելով՝ նույն օրն իսկ մեկնելու էր Պոլիս: Պողաճյանը սույն երկտողը բերել հանձնել է Վարուժանի կնոջը:

Կառքի մեջ չափից ավելի ընկճված են լինում Վարուժանը և Սևակը. Մաղադաճյանն, ընդհակառակը, միշտ

էլ ուրախ-զվարթ էր ցույց տալիս ինքզինք՝ հանաքներ անելով, նրանց տրամուլթյունը ցրելու համար:

Հազիվ թե կառքը Չանդըրըից երեք ժամվա ճամփա էր կտրել և հասել Թյունեյ գյուղի ձորը, հանկարծ կառքը կեցնում են հրեշ հրոսակներ, իհարկե նախապես կազմակերպված, մեկ-մեկ մորթոտում են որպես ոչխարի: Մահառիթ լուրը երեկոյան հասնում է Չանդըրը և բոլորին սահմուկեցնում է...

Հանգիստ նահատակ ընկերոջս հիշատակին:



## ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՊ

Զոհրապի մասին շատ բան գրվել և դեռ գրվելու է: Իմ հուշերն առավելապես լինելու են նրա սլառլամեննոական կյանքի և մանավանդ նրա եղերական մահվան մասին:

Առաջնակարգ փաստաբան, Կաճառի պատվական անդամ և հռետոր. նրա համբավը սկսվել է 1886 թվից, արևմտահայ գրականության հին սերունդի առաջնորդ. գրել է դպրոցական հասակից:

Սիրում էր փափուկ սեռին, իսկ փողը, որը հոսում էր ջրի նման, արժեք չունեւր նրա մոտ. նա չափից ավելի շուայլ կյանք էր վարում:

«Միացյալ ընկերություն հայոց» և «Դպրոցասեր տիկնանց» պարահանդեսներին առասպելական մսխումներ էր անում՝ գլել-անցնելով օտար դեսպանների, բանկերի, դիրեկտորների և պալատական վեդիրների, մինիստրների ծախսերը...

Նրա գրական գլուխգործոցն է համարվում «Անհետացած սերունդ մը» վիպակը, որը համարյա թե նրա կյանքն իսկ էր:

Հայ մամուլում շատ է երևացել:

Նրա Լաջիվերդ խանի գրասենյակը նմանվում էր թերթի խմբագրատան. այնտեղ էին գալիս հին սերունդի պատկանող գրողներ...

Ազատություն(?)՝ անիծյալ հյուրիյեթի վաղորդայնին

Զոհրապի մարմաջն է լինում պառլամենտի անդամ լինել և մանավանդ՝ Կ. Պոլսի մեպուս: Խորհրդակցում է հորս հետ, որը նրա շատ սիրելին էր և ծանոթ 1885 թվից:

Հայրս ասում է.

— Սիրելի Զոհրապ, դիտում ես, չէ՞. հայ ազգը բաժանվել է երկու հատվածների. դու պետք է հենվես մի որոշ կողմ, մինչև որ ընտրվես մեպուս:

Հորս խորհուրդը դյուր է գալիս, և Զոհրապը դիմում է դաշնակների լիդեր արևելահայ խաչատուր Մալումյանին (կեղծանուն՝ է. Ակնունի), որը սիրով ընդառաջում է Զոհրապին՝ պայման դնելով, որ նա՝ որպես հռետոր, ուժ տա դաշնակ պլատֆորմին, քանի որ նրանք քաղաքական գետնի վրա կապված էին Իթիֆհատ թերաքքը պարտիային, որը պետական ղեկարտամենտը կառավարող ուժն էր: Առաժի ասածի նման Զոհրապը մտածում է. «Մինչև կամուրջն անցնելը պետք է սատանային խնկարկել»: Այդպես էլ մինչև մեպուս ընտրվելը դաշնակ բեմերից ճառախոսում է և գովաբանում նրանց: Հայ ազգն ու մտավորականությունը մի բույն մտածում է և կարծում, թե Զոհրապ թեքվել է դաշնակների և նրանց սիրելի դործակից Իթիֆհատ թերաքքը անիճյալ պարտիայի կողմ: Ծիչոտ չէ՛ր այդ. Զոհրապ մեպուս ընտրվելուց վերջ (Պոլսից) պառլամենտում մինչև վերջ ընդգլիմադիրի դերը է բռնել:

Սահմանադրություն հռչակումից հազիվ թե ինն ամիս էր անցել, որ սուլթան Համիդը փորձ է անում տապալել Իթիֆհատին և ազատվել նրա ճիրաններից:

Այդ ժամանակներն արգեն Պալատ էր մտնում քուրդ հրապարակադիր և ընդգլիմադիր խմբակի՝ Իթիլաֆի լիդեր Մեկանդագե Բիֆաթ պեյը, որը Զոհրապի մտերիմներից էր: Հայտնում է նրան, թե «մոտ օրերս պատահելու են ծանրակշիռ գեպքեր. Զոհրապ, խնդրում եմ խոսեք հայ և հույն մեպուսներին, որ մնան դիտողի դիրքում»:

1909 թվի մարտ ամսի 31-ին ըմբոստությունը պայթում է: Սուլթան Համիդի անձնապահ գուլնդը խուժում

է պառլամենտ: Երկու օր առաջ Իթթիհատն օրը ցերեկով սպանել էր կամուրջի վրա ընդդիմադիրների «Սերբեսդի» թերթի խմբագիր մի երիտասարդ քուրդ մտավորականի: Այս սպանության դրդապատճառն էր «Թանինի» խմբագրապետ հայտնի Հուսեին Ճահիտ պեյը:

Զոհի թաղումը լինում է աննախընթաց, սուլթան Համիդն իրատես է անում, որ զոհին թաղեն սուլթանների գերեզմանոցում: Պոլիսը ոտքի էր. հարյուրհազարավոր ժողովուրդ մասնակցում է թաղման:

Երկու օր վերջ զոհի թաղումից, հանկարծ պառլամենտ խուժում է Համիդի զինվորների խումբը: Պառլամենտը վերածվում է սպանդանոցի: Իթթիհատն էլ իմացել էր վաղուց և պատրաստ էր: Առաջին զոհերն են լինում երկու սուրիացի ավատապետեր՝ Շեյխ Ալի Ռասլան և Շեքիպ Արսլան Միտհատ պեյերը՝ արաբ հանդուգն ցեղապետեր: Սպանվեցին նույնպես մոտ երկու տասնյակից ավելի մեպուսներ, մեծ մասով փաթթոցավորներ:

Այդ խաժամուժի ժամանակ ես գտնվում էի օտար թերթերի թղթակիցների օթյակում, ֆրանսիական “Matin” («Առավոտ») թերթի թղթակից Լյուդովիկ Նոդոյի մոտ՝ որպես նրա թարգմանը: Հանկարծ Զոհրապը մոտենում է մեզ և ֆրանսիացու գլխարկը թռցնում, առնելն ու հրեշ թալեաթ պեյի (այն ժամանակ՝ ներքին գործերի մինիստր) գլուխն է անցկացնում և անցնում է խուժանի միջից: Ես ու Նոդոն հետևում էինք նրան: Հանկարծ մեր դեմ ցցվեց մի թուրք զինվոր՝ մավզեր հրացանը ձեռին: Զոհրապն ինքզինքը չի կորցնում և ասում է.

— Ես իթիլաֆական իրավաբան Զոհրապն եմ, իսկ պարոնը՝ հեռ. Բաբենկեր, գերման թղթակից:

Զինվորը մի վայրկյան մտածելուց վերջ.

— Ես քեզ ճանաչում եմ, Զոհրապ էֆենդի, դու մեզնից ես, անցե՛ք...

Զոհրապը Թալեաթին առաջնորդում է իր դոց կառքը, ես և Լյուդովիկ Նոդոն էլ «Բերա պալատ» հյուրանոցի կառքն ենք նետվում, որն սպասում էր ֆրանսիացի

խմբագրին: Այսպիսով ազատվում ենք: Զոհրապը թա-  
լեաթ պեյին տանում է իր բնակած աբարտմանի հինգե-  
րորդ հարկը՝ Բերա, Այաս փաշա, գերման դեսպանատնից  
մի քիչ վեր՝ Ազարյան աբարտմանը, որտեղ նրան պահում  
է ութ օր, մինչև Իթթիհատի ազատարար բանակի գալը  
Սելանիկ քաղաքից՝ Մահմուտ Շեքեթ փաշայի գլխավորու-  
թյամբ:

Մենք էլ հասնում ենք «Բերա պալատ» հյուրանոց, որ-  
տեղ իջնում է Նոդոն՝ հատկանշական խոսքն ասելով.  
«Ի՛նչ հրեշային տեսարան էր, լավ պրծանք...»

Ես կառքից վար չեմ իջնում և գնում եմ ուղիղ հորս  
մոտ, որ այն ժամանակ բնակվում էր Բերա, Բանկալթի,  
Մերջիմեքյան հայի աբարտմանի վեցերորդ հարկի 12-րդ  
համարում...

\* \* \*

Զոհրապը չափից ավելի սեր և հարգանք էր տածում  
թուրք տկար սեռին... Մի անգամ, 1908 թվի վերջերին,  
մի հոյակապ ճառ է արտասանում թուրք կանանց հարե-  
մական կյանքի և նրանց դժբախտությունների վրա: Մեջ-  
բերումներ է անում Պիեռ Լուտի՝ ֆրանսիացի թրքասեր  
հեղինակի «Հիասթափվածներ» (“Les désenchantées”) համ-  
բավավոր վեպից. կո՛չ է անում. «Պետք է ազատագրել  
կիներին, ինչո՞վ են պակաս տղամարդկանցից. նրանց  
պետք է տալ համահավասար իրավունք. փրկե՛լ է պետք  
հարեմի ստրկացնող կյանքից, որը ուրիշ բան չէ՛, եթե ոչ՝  
դժոխք...»

Նույն օրն իսկ «Թուրք կանանց լիգան» մի գեղեցիկ  
ծաղկեփունջ նվեր է տալիս Զոհրապին:

Այսպես, Զոհրապը շահել էր թե՛ թուրք կանանց սիր-  
տը և թե՛ համակրանքը. պաշտում էին նրան...

Զոհրապը մեծ սեր և հակում ուներ գրելու կանանց վրա, չա՛տ էր սիրում Marcel Prévost (Մարսել Պրևոստ) ֆրանսիացի հեղինակին, որը կնոջ հոգեբանությունը լա՛վ էր ուսումնասիրել և կանանց վրա գրել է քսան հատորներ: Զոհրապը 1892–1893 թվերին Հրանտ Ասատուրի և մի քանիների հետ ձեռք է առնում «Մասիս» ծերացած թերթին. այդ շրջանը լինում է Զոհրապի ոսկեդարը. հրատարակվում են «Լուռ ցավեր», «Կյանքն ինչպես որ է», «Խղճմտանքի ձայներ» նորավեպերի շարքերը, որոնք Ազատության շրջանին՝ 1910–1912 թվերին, առանձին հատորներով էլ են լույս տեսնում:

Սահմանադրությունից մեկ տարի առաջ արգելվում է Զոհրապին փաստաբանություն անել: Քաշվում է հրապարակից և իր երկու զավակների կրթության համար գնում է Փարիզ, վերջում՝ Շվեյցարիա և այնտեղ մնում մինչև 1908 թվի անիծյալ սահմանադրությունը, որն աղետների մի շարք դռներ բաց արեց հայ ազգի գլխին:

Անմոռանալի է մնալու Զոհրապի ատենաբանությունը Բերա, Թաքսիմի պարտեզում, հայ և թուրք նահատակների սգահանդեսին՝ 1908 թվի օգոստոս ամսի առաջին կիրակին:

1909 թվի մարտի 31-ի դեպքերից առաջանում է առաջին սահմանադրական եղեռնը՝ Ադանայի ջարդը, որի կազմակերպիչը նույն ինքը Իթթիհատի պարտիան էր, Զոհրապը մեպուսանում ծառանում է և դիմակները վար է առնում Իթթիհատի շեֆերի, որոնց մեծ մասը նրա եղբայրներն էին (Զոհրապը պատկանում էր մասոնական խմբակին):

Որպես ատենաբան և հրապարակագիր՝ հոյակապ վարպետը տոգորված է եղել մի՛ նկարագրով. նա չգիտեր ընկճվել, ընկրկել: Ծառանում էր պայմանադրականության և ծոված, նեխած խորհուրդների դեմ, նշտարի անողոք հարվածներ էր տալիս ընկերային փտախտին և որպես

նոր, ինքնատիպ գաղափարների ջատագով՝ ամեն տեղ էլ նրա հզոր ձայնը եղել է տիրապետող...

Ինձ նույնպես վիճակվեց հրատարակել 1924 թվին նրա մի անտիպ ձեռագիր վիպակը՝ «Փոթորիկը»՝ մի գլուխգործոց:

\* \* \*

1913 թվի աշնանը մեպուսանում նորից արձարծվում է Հայկական հարցը Չարչանճաքի հողային բռնազրավումների առթիվ, քանի որ տեղվույն թուրք ավատապետները բռնի զրավում էին հայ գյուղացու մի՛ ափ հողն իսկ...

Զոհրապն իջնում է հրապարակ և սաստում է շեֆերին. «Վե՛րջ տվեք այս քաղաքականության, այլևս բավարար է»:

Իթթիհատի պարտիան պնդում էր, թե Չարչանճաքի հողային հարց գոյությունն չունի, և թե դեպքը տեղական բնույթ ունեցող ճղճիմ բան է, սակայն Զոհրապը մե՛կ շունչով լրիվ երեք ժամ տևող մի ատենաբանությամբ սահմուկեցնում է իր եղբայր(?) մասոն լիդերներին և հաստատել է տալիս, թե իրապես զավթիչ թուրք մյութեկալիբենները և քուրդ ավատապետները զրավել են հայ գյուղացու պատկանած հողերը...

Համաշխարհային առաջին պատերազմն սկսվելուց քիչ առաջ՝ 1914 թվի սկզբին, սուր հանգամանք էր ստացել նորից Հայկական հարցը՝ շնորհիվ ուսս մեծ դեսպան պարոն դը Կիոսի ազդու միջամտության: Արևմտյան մեծ պետություններն ստիպվել էին Արևելյան նահանգները բաժանել երկու շրջանների՝ երկու մարզպաններով:

Առաջինը մնալու էր Կարին (Էրզրում), երկրորդն էլ՝ Վան՝ մոտից հսկելու բարենորոգումների կիրառման, և այս առիթով էր, որ տաս հայ մեպուսների և թուրք վարիչների միջև սկսվում է սուր բանավեճ պառլամենտում:

Զոհրապի ելույթը վատ ազդեցություն է ունենում մանավանդ Թալեաթի վրա, որը՝ վրեժխնդիր մի հրեշ, այդ

օրից ծուռ աչքով է դիտում և մի օր ասում է Ջոհրապին.

— Ջոհրա՛պ էֆենդի, բնավ չեմ մոռանալու ձեր ելույթը, կտեսնվենք...

Համաշխարհային առաջին պատերազմն իր սուր թափի մեջ էր. Համաձայնական <պետությունները> (Ռուսիա, Անգլիա և Ֆրանսիա) պատերազմ էին հայտարարել Թուրքիայի դեմ և ռմբակոծում էին Դարդանեղի նեղուցը 1915 մարտ 5/18-ին: Ապրիլյան եղեռնը գործադրվել էր. հայության սրտերը արյունով էր լցրած. մեկի հայրը, ամուսինը կամ եղբայրը անդարձ գնացել էին...

1915 թվի մայիս ամսի մեկին՝ կիրակի, դարնանային մի գեղեցիկ առավոտ էր: Գնացի Ջոհրապի տունը... որն այն ժամանակ բնակվում էր Բերա՝ Համարյա թե շքեղորեն կահավորված մի հարկաբաժնում:

Դուռը բաց արեց Ջոհրապի կինը և ինձ ընդունեց հուզմունքով, լաց լինելիս, ասելով. «Տարա՛ն, տարա՛ն, բոլորին էլ, հայությունը մեռել է. ափսո՛ս, ի՛նչ օրերի մեջ ենք ապրում»:

Երբ մի քիչ հանգստացավ, ասացի.

— Տիկին Ջոհրապ, հայությունը չի՛ մեռնի, սակայն հանցապարտը մենք ենք, մե՛նք, որ բնավ մեր մտքից չե՛նք անցկացրել սրանց (իթթիհատականների) ինչ տեսակի ապրանք լինելը: Տեսա՞ք, մինչև իսկ իրենց սիրելի և եղբայր դաշնակներին էլ չեն խնայել:

Մեր խոսակցության ժամանակ հանկարծ վարը լավեց կառքի ձայն: Լուսամուտից վար եմ նայում. ճանաչեցի Ջոհրապի կառքի սև ձիերին: Շտապ աստիճաններից վար եմ իջնում և դիմավորում եմ Ջոհրապին, որը դեռ չէր հասել չինքի դռանը: Բարևում եմ և թևն եմ մտնում: Լուռ բարձրանում ենք վերև:

— Դու էլ բարի ես եկել, անցի՛ր իմ կաբինետը. հիմի կգամ, — ասաց և անցավ խոհանոց, լվացվեց: Մոտոս նստեց ճոճան աթոռին և սկսեց օրորվել...

— Վաղե՛ն (ինձ այդպես էր կոչում փաղաքշական), քիչ առաջ պառլամենտի նախագահ Ահմետ Ռիզա պեյի և

սատրաղամ Թալեաթ փաշայի հետն էի՝ Կ. Պոլիս կլուբում (Cercle de Constantinople): Ես և Թալեաթը բանավեճի ենք մտնում: Նա հայերիս դավաճան անվանեց: Ես էլ. «Փաշա՛, սխալվում եք, հայերս դավաճան չենք, և ես ձեր այս խոսքի համար մեպուսանում հաշիվ եմ պահանջելու ձեզնից»: Ահմետ Ռիդա պեյը մի տխուր հայացք դցեց իմ երեսին, իսկ Թալեաթ փաշան շնական քմծիծաղը երեսին ասաց. «Զոհրա՛պ, բարեկամս, կտեսնվենք»:

Մի պահ լուռթյունից վերջ շարունակեց Զոհրապը.

— Վաղե՛ն, թյուրիմացության մի ամպ պտույտ է տալիս հայ ազգի գլխին. չգիտենք, թե այս ամպի ոլորտը ի՞նչ աստիճանի մեզ պատելու է. ո՛վ գիտե, թե ինձ էլ չեն տանելու. գուցե վաղն իսկ. հորիզոնը մութ է, մութ...

Հանկարծ միտքս է ընկնում, որ հայրս Այաշից մի բաց նամակ (քարտ) էր ուղարկել՝ թուրքերեն գրված. գրպանիցս հանում եմ՝ ասելով.

— Վարպե՛տ, ներե՛ք ինձ, որ մոռացել էի, երեկ եմ ստացել այս երկտողը:

Գրեթե խեց և մեկ շունչով կարդալուց վերջ ասաց.

— Է՛հ, դեռ ողջ են. երանի թե այս փոթորիկն էլ անցկացնենք... գրիր հորդ և ասա, թե Զոհրապն էլ տկար է...

Սրտներս կոտրած հրաժեշտ առնելով՝ բաժանվում եմ: Այս եղավ իմ վերջին տեսակցությունը. դեռ ականջիս մեջ զնգում են վարպետի վերջին խոսքերը. «Է՛հ, դեռ ողջ են...», և աչքես չի հեռանա նրա տրտում դեմքը:

Երկու օր վերջ, 1915 թվի մայիսի 3/16, երեքշաբթի մի չարաբաստիկ օր է լինում. «Դերուսյան» վաճառատան իմ կաբինետում նստած՝ ատաղձի ֆակտուրաներն էի քննարկում, հանկարծ աչքիս հանդիպեց «Ժամանակ» թրքասեր թերթի նույն օրվա համարը. ձեռքս եմ առնում և ահա թե ինչ կարդացի. «Մեպուսանի երեկվա նիստում, ձայների մեծամասնությամբ ջնջվեց մեպուսների անձեռնմխելիության օրենքը»: Այս շատ կարճ հատվածը ցնցեց ինձ, քանի որ դրա մեջ շա՛տ բան կար...

Ութ օր վերջ, մայիսի 10/23-ին, ճիշտ մեկ ամիս վերջ

զանգվածային ձերբակալություններից, առավոտյան ժամը տասն անց քսան ժամը, երբ «Թոքաթլյան» հյուրանոց-սրճարանից հագելով թե դուրս էին գալիս Զոհրապ և Վարդգես Զֆենդիները (Վարդգեսը Կարինի մեպուսն էր), նրանց դեմն է ցցվում հայտնի խուզարկու և քաղաքական բաժնի քննիչներից Սավֆեթ Նուրի պեյը. ծիծղուն դեմքով բարեկեց վերջ երկուսին էլ հրավիրում է հետևել իրեն՝ գնալու Գըսմը սիասի: Զոհրապն ընդգրմանում է և չի ուղում հետևել. առարկում է իր գեպուտատ լինելը: Սավֆեթ պեյը շնական քմծիծաղով ցույց է տալիս ներքին գործերի մինիստր և սատրապամ փաշա Թալեաթի հրամանագիրը, որը հրամայում էր անհապաղ ձերբակալել Զոհրապին և Վարդգեսին:

Վարդգեսը խնդրում, թախանձում է Սավֆեթ պեյից.

— Թույլ տվեք վերջին անգամ գնալ տուն. դու՛ք էլ մեզ հետ. մեկ-մեկ սուրճ առնենք, և փող վերցնեմ տնից:

Սավֆեթ պեյը լինում է անողոր.

— Փողի կարիք չունենք, գնանք:

Եվ ուղիղ տանում է Գըսմը սիասի:

Նույն գիշերն իսկ Հայդար փաշայի գնացքով երկուսին էլ ուղարկում են Հալեպ քաղաք՝ «Բառոն» հյուրանոց, որը պատկանում էր հալեպահայ Օնիկ և Արմեն Մազլումյան եղբայրներին, որոնք Արաբկիրի Անջրդի գյուղից էին:

Մի քանի օր վերջ Զոհրապը հեռագրով դիմում է ծովային մինիստր, եգիպտոսը գրավել ցանկացող, Սյուրիայի 3-րդ զորաբանակի ընդհանուր հրամանատար Մեհմետ Ճեմալ փաշային, որն այն ժամանակ գտնվում էր Սյուրիայի մայրաքաղաք Դամասկոսում: Ահա՛ այն հեռագրի բառացի թարգմանությունը. «Սիրելի՛ եղբայր\*, չգիտեմ ինչի՞ վերագրել մեր այս դժբախտ վիճակը. ուժս էլ սպա-

---

\* Իթթիհատի պարտիայի բոլոր շեֆերը մասոն էին: Զոհրապն էլ էր պատկանում մասոնական օթյակին, և իրար անվանում էին «եղբայր»)

ռել է. Հափից ավելի տկար եմ զգում ինքդինքս հուզմունքից. ժամից ժամ սպասում եմ Ձերդ բարձրություն հրամանին:

Ստորագրություն՝ Զոհրապ»

Հետեյալ առավոտյան իսկ ստացվում է պատասխանը. «Սիրելի՛ եղբայր, բնավ մտահոգ մի՛ լինի, քեյֆիդ նայիր, կարող ես հյուրանոցից դուրս էլ ման գալ: Գնա՛ պտույտ արա Սեբիլ և ձենկիյե պարտեզները. մի քանի օր վերջ ես էլ Շամից Հալեպ եմ գալու:

Ստորագրություն՝ Մեհմետ Ճեմալ»\*

Զոհրապն այս հեռագիր պատասխանի վրա մի քիչ շունչ է առնում: Զոհրապը և Վարդգեսը կարծում են, թե իթթիհատի շեֆերն իրենց՝ որպես քաղաքական աքսորյալների, պատերազմի մինչև լրանալը վար են դնելու Հալեպում:

Վեց օր վերջ իր շքախումբով Դամասկոսից Հալեպ է ժամանում Ճեմալ փաշան և ողջագուրվում է Զոհրապի հետ որպես եղբայր՝ «սեկյուլյու քարտեշիմ» անվանելով նրան:

Սիրալիր տեսակցություններ, օղիի ուրախության սեղաններ, պտույտներ սարքվում են: Հալեպի նահանգապետ Հիքմեթ պեյր, քաղաքային և պետական պաշտոնատարներ, Հալեպ քաղաքի թուրք երեւելի ընտանիքներ, որոնց մեջ է լինում նույնպես Ուրֆա քաղաքի մեպուս, քուրդ ավատապետ և Զոհրապի շա՛տ սիրելի, մտերիմ ընկեր Մահմուտ Նետիմ պեկը, որը մի բացառիկ տեսակ-

---

\* Այս հեռագրերի սևագրությունները, ինչպես նաև Ճեմալ փաշայից ստացված հեռագրերը ես տեսել եմ Հալեպում՝ ճարտարագետ-երկրաչափ Ֆիլիպ Արփիարյանի մոտ. այս անձը հղբորորդին էր գրականագետ և քաղաքական գործիչ Արփիար Արփիարյանի, որը 1908 թվի փետրվարի 12-ին սպանվեց հղբայրասպան գնդակից Արզույան Վահեի քիլբի կողմից:

ցությունն է ունենում ձեմալ փաշայի հետ՝ խնդրելով խնայել Զոհրապին. սակայն ձեմալ փաշան ասում է. «Վճռված է. հրամանը թալեաթ և էնվեր փաշաներից է. վճռել են անպայման ազատվել նրանից»:

Նետիմ պեկը թախանձանքով խնդրում է ձեմալ փաշային՝ ասելով. «Գոնե խնայեք Զոհրապին. չէ՞ որ նա մեզ հետ եղբայր է»: ձեմալ փաշան մի քիչ խորհելուց վերջ ասում է.

— Լա՛վ, մեկ միջոց կա. թե որ ուզում ես բարիք անել, սրանց տար քո կալվածք և պահիր նրանց, մինչև անցնի այս փոթորիկը:

Մահմուտ Նետիմ պեկը, իր՝ ձեմալ փաշայի հետ ունեցած տեսակցությունը հաղորդում է Զոհրապին և Վարդգեսին և երբ նրանց գունաթափվելը տեսնում է, ասում է.

— Անհոգ եղե՛ք, ղոնախս ձե՛րն է. դուք ինձ մո՛տ եք մնալու. չե՛մ հուսա, որ մեկը կարող լինի ինձանից ձեզ պահանջել. ձեր երկուսին էլ հանգիստ, ապահով տեղափոխվելը կարգադրելու եմ:

Նույն ժամանակ Ֆիլիպ Արփիարյանը՝ այն ժամանակ հազիվ 29 տարեկան մի երիտասարդ, 1912 թվից սկսած՝ որպես ճարտարագետ-երկրաչափ աշխատում էր Բաղդադի երկաթգիծը սարքող «Ֆիլիպ Հովճման ակցիեն կեզել-շաֆթ Ֆյուր Բաղդադ պահն» գերման ընկերության երրորդ ղեկիցիայում: Նա թուրքերից ճանաչված էր որպես ավստրիացի գերման և բնակվում էր Հալեպի Սալիբե (Սուրբ Խաչ) արաբ քրիստոնյաների թաղամասում: Եվ երբ Զոհրապից իմանում է Նետիմ պեկի հետ նրա տեսակցության արդյունքը, ասում է.

— Կարո՛ղ եմ քեզ ապահով պահել ինձ մոտ, մինչև պատերազմի վերջ, կասկածից զերծ. արի՛ ինձ մոտ. հենց այսօրվանից, սակայն չե՛մ կարող երաշխավորել Վարդգեսին. նա էլ մի կերպ թող յուր գնա՛ և համակերպի կացության:

Զոհրապը հուզված և ընկճված պատասխանում է.

— Սիրելի՛ Ծիլիպ, վստահ եմ, թե դու կարող ես ազատել իմ կյանքը, սակայն ի՞նչ արժեք ունի այդ. չե՞ս մտածում, թե Հալեպ հավաքված 300 հազարի մոտ գաղթական հայերը, որոնք Կ. Պոլսի շրջաններից, Արևելյան նահանգների մի մասից, Կիլիկիայից են գաղթել, և ի՞նչ դժբախտ կացություն են մատնվելու նրանք, իմ պատճառով բոլորին էլ կոտորելու են. ո՛չ, չե՛մ ընդունի առաջարկդ և ո՛չ էլ կբաժանվեմ իմ բախտակից Վարդգեսից, հանձնվում ենք ճակատագրին...

Ճեմալը տասն օր մնում է Հալեպ քաղաքում և նորից ետ է վերադառնում Դամասկոս։ Նրա մեկնումից առաջ Նետիմ պեկն ապահովել էր Ձոհրապի և Վարդգեսի փոխադրումը իր կալվածք, որը գտնվում էր Ուրֆա քաղաքից 10 կմ հեռու Պիրեճիկ գյուղաքաղաքում։ Մի քանի օր վերջ Նետիմ պեկն էլ մեկնում է։ Երեք օր անց հեռագրում է Ձոհրապին՝ ճամփա ելնել։ Նահանգապետ Հիքմեթ պեյն ապահով երկուսին էլ ոստիկան զինվորների մի ջոկատի հսկողությամբ ուղարկում է Նետիմ պեկի մոտ։

Հաղիվ թե երեք օրվա փոխադրվել էին, հանկարծ վրա է հասնում հրոսապետ Իպրահիմ Խայրի պեյը և Նետիմ պեկից պահանջում է երկուսին էլ հանձնել, որոնք տարվելու էին Դիարբեքիր (Տիգրանակերտ)՝ դատվելու...

Նետիմ պեկն ընդդիմանում է և ծայր է տալիս կծու բանավեճի։ Վերջում ասում է հրոսակ Խայրին.

— Իպրահի՛մ, քո միտքը ես լա՛վ եմ հասկանում, արի՛ համաձայնվենք. հազար օսմանյան ոսկեղրամ կանխիկ, երկու այնքան էլ արժեքով Ձոհրապի մատի մատանին և ժամացույցը քեզ փեշքեշ. մի՛ մերժիր ինձ և նրանց խնայիր, ո՛չ մեկը չի կարող բան իմանալ։

Ջեթեճի գազանը բորբոքված՝ ծոցից դուրս է հանում մի հեռագիր և ցույց է տալիս Նետիմ պեկին՝ ասելով.

— Կարդա՛, հրամանը վերևից է, ուր որ էլ լինեն, տանելու եմ։

Ահա հրամանագրի պատճենը. «Բնաջնջում քաղաքական հանցապարտներ Ձոհրապ և Վարդգես դավաճաններին»։

Նետիմ պեկը հեռագիրը կարդալուց վերջ ասում է.

— Իպրահիմ, այստե՛ղ երկու գնդակ խփիր և մահաց-  
րու երկուսին էլ, որ կարողանամ նրանց դիակները թա-  
ղել՝ ազատելով նրանց գիշատիչ գազանների կեր լինե-  
լուց:

Խայրին մտիկ չի տալիս և ասում է.

— Դիարբեքիր եմ տանելու, որտեղ դատվելու են:

Եվ նստեցնում է երկձի կառքի մեջ և կառապանին էլ  
հրամայում.

— Անհավատ խոզ մա՛րդ, կառքը քշիր Քարե կամուրջ:

Հետագա դեպքը՝ վավերական, ինձ պատմել է հրոսակի  
Հայ կառապանը՝ եղեսիացի քարտաշ վարպետ Մարտիրոս  
Հարությունյանը, 1928 թվին Հալեպում, երբ նա աշխա-  
տում էր ճարատարագետ Ֆիլիպ Արփիարյանի շինարա-  
րության մեջ՝ ամերիկյան արաբ քրիստոնյա (բողոքական-  
ների) դպրոցի շինությանը:

«Երբ հասնում ենք Թաշ Քյոփրյու կամուրջի տակ, և  
պատրաստվում էի կառքը անցկացնել ջրից մյուս կողմ,  
հանկարծ չեթեճին գոռաց. «Տո՛ւ անհավատ խոզ, կեցրու՛-  
կառքը, գո՛րծ ունենք»:

Կառքը կեցրի, գազանը հարձակվեց իր մոտ նստած  
Վարդգեսի վրա, որը արդեն չչմել էր հուզմունքից: Նա  
ոչ մի բողոք չի անում. նրան քարշ տվեց ցած, պառ-  
կեցրեց գետնին և ոչխարի նման կտրեց նրա վիզը: Ար-  
յունը վշշում էր: Երբ անշարժացավ, այս անգամին հո-  
վազի նման նորից ցատկեց կառքի մեջ՝ Զոհրապի վրա,  
որը դիմադրեց նրան ձեռքերով: Պահանջում է աջ ձեռքի  
մատանին, որը նվեր էր ստացել Զոհրապը Շիմտիտանի  
քուրդ աշիրեթապետ Իպրահիմ պեկից, որի որդին կա-  
խաղանի դատապարտված է եղել և սակայն Զոհրապի  
պերճախոս պաշտպանողականով ազատվել է մահվանից:  
Զոհրապի երկար մաքառումին հրոսապետը վերջ է տալիս՝  
դաշույնի մեկ հարվածով կտրելով նրա աջ ձեռքի մատ-  
ները, հափշտակում է մատանին և մատները դեն է գցում  
հողի վրա: Զոհրապը նվաղած՝ գլուխը ցած է գցում

կառքի բարձիկին: Գաղանը նրա բաճկոնի վրայից պոկում, հանում է նրա գեղակերտ ոսկե ժամացույցն էլ, որը ընդելուզված էր աղամանդներով, և նրա անունը քանդակված էր ականերով: Այս ժամացույցն էլ նվեր էր ստացվել: Վերջում ոտքի հարվածներով դժբախտ Զոհրապին կառքից վար է գցում. քարշ տալով կառապանի օգնությամբ՝ պառկեցնում է Վարդգեսի անշունչ դիակի վրա. վերջում, կառքից առնում է մի սև երկար քառակուսի վաթսուն սանտիմանոց մեխ, ուղիղ խփում է Զոհրապի սրտին, մինչև որ մեխը հողի մեջ է մխրճվում: Գործը լրացնելուց վերջ հրամայում է կառապանին քշել կառքը Ուրֆա քաղաք: Բայց նույն գիշերն իսկ, Եդեսիայի հերոսամարտին մասնակցող մի քաջերի խումբ գալիս և երկուսի դիակներն էլ կամուրջի մյուս կողմը՝ պատվանդանի տակ, թաղում են:

Այսպես է վերջանում աննման Վարպետի կյանքը...

Հանգիստ նրա հոգնատանջ ոսկորներին:

29 փետրվար, 1929, Հալեպ

## ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ



...Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին, Պոլսի հայ բժշկական դասի կողմից բացվում է հիվանդապահության դասընթաց, որի նպատակն էր պատրաստել քույրեր:

Ռ. Սևակը ծափեր է խլում իր հանկուցիչ և օգտակար դասախոսությունների համար:

Մաքրի քեոյի զինվորական հիվանդանոցում իր պաշտոնը կատարած միջոցին աքսորվում է մտավորականների շարքին դեպի Չանդըրը, որտեղ գտնվում էին նույնպես ութ հայ անվանի բժիշկներ, որոնցից երկուքը պրոֆեսորներ՝ դոկտոր Վ. Թորգոմյանը և Տիտանյանը, որը վիրաբուժական գործողություն էր կատարել չեթեճի առաջը Իսմայիլ Կյունտյուզի աղջկա՝ Կյունազի վրա: Բժիշկ Տիտանյանն ազատվում է և Պոլիս վերադարձի պահին Սևակին է հանձնարարում թուրք աղջկա վիրադարմանումը կատարել:

Սևակի թուխ դեմքը, գեղեցիկ աչքերն ու անուշ խոսվածքը պատճառ են լինում, որ Կյունազը սիրահարվի նրան:

Մի օր էլ չեթեճի առաջը Իսմայիլը կեսօրվա ճաշին հրավիրում է Սևակին, որը առանց գիտակցելու, թե ինչ էր վերապահված, ընդունում է հրավերը: Ճաշից վերջը Իսմայիլն ասում է Սևակին.

— Մեղքանում եմ քո երիտասարդության, արի՛ մու-

սուլման դարձիր... Թե՛ մահվանից կազատվես, և Թե՛ քեզ մեծ բախտ է վերապահված: Թե չէ՝ վճիռն ելած է. բոլորդ էլ սպանվելու եք, առանց բացառություն:

Սևակը բոլոր շլացնող խոստումները մերժում է և ասում.

— Իմ կինը գերմանուհի է. երկու տղա էլ ունեմ, մինը՝ հինգ, մյուսը՝ երեք տարեկան: — <Եվ շարունակում է>, Թե օրեցօր սպասում է գերման դեսպան Վանկենհայմից իր ազատ արձակման հրամանին:

Իսմայիլի ջատուկ մայրը Սևակի ճակատը համբուրում և ասում է.

— Որդի՛, գութ ունեցի՛ր քո ջահել տարիքին և իմ Թոռանը՝ Կյուլնագին, որը սիրում է քեզ, արի ընդունիր Իսմայիլի ասածը և երջանկացրու Թոռանս:

Սակայն Սևակն անդրդվելի է մնում՝ հուսադրվելով իր կնոջ խոստումներով և նամակներով, Թե «մոտ օրերս կազատվես»:

Սակայն ճակատագրական օրհասը գալիս է. 1915 թվի օգոստոսի 13/26-ին, հինգշաբթի օրով, արշալույսին կառք են նստեցնում Սևակին, Վարուժանին և Հրանտ Մազազա-ջյանին, որպես Թե երեքով գնալու են Այաշ՝ Սարի ղըշլա բանտը:

Չանդըրըի նահանգապետի տեղակալը, որը Սևակին շատ էր սիրում, քանի որ նա մահվանից փրկել էր նրա կինը, ամեն բարյացակամ կարգադրություն անում է՝ նրանց ողջ-առողջ փոխադրությունը ապահովելով: Սակայն հազի՛վ Թե երեք ժամվա ճանապարհ էին գնացել, Թյունեյ գյուղի ձորում երեքին էլ չարաչար սպանում են: Նույն գիշերն իսկ, նրանց սպանման լուրը հեռախոսով իմաց է տրվում Չանդըրըի ոստիկան ղինվորների հրամանատար Նուրետտին և Իթթիհատի պատասխանատու քարտուղար Օղուլ պեյերին, որոնք հրճվանքով և քրքիջներով ընդունում են գույժը: Կառավարչի տեղակալը, երբ լսում է Սևակի և նրա երկու ընկերների սպանման լուրը, կատաղած իր մոտն է կանչում երկու հրեշներին՝ անպատ-

վելով նրանց՝ «ոճրագործներ» որակելով: Այսպես զոհվեց  
Ռ. Սևակն էլ հայկական գողգոթայի ճամփին. թեև նրա  
սպանվելուց հինգ օր վերջ նրա ազատ արձակման հրա-  
մանագիրը հասնում է:

## ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ



Օտյանին ճանաչել եմ 1904 թվին, երբ նա Փարիզից Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը փոխադրվեց և հորս մոտ հյուր մնաց երեք ամիս: Հայրս Օտյանին՝ որպես հաշվապահ-քարտուղարի, տեղավորել էր Պաղջյան չուգունի գործարանում. այդտեղ է, որ նա ստեղծում է իր մտքում իր ապագա գործերի մտատիպար Իգնատ աղային, որը ուրիշ մեկը չէր, եթե ոչ Պաղջյանի գործակից Կարապետ Տիրհեմջյանը՝ հեղահամբույր, բարի, ընկերասեր, ազնիվ հայը, որի հետ շատ մտերմացել էր Օտյանը:

1904 թվի ձմռանը երեք շաբաթվա արձակուրդով Բարեկենդանի տոների առիթով Վենետիկից Աղեքսանդրիա էի ժամանել: Անմիջապես մտերմացա նրա հետ, և մինչև վերջ էլ անհուն սիրով կապված էլ մնացել ենք իրար հանդեպ:

Առաջնակարգ խմող և ո՛չ հարբեցող էր Օտյան, ինչպես և Կարապետ Տիրհեմջյանը, որը հաճախ իր տուն էր հրավիրում Օտյանին՝ միասին խնկարկելու Բաքոսի տաճարին...

Հայրս այդ ժամանակ Աղեքսանդրիայում արդեն ուներ կարգին սարքված տպարան և հրատարակում էր «Փյունիկ» շաբաթաթերթը:

Մի անգամ Օտյանը հանաք է անում և մի տոմս է գրում՝ ուղղված Կարապետ աղա Տիրհեմջյանին՝ իր մտերիմ ծանոթին:

Հազիվ թե գրասենյակից ներս է մտնում Կարապետ աղան՝ տեսնում է մի փակ գրություն, ծրարի վրա՝ իր անունը. վերցնում է, բաց է անում և ահա՛ ինչ որ կարդում է.

Աստ հանգչի Կարապետ աղան,  
Կարճուկ հասակով աշխարհի պելան.  
Ափսո՛ս որ մեռավ շա՛տ վաղ ատենին,  
Առանց ճնկելու անմահական օղին:  
Հանգիստ հոգույն հաջի Կարապետիկին:

Խեղճ մարդը հուզված շունչն առնում է հորս մոտ:  
Հայրս մի քառյակ գրում տալիս է Տիրհեմջյանին՝ ասելով,  
որ դնե այդ գիրը Օտյանի գրասենյանի դարակում: Ահա՛  
քառյակը.

Այս է տապան Երվանդի Օտյան,  
Գրող էր, կրողը\* տարավ զինք Ատյան:

Օտյանն իրեն ուղղված երկտողը կարդալիս չի կարողանում զսպել ծիծաղը և ասում է.

— Կարապե՛տ աղա, սրանից վերջ դու իմ գրվածքների մտատրիպարն ես լինելու, քեզ նոր անունով մկրտում եմ. «Իգնատ աղա, Բաքոսի բազինին խնկարկու»:

Հազիվ թե հինգ օրվա էր, որ ժամանել էի Վենետիկից: Օտյանը գաղափար է հղանում հրատարակել «Ազատ խոսք» թերթիկը, որից հորս թիվ արդեն Փարիզում հրատարակել էր: Ես, լինելով կարգին շարող և նվիրված տպագրական արվեստին, նրա փափագը անմիջապես գործադրում եմ և մի մամուլ, գրքի ձև, շարում և տպագրում եմ, թուղթի ծախսն էլ ինձանից, հազար օրինակ միայն և հատը քսան կոպեկ վաճառքի գին նշանակված:

Այս «Ազատ խոսքի» հինգերորդ թիվը լավաշի նման սպառվեց: Օտյանն իր մշտազվարթ և պայծառ հստակա-

---

\* կրող — խոլերա կամ ժանտախտ:

տեսուլթյամբ երգիծական գրչով հարձակվել էր եգիպտահայ ծխախոտի մեծ գործարանատեր կեսարացի Գրիգոր և Կարապետ Մելքոնյան եղբայրների վրա:

Օտյանը «Վաճառականի մը նամակները» վերնագրի ներքե գրել և հարց էր տվել, թե «ի՞նչ է տարբերությունը պոլիցայի (չեք) և պոլիցայի (հրեա կիներն են ասում)»: Եվ վաճառականը որպես թե պատասխանում է. «Պոլիցայը (չեքը) քաշում եմ առևտրականին, իսկ պոլիցայը (հրեա կնկանը)՝ իմ...»

Մելքոնյանն այս տողերը կարդալիս չի կարողանում զսպել իր ծիծաղն ու անմիջապես հինգ ստեղծված ոսկու արժեքով մի բանկնոթ զետեղում է ծրարի մեջ՝ հետևյալ գրությամբ. «Օտյան, անուշ արա, քեյֆիդ նայի՛ր, ո՛վ սրամիտ հայ, միշտ գրիր այսպես խոշ բաներ. մե՛ղք, որ կեսարացի չես ծնվել. եթե փողի կարիք ունենաս, դիմի՛ր ինձ»:

Օտյանը ո՛չ մի ժամանակ սակայն չի դիմել փողի համար:

«Ազատ խոսքի» այդ համարը գրեթե մեկ-երկու ժամվա մեջ սպառվել էր, վաճառողը հավաքած փողը, ամբողջովին խուրդա, մի թաշկինակում ծրարված, բերում հանձնում է Օտյանին, որն անմիջապես ինձ մոտ գալով՝ ասում է.

— Արի՛, Վաղինակ ջան, թերթը քո շնորհիվ լույս է տեսել և վերածվել փողի: Այժմ պետք է հալեցնել նրան Բաքոսի հնոցում:

Հետևյալ օրը ես նալ էի առնելու՝ «Բրինտիզի» նավահանգիստ գնալու, որտեղից՝ ուղիղ Վենետիկ, քանի որ արձակուրդս լրանում էր: Պնդելն օգուտ չունեիր, չորս հոգով (Օտյանը, Միքայել Կյուրճյանը, Լևոն Շիշմանյանը և ես) գնացինք ծովեզր, քարափի վրա «Վինձոր» հյուրանոցի պուրակ և սկսում ենք խմել: Օտյանը, Շիշմանյան\* դերասանի հետ օղի էին խմում՝ իրարու դեմ պայքար մղելով, թե ով կարող է լինելու նոկաուտ, իսկ Կյուրճյանը

---

\* Շիշմանյանը Մ. Կյուրճյանի «Զարչը Արթին աղա» կոմեդիայում Արթինի դերն է կատարել:

և ես խմում էինք բիվա: Երբ վերջանում է ըստ հաշվի վերջին կուպեին իսկ, ճամփին չորսս էլ մի պատի ներքև կանգ ենք առնում... միգելու, մեր բնական պետքը հոգալու...

Հանկարծ Օտյանն ասաց.

— Գնում է...

— Խնչն է գնում, Օտյան, — հազիվ թե հարցնում եմ: Պատասխանում է.

— «Ազատ խոսքը»... գրվեց, տպվեց, սպառվեց՝ մեզ դառնալով:

Այս սրամտությունը տարիներ վերջ, 1919 թվի գարնանը, երբ 15 տարի անցած էր դեպքի վրա, Օտյանը միշտ էլ հիշում էր օղու սեղանների ուրախ ժամերին:

1908 թվի անիծյալ սահմանադրության հռչակումով, Օտյանը և հայրս ընտանիքով գնում են Պոլիս: Հայրս՝ «Մանգումե» օրաթերթին, Օտյանն էլ «Ժամանակին» են աշխատակցում: Օտյանը գրում էր «Առավա տոմսերը» և մի թերթին: «Առավա տոմսերը» միշտ էլ լինում էին Թյուրքիայի քաղաքական նժարի վրա: Նա առաջին անգամ գրեց «Տասներկու տարի Պոլսեն դուրս» (1896–1908 թթ.) համբավվոր երգիծական վեպը: 1913 թվին էլ առանձին հրատարակեց ամսեամիս «Մանանա» պարբերականը: Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց քիչ առաջ Օտյանը «Ժամանակ» օրաթերթում սկսեց հրատարակել «Թաղականին կնիկը» երգիծական վեպը: Այս վեպը կիսատ է մնում՝ Օտյանի աքսոր գնալով: Եվ երբ բախտը ժպտում է, և ողջ վերադառնում է Օտյանը Դեյր էզ Զորի սպանդից, իմ խնդրանքի վրա ամբողջացնում է գործը: Ինձ վիճակվեց այս գեղեցիկ վեպի առաջին տպագրությունը լրիվ հրատարակել 1920 թվին: Ափսո՛ս, որ այս հոյակապ վեպի տիպարների մեծ մասը զոհվել է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:

Օտյանը 1915 թվի աշնան սկիզբը Պոլսից աքսորվում է Հալեպի ուղղությամբ, երկաթգծի վրա գտնվող քաղաքները մեկ-մեկ թափառելուց վերջ, ամեն տեղ էլ առանց

գինետուն հաճախելու չի մնում և մի՛շտ խմիչք գտնում է հյուրասիրողների մոտ: Վերջին աքսորավայրն է լինում Դեյր էզ Ջորը, որտեղ իր կարգին քաջ ֆրանսերեն գիտնալուն՝ դիմում է այնտեղի գերման հրամանատարութայնը և որպես թարգման թուրքերեն և ֆրանսերեն լեզուների՝ ծառայում է գերման հարյուրապետ Ֆոն Շլախտի մոտ, որը բաց էր արել գաղթական այրի և անօգնական կիների և աղջիկների համար աշխատանոց՝ տրիկոտաժի, բրդեղեն և բամբակի հյուսվածքների մանարան: Աշխատող գաղթականները լինում են Կարին քաղաքից աքսորվածներ:

Դեյր էզ Ջորի թուրք վերին հրամանատարը լինում է մի հայատյաց շուռ, որը սնվում էր հայ կուլյսեր լլկելով... Մի օր էլ այս վատ թուրքը Օտյանին տեսնելիս ասում է.

— Գնա՛, իմ հարգանքները հաղորդիր հրամանատարիդ. ասա, թե այս գիշեր գինարբուքի սեղան եմ պատրաստել տալիս, որտեղ պարելու են բոլորովին մերկ կուլյսեր և հարսներ, թո՛ղ հրամե՛, անպայաման, սպասում եմ, լավ քեյֆ ենք անելու:

Օտյանը հուզումով և նկարագեղ ոճով այս բոլորը ասում է Ֆոն Շլախտին և մանավանդ՝ հայկական մարտիրոսագրության դրվագները և թուրքերի խժեժությունները: Փոն Շլախտը՝ չափից ավելի ազգաված, անմիջապես մարդ է ուղարկում թուրք հրամանատար գնդապետ Նուսրեթ պեյի մոտ, որ անմիջապես գա իր մոտ: Սա իր հույն թագմանը՝ Նիկոլաքի էֆենդին, հետն առած հազիվ թե ներս է մտնում գերման սպայի կաբինետը, Ֆոն Շլախտը կատաղած ասում է Նիկոլաքիին, որ բառացի թարգմանի իր ասածները.

— Ասա՛ այս չանը, որ չեմ հանդուրժում այս գինարբուքին, որը չպետք է տեղի ունենա: Հրամայում եմ, որ երկու ժամվա ընթացքին թուրք աշխատանոցներում դըտնըվող բոլոր հայ ղեռախտներին հանձնելու է մեր հրամանատարությանը: Այլևս բա՛վ է այսքան սրիկայություններ, մենք գերմաններս կարող ենք նրանց դործ հայթայթել:

Թարգման Նիկոլաքին սխալ է թարգմանում.

– Ֆոն Շլախտը ներողություն է խնդրում և չի՝ կարող մասնակցել:

Օտյանը, երբ տեսնում է, որ Նիկոլաքի թարգմանը սխալ է ասում, կամաց Ֆոն Շլախտին հասկացնում է: Սա կատաղած ոտքի է ելնում և «կավատ» ասելուց վերջ հրամանատարին, որը այլայլված չի հասկանում անցած-դարձածից, Օտյանին էլ հրամայում է բառացի թուրքերեն թարգմանել իր ասածները:

Օտյանը, սիրտը արնով լցված, համարձակ ասում է.

– Տո շուն, շտապ գաղթականներին ուղարկիր գերմանական հրամանատարություն:

Հանկարծ նորից Ֆոն Շլախտը ոտքի է ելնում և կցկլտուր թուրքերեն ասում է.

– Շուն, այստեղ գերմանական հող է, շտապ բաց թող հայ կանանց և աղջիկներին:

Նույն գիշերն իսկ հեռագրում է Բաղդադ՝ ընդհանուր հրամանատար Ֆոն դեր Կոլց փաշային, և գնդապետի պաշտոնադրկման հրամանը բերել տալիս ու նրան ձերբակալված ձեռնակապով ուղարկում է վերին հրամանատարություն:

Այսպես Օտյանը կարողանում է հաղարից ավելի դժբախտների ազատել:

Զինադադարին, երբ Օտյանը ողջ վերադարձավ, իմ սրտակից ընկերոջ օղու սեղան սարքել տվի «Թոքաթլը» եղբայրների ծանոթ հայ խմիչքարանում և մինչև օրս էլ չեմ մոռանա, երբ բոլորված սեղանի շուրջ, մտերիմներից և սիրողներից շրջապատված՝ Օտյանը պատմում, ուրախացնում և լացացնում էր բոլորիս իր սրամտություններով:

Այդ գիշեր Օտյանը 72 միջակ օղու բաժակ էր պարպել... առանց ջրի, որպես աղանդեր՝ ուտում էր քամված մածնով թանձր թան, սխտոր-վարունգով: Նա բնավ էլ չէր հարբում: Նրան հավասարվող միայն Մուսթաֆա Քեմալ դադի փաշան է եղել: Օտյանը նորից սկսում է

աշխատակցել «Ժամանակ» օրաթերթին և գրում է «Անի-  
ծյալ տարիները 1915–1918 թթ.»՝ Պոլսից մինչև Դեյր էզ  
Ջոր հայկական տառապանքների և մարտիրոսագրության  
վրա հուզիչ ոճով (ափսոս, որ այդ հոյակապ դոկու-  
մենտալ գործը գրքի չի՝ վերածվել...)

1919 թվի աշնանը թելադրում եմ Օտյանին ունենալ  
սեփական թերթ. մինչև իսկ թերթի անունը ես եմ հղացել.  
«Սև կատու» երգիծական շաբաթաթերթը, որը լրիվ մի  
տարի հրատարակվեց:

Օտյանն իր կյանքումը փող բնավ չի սիրել: Ինչ-որ  
օրը օրին շահել է, ծախսում էր՝ առանց մտածելու վաղվա  
մասին:

Քեմալական շարժումի արագ ծավալումի վրա, հորի-  
զոնը նորից մթագնեց: Ամեն մարդ իր գլխի ճարին էր  
նայում: 1922 թվի նոյեմբերի 23-ին զանգվածային փա-  
խուստը ծայր է տալիս: Օտյանը Պոլսից ուղևորվեց  
«Պրենչիփեզա Մարիա» շոգենավով փախչում է Կոնստան-  
ցա, որտեղից՝ մայրաքաղաք Բուխարեստ: Այնտեղ չափից  
ավելի տաժանելի, աղճավոր կյանք է անցկացնում:

Վերջապես 1925 թվին հրավեր է ստանում Լիբանանի  
մայրաքաղաք Բեյրութից՝ աշխատելու Միքայել Շամտան-  
Ջյանի և մի քանի նորահաս գրողների հետ միասին: Հա-  
զիվ թե մնում է վեց ամիս, և ահա՝ նրա առողջությունը  
քայքայվում է, և ընկնում է հիվանդ:

Հուրը հասնում է Կահիրե: Օտյանի մտերիմ և վաղեմի  
ծանոթ Վահան Մալեզյանը (բանաստեղծը) և Վահան Թե-  
քեյանը անմիջապես հրավիրում են նրան: Այնտեղ կադ-  
դերսվում է և նորից լծվում գործի՝ գրելով ռամկավար-  
ների «Արև» օրաթերթում երգիծական էջեր և «Արտաքին  
լուրերի» թարգմանություններ օտար թերթերից:

Եզիպտոսում Օտյանի առողջությունը քանի՞ գնում  
վատթարանում է. փոխադրում են հիվանդանոց, որտեղ  
նրան խնամող բժիշկները խստորեն արգելում են օդու գոր-  
ծածությունը և որպես սնունդ նրան տալիս էին արգանակ  
և կանաչեղեն. սակայն նա օր օրի դեպի վատն էր գնում:

Մի անգամ իմ կրտսեր եղբայրը՝ Հայկ-Լևոնը, որը բնակվում էր Կահիրե, գնում է Օտյանի մոտ տեսություն, հետն էլ մի լիտրանոց ամենայնով օղի է տանում: Օտյանն օղու շիշը տեսնելիս ասում է.

— Բյուրա՛տ, կյանքս դու փրկեցիր. այս էշերը (բժիշկներին է ակնարկում) չեն հասկանում, որ միայն օղին կարող է ապրեցնել ինձ:

Եղբայրս խոստանում է շաբաթվա մեջ երկու անգամ մոտը գնալ և տանել օղի...

Առաջին անգամին Օտյանն օղու դատարկ շիշը լուսամուտից չալրտում է պարտեզ: Երկրորդ անգամին, երբ նորից եղբայրս օղի է բերում, դիտում է, որ Օտյանը մի քիչ է՛լ ավելի լավ վիճակումն է: Հազիվ թե օղու կեսը խմում է Օտյանը, մնացած կես շիշ օղին դնում է անկողնու բարձի ներքև: Հիվանդապահ քույրերը, անկողինը հարդարելիս բարձի ներքևից հանում են օղին: Բժիշկները, հասկանալով, որ անպայման եղբայրս բերած կլինի այդ, արգելում են երրորդ անգամին օղու շիշով Օտյանի մոտ գնալ:

Օտյանի առողջությունը քայքայվել էր ալքոհոլամոլությունից:

Նա մահացավ 1926 թվին: Նրա հոգնած մարմինը հանգչում է Արփիարյանի կողքին:

ԵՐՈՒՆԱՆ  
(Երվանդ Սրմաքեշխանյան)



Կեդրոնականի գրասենյաններից  
Երուխանն սկսել էր գրել: Շատ էր  
սիրում Քրանսիական գրականու-  
թյուն, հմտանալով այդ լեզվին՝  
ներշնչվել է Մոպասանից, Ֆլոբե-  
րից, Զոլայից, Բալզակից: Թարգ-  
մանչի վարժություն ուներ: Նախ  
կարդում էր մեկ ամբողջ էջ, գիրքը փակում և սկսում էր  
թարգմանել հարազատ: Հիանում էր Մարսել Պրևոյի  
«Կնոջական նամականի»ների վրա: Երուխանը մի օր ինձ  
այսպես ասաց.

— Պրևոն իրապես լա՛վ է ճանաչել և թափանցել կնոջ  
հոգուն... Պոլ և Վիկտոր Մարկրիթ եղբայրները գրում են՝  
փո՛ղ չահելու, և վստահ եմ, թե ապականելու են սերունդը:

Չափից ավելի սիրում էր իրապաշտ դպրոցը:

Համիդական շրջանում՝ 1893–1896 թվերին, աշխա-  
տակցում է Վահան վարդապետ Տեր-Մինասյան Պարտի-  
զակցու հրատարակած «Լույս» շաբաթաթերթին: Երբ նա  
տեսնում է, որ թերթը ուշ է տպվելու, ինքն իսկ գրաշա-  
րություն է անում: Ժամանակ-ժամանակ աշխատակցում  
է Յուսուֆյանի «Արևելք» օրաթերթին՝ թարգմանություն-  
ներ անելով: Մի որոշ ժամանակ էլ Ռոգոս Սափայանի  
տպարանում զբաղվել է սրբագրություններ և մինչև իսկ  
գրաշարություն անելով:

1896 թվի Պոլսի ջարդին նրա ծննդավայրը՝ Հալըջօղլու  
գյուղը, հազարից ավելի զոհ է տվել, և այդ սպանդից

Սրմաքեշխանլյանը հրաշքով է ազատվել՝ այդ գիշեր Բերա Ս. Երրորդություն եկեղեցում մնացած լինելով: Այլևս չի մնում և Պոլսից փախչում է Բուլղարիայի Վառնա քաղաք, որտեղ զբաղվում է դասատվությամբ, միաժամանակ պարապում է՝ Հակոբ Գուրբեթյանի «Իրավունք» թերթին աշխատակցելով:

1904 թվի ձմռանը Բուլղարիայից Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքն է փոխադրվում Սրմաքեշխանլյանը՝ չափից ավելի վատ դրություն մեջ, գրպանում առանց մի կոպեկ ունենալու:

Հայրս այդ թվին Աղեքսանդրիա, Ազգային Պողոսյան դպրոցի դիրեկտորն էր, և հսկողությամբ ներքևում գտնվում էին երեք դպրոցներ. անմիջապես պաշտոնի է կոչում նրան Հայ և Փրանսերեն լեզուները՝ միաժամանակ հյուրասիրելով երեք ամիս մեր բնակարանում:

Հայրս Աղեքսանդրիայում հրատարակում էր «Փյունիկ» անուն մի շաբաթաթերթ և առաջարկում է Երուսաղիմի աշխատակցել: Մի քանի ամիս վերջ նա հորս առաջարկում է մի գրական ամսագիր հրատարակել՝ «Սիսվան» անուն, 32 մեծագիր էջերից, որտեղ առաջին անգամ գրում է «Զինորսին սերը» նորավեպը: Ափսոս, որ «Սիսվան»ը միայն երկու թիվ է հրատարակվում:

1906 թվին Սրմաքեշխանլյանն ամուսնանում է իր աշակերտուհիներից Եվնիկե անուն, գեղանի սելեկտ աղջկա հետ, մի նրբամարմին աղջիկ, որը հագիվ թե նրա կես տարիքը լիներ:

Եվնիկեն, լինելով զարգացած հայուհի և գիտակցելով ամուսնու գրականագետ լինելուն, հոժարությամբ միանում է նրան, քավորն էլ հայրս է լինում:

1908 թվին սահմանադրություն է հռչակվում Թուրքիայում, դեպի Պոլիս խոստում են գաղթական և հայրենաբաղձ հայեր, որոնց թվում՝ հայրս, Սրմաքեշխանլյանը և Օտյանը:

Սրմաքեշխանլյանն «Արևելք» օրաթերթում սկսում է գրել:

1912 թվին նրա՝ «Արևելքում» մի առաջնորդող հոդվածի վրա իթթիհատ պարտիան փակում է թերթը անորոշ ժամանակով: Արևելյան նահանգների խարբերդ քաղաքի ազգային ծխական դպրոցի դիրեկտոր հրավիրում են Սրմաքեշխանլյանին. կնոջն էլ՝ աղջկանց բաժնում հայերենի և ֆրանսերենի դաստիարակչուհի: Երջանիկ զույգը մեկնում է երկու անմեղունակ ձագուկներով:

Միշտ էլ ստանում էինք նրանց ուրախ նամակները: Թե՛ հայ և թե՛ թուրք հասարակությունը սիրում են Սրմաքեշխանլյանին, նրա հեզահամբույր բնավորության համար:

Ցավալի է ասել միայն, թե նա խարբերդում նետվում է դաշնականների պարտիան և մխրճվում է տիղմի մեջ:

Առաջին համաշխարահային պատերազմը ծագելիս հայկական վեց նահանգների հայությունը ընկնում է անդոհանքի մեջ: Մի օրվա մեջ խարբերդի հայ մտավորականությունը հավաքում և լեցնում են բանտերը: Հազիվ թե մատի վրա համրվող մի քանի առևտրական մեծահարուստներ, խելքի պտույտ տվող փրկագին վճարելով, ազատվում են մի որոշ ժամանակ: Սակայն, երբ սկսվում է ընդհանուր տեղահանությունը, նրանց էլ տանում և չարաչար մահով սպանում են, մտավորականներին է՛լ ավելի խուժեղությամբ չարչարելով մահացնում են, և խարբերդի նահանգը ամենից շատ է տուժել...

Սրմաքեշխանլյանն աքսորի նախօրյակին դիմում է խարբերդի ազդեցիկ մի ավատապետի՝ Մենեմեջլի օղլու Արիֆ պեյին, որը ծանոթ է լինում նրան. սա առաջարկում է.

— Զավա՛կս, ընդունիր հաք դինը, այն ժամանակ ես քեզ կարող եմ ազատել:

Սակայն նա, լինելով գաղափարի իսկական ազնի՛վ մարդ, զգվանքով մերժում և դերադասում է մահը: Հազիվ երկու ժամվա ճանապարհ էին գնացել և Սրմաքեշխանլյանին և նրա գաղափարի ընկերներին չեթեները չարաչար սպանում են: Նրա կյանքի սիրելիները խառնվում են

աքսորականների խմբին և հասնում են մինչև Ռաքթա... Մի շնձեր ճանտարմա, հրապուրվելով Եփնիկի գեղեցկութեամբ, աչք է տնկում այս դժբախտ հայուհու վրա՝ ուզեալով նրան տիրանալ, և միշտ էլ սիրալիր վերաբերմունք ցույց է տալիս՝ հույս ունենալով, որ ի՛րն էր լինելու այս կինը։ Վերջապես Եփնիկեն էլ հասկանալով այդ շնձեր գազանի մտադրութունը՝ ձայն չի հանում, մինչև որ հրամայում են թուլութից\* պատրաստված լաստով Եփրատի մյուս եզերքն անցնել։ Ճանտարման հրամայում է դըժբախտներին տեղավորել այդ լաստի վրա։ Վերջում մոտենալով Եփնիկին՝ ասում է.

— Տեսնում ես, թե որքան եմ պաշտպանում քեզ։ Հալեալ քաղաքն եմ տանելու քեզ իմ տունը, և իմ կինս կլինես։

Հազիվ թե հասնում են գետի հոսանքին, հանկարծ Եփնիկեն իր մեծ մանչուկին, որը հազիվ թե լիներ վեց տարեկան, գցում է ջուրը՝ ասելով.

— Գնա՛, գա՛վա՛կս, միացի՛ր հորդ, ես էլ եմ գալիս հետևիցդ։

Երկրորդ անգամին հինգ տարեկան Անահիտ աղջկանը գցում է ջուրը՝ նույն խոսքերն ասելով։ Վերջին անգամ, նորածին երեխան պինդ գրկած, ծիծղուն մի հայացք է գցում ճանտարմայի վրա, որը կարծում է, թե իսկապես ի՛րն է լինելու այս հայուհին, որը երկու գա՛վակներին ջուրը գցել էր։ Չափից ավելի ուրախանում է։ Հանկարծ Եփնիկեն էլ, նորածինին գրկած, նետվում է՝ հորձանքին հանձնելով ինքզինք, և վերջ է դնում այս տրագեդիային։ Այս պարագան ինձ պատմել են գաղթական վերապրող հայուհիներ Հալեպում։

Այսպե՛ս է նահատակվում պատվախնդիր հայուհին...

1930 թ. ապրիլի 23, Հալեպ

---

\* Թուլութը այժի մորթիներից ուռեցրած տիկեր են, որոնց վրա հաստ գերաններ էին կապված պարաններով։

## ՍԻՐԱՆՈՒՅԵ



Սիրանուշ... ի՞նչ դյուրին է ա-  
նուն. հայ ազգի Սառա Բեռնարն  
էր նա: Տաղանդավոր արվեստա-  
գիտուհու բեմական գործունեու-  
թյան վրա շա՛տ է գրվել. սակայն  
ոչ մի ժամանակ նրա ներքին  
կյանքի գրվագների վրա գրված-  
քի չեմ հանդիպել:

Նա մորս շա՛տ մոտիկ ազգականուհին էր. երկու քրոջ  
զավակներ էին նրանք:

Սիրանուշ և Ասողիկ Գանթարճյան քույրերը չափից  
ավելի թշվառ մանկություն են անցկացրել...

Երկուսն էլ գեղանի էին, մանավանդ Սիրանուշը՝ իր  
չեկ, ոսկեգույն մազերով, լեցուն մարմնով, հաստիկ,  
գունդ-կլոր, միջահասակ:

Շատ կանուխ նրանք նվիրվել էին Արվեստին:

Նախապես բնակվում են Կ. Պոլիս, Բերա, Ալթուն Պա-  
քալ թաղամասում, վերջում փոխադրվում են Վոսփոր,  
Ենի քեոյ, ծովեզերքից քիչ հեռու մի փայտաշեն տուն:

Երիտասարդ հասակում ամուսնանում է ավստրիացի  
գնչու մի ջութակահարի հետ, Լևանդեն ծագումով, որը  
Ավստրիայի կայսր Ֆրանց ժոզեֆից ազնվականության  
տիտղոս է ստանում: Ալբերեստ Կուլթմանը՝ Սիրանուշի  
ամուսինը, չափից ավելի խանդոտ է լինում. ա՛յն աստի-  
ճան անհանդուրժելի, որ Սիրանուշը վճռական որոշում  
է կայացնում և իր ընտանեկան հարկից փախչում է:

Նա անհուն սեր է ունեցել ինձ և կրտսեր եղբորս, քանի որ տղա զավակ չի՝ ունեցել, բացի մի աղջիկ զավակից։

Ինձ այսպես է պատմել իր փոթորկոտ կյանքի մասին. «Որդի՛, իմ կյանքի ամենագեղեցիկ շրջանը տևել է ո՛չ ավելի, քան հազար օր։ Իմ ամուսին Ալբերթոն չա՛տ բարի էր և սակայն չափից ավելի խանդոտ. այնքան, որ Արվեստի սիրույն լքեցի նրան, երկու տարեկան աղջկանս հետ զատվել եմ նրանից։

Ափսոս, որ աղջիկս է՛լ ավելի դժբախտացավ, և այսպես մորքուրդ (ինձ հետ խոսելիս միշտ ինքզինք մորքուր էր անվանում) կյանքում միշտ էլ անբախտացել է»։

Սիրանուշը չա՛տ չփացած, փառամոլ, պերճանքի մոլի, պճնասեր, փողը սիրող և դյուրաբորբոք ջղային էր, վա՛յ, եթե նրա խոսքը հաշվի չառնեին, մի կաթիլ ջրի մեջ փոթորիկ էր հանում, հայհոյանքն էլ նրա արվեստին մաս էր կաղմում, այն աստիճան, որ քա՛ր էր հանում ջրհան-կիրներին (Պոլսի թուլումպաճիներին)։

Համարյա թե իր կյանքի մեծ մասը անցկացրել է Կովկաս, Թիֆլիզում՝ հռչակ հանելով Արվեստի մեջ, շատ քիչ ժամանակ՝ Պոլսում, իր սկզբնական շրջանում և վերջն էլ քիչ անգամ բեմ է ելել։

Ասացի, թե պերճանքասեր էր. ահա՛ մի դրվագ նրա կյանքից։

Մի անգամ, Պոլսում, մետաքսե գեղեցիկ և թանկագին ժանյակներով մի շրջազգեստ է կարել տալիս անվանի դերձակուհի մադամ Գլենին, որը Պոլսի արիստոկրատիք դասակարգի և դեսպանուհիների, պալատական իշխանուհիների դերձակուհին է լինում։

Շրջազգեստը լրանալիս դերձակուհին իր մոտ աշխատող մի հույն կարուհու հետ ուղարկում է։ Զգեստը բերող աղջիկը համոզում է Սիրանուշին, թե մադամ Գլենը ո՛չ ձևել և ո՛չ էլ մի ասեղ չէ դպրել շրջազգեստին, և թե աշխատող աղջիկներն են կարել, և ինքը՝ այդ հույն կարուհին է ձևել։

Սիրանուշը, կատաղած, շրջազգեստի ծրարը տալիս է

բերող կարուհուն, ինքն էլ հետը կառքով գնում է ուղիղ մադամ Գլեռի տուն: Ֆրանսուզին տեսնում է Սիրանուշի այլայլած, հուզված դեմքը, չվարած հարցնում է.

— Ի՞նչ ունեք, սիրելի՛ս, ի՞նչ է պատահել...

Սիրանուշն առնական դեմք է առնում և ամազոնուհու պես հարձակվում է դերձակուհու վրա, կարգին ծեծում է և թքելով նրա երեսին՝ շարտում է շրջադեհատը՝ ասելով.

— Ինչու՞ խաբել ես ինձ, ո՞վ է կարել սա...

Սիրանուշը իր փառքը հյուսել է «Կամելիազարդ կինը» դրամայում՝ Մարգարիտ Գոթիեի դերում: Ես զարմանում էի և մի օր հարցրի նրան.

— Մորաքու՛յր, վաթսուն տարեկանիդ մոտենում ես, ինչքա՛ն լավ կատարում ես այդ դերը, սակայն ու՞ր ես թաքցնում քո կրճերը...

Նա երկար ծիծաղեց, հետո փաղաքուշ մի ապտակ իջեցրեց երեսիս և ասաց.

— Տեսնու՞մ ես, ուր են փախչել կրճերս:

Նա տանջվելով վար էր քաշել կրճերը և թաքցրել էր կորսածի տակ:

Թատերական քննադատները նրան անվանում էին Արևելքի Սառա Բեռնար:

Նա ինձ պատմել է նույնպես իր կյանքի դրվագներից հետևյալը. «Մի անգամ Եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեում խաղալու էի «Կամելիազարդ կինը». ինձ ասացին, թե Ֆրանսիացի անվանի դերասանուհի Սառա Բեռնարը Փարիզից եկել է Կահիրե՝ ձմեռը հանգստանալու, և զբոսնելով է Կիզեի մեծ հյուրանոցում: Անմիջապես զնացի նրա մոտ, ծանոթացրի ինքզինքս և խնդրեցի, որ չմերժի ինձ՝ ներկա գտնվելու իմ ներկայացմանը: Չմոռանամ ասելու, թե աշխարհահռչակ դերասանուհու գլխավոր դերն է լինում «Կամելիազարդ կինը» դրամայում Մարգարիտ Գոթիե: Նա ման է եկել Եվրոպայի մեծ ոստանները՝ մինչև իսկ Ամերիկա, Կանադա և տիրացել է մեծ համբավի: Չափից ավելի հետաքրքիր է լինում և խոստանում է չմերժել խնդրանքս:

Երկու օր անց գալիս և բազմում է պատվո լոժում:  
Այդ գիշեր աշխարհահռչակ դերասանուհին ինձմով էր  
վերացել, աչքն ուղիղ հառել էր ինձ վրա: Պիեսան վեր-  
ջանալիս գնացի նրա օթյակը՝ շնորհակալություն հայտ-  
նելու՝ խնդրանքս չմերժելու և գալու համար: Նա հուզ-  
ված ձայնով ասաց. «Շնորհակալ եմ, դուք ապրեցրիք  
ինձ. ահա՛ ձեզ հիշատակ եմ տալիս իմ պուդրիյեոնը, որը  
նվեր եմ ստացել Ռուսինիայի թագուհուց՝ բանաստեղծ  
Կարմեն Սիլվայից»:

Այս դեպքի մասին Սառա Բեռնարը 1905 թվին իր  
հրատարակած «Իմ կյանքի պատմությունը» հատորի մեջ  
հիշատակել է:

Ի՞նչ է եղել այս պուդրիյեոն տաղանդավոր արվես-  
տագիրտուհու մահից վերջ, չգիտեմ, դուցե թալանած լի-  
նեն:

1907 թվի նոյեմբեր ամսի վերջերին էր. Սիրանուշը  
գալիս է Ռուսինիայի Կոնստանցա քաղաքը՝ տեղի հայ  
հասարակությանը մի շարք ներկայացումներ տալու: Նրա  
խումբը կազմված էր արևելահայ հայտնի արվեստի վար-  
պետներից: Դեռ թարմ է մնում հիշողությանս մեջ Աբե-  
լյան-Արմենյան զույգը և Բերոյան երիտասարդ ապագա  
խոստացող արտիստը:

Հուշարար չունեին. ես Վենետիկից մի ամսվա արձա-  
կուրդով գտնվում էի հորս մոտ՝ Կոնստանցա:

Սիրանուշն ինձ դիմեց՝ ասելով.

— Որդի՛, քեզ տեսնեմ, երեսս սպիտակացրու, հուշա-  
րարություն անելու ես, տեսնում ես՝ մարդ չունենք:

Վեց ներկայացում տվեց. հետո պատրաստվեց տուռնե  
անել իր ընտրված խումբով դեպի Կահիրե:

Ես էլ վերադառնալու էի Վենետիկ: Վերցրի շոգենավի  
երկրորդ կարգի խցիկի տոմս. սակայն Սիրանուշն ինձ  
հանդիմանեց՝ ասելով.

— Ա՛յ մարդ, դու ո՞վ ես, որ երկրորդ կարգի տոմս ես  
վերցնում. ոնց որ լինի, հորս գիշերը շուտ է անցնելու:  
Տեսնու՞մ ես՝ խմբիս հետ ճամփորդում եմ պարզ:

— Լա՛վ, — ասացի և տոմսը փոխեցի:

Սիրանուշը որքան որ պերճանքասեր էր, սակայն չափից ավելի խնայող՝ ծախսելիս:

Մի անգամ հարցրի նրան.

— Մորքու՛ր, ինչու՞ այդքան չպարվում ես. մեկ կասես, թե մարդկանցից խորշում եմ... սակայն չե՛ս տարբերվում աղորիքում աշխատող աղորեպանից:

Նա պատասխանեց սառը.

— Արվեստի սիրուն ստիպված եմ լինում գեղեցիկ երևալ:

1909 թվին Սիրանուշը գալիս է Կ. Պոլիս՝ ամառն անցկացնելու իր հորենական տանը, միևնույն ժամանակ մի շարք ներկայացումներ տալու: Այս անգամին իր խմբի վրա ավելացել էր արվեստի վաստակավոր գործիչ Մանվելյանը: Պոլսահայ ժողովուրդը ապրում էր՝ վայելելով հայերեն ներկայացումներ...

Ես էլ նրա տանը հյուր էի գտնվում՝ խաղաղ մթնոլորտի մեջ թարգմանելու Ադանայի կոտորածի կապակցությամբ Հակոբ Պապիկյանի ռապորթը հայերենից ֆրանսերեն:

Երեքով ապրում էինք տանը. Սիրանուշը, նրա աղջիկը և ես:

Մի օր էլ հանկարծ գալիս է Թորգոմ արկածախնդիրը, որը չափից ավելի զբաղեցրել էր Փարիզի օտար մամուլը, քանի որ նա մենամարտի էր հրավիրել Պիեռ Լոթի համբավավոր ակադեմիական գրագետին, որը հայ ժողովրդին «նապաստակ» էր անվանել: Կա՛մ պետք է մենամարտեր և կա՛մ ետ առնել հայ ազգի երեսին չպրտած «վախկոտ նապաստակ» բառը: Իրա՛վ էլ. Լոթին ստիպվում է ետ առնել խոսքը:

Դժբախտ Սիրանուշը, տեսնելով այս գեղադեմ երիտասարդին, որպես մի հերոսի՝ հյուրասիրում և չափից ավելի հարգանք է ցույց տալիս. նա կարծում է, թե գուցե Թորգոմը համակրել էր աղջկանը...

Թորգոմը բնակվում էր մեզնից ո՛չ շատ հեռու մի հյու-

րանոցում. ամեն օր գալիս էր և սեղանակից էր լինում:  
Մի օր էլ այս Դոն ժուանը անհայտանում է՝ դժբախտաց-  
նելով աղջկանը:

Նույն թվի աշնանը Սիրանուշը մեկնում է Եգիպտոս,  
Կահիրե՝ իր սիրական գաղջ երկրում ապրելու...

Այլևս չտեսա նրան՝ տեղի ունեցող իրարահաջորդ  
դժբախտություններից:

Երեք տարի առաջ իմացա, թե Սիրանուշը մահացել է  
և ննջում է Մարմինայի աղղային գերեզմանատանը՝ գրող-  
ների թաղամասում՝ Արփիար Արփիարյանի, Երվանդ Օտ-  
յանի, Կունծիկ Աբեղայի, Միքայել Շամտանճյանի և Տի-  
կին Մսրլյան գրագիտուհու կողքին...



## ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ

Փափագյա՛ն... Իմ թանկագին ընկերը՝ Վենետիկի Մուրադ-Ռափայելյան գիմնազիոնից: Նա ավագ կարգումն էր, ես՝ կրտսերում: Դպրոցի գրասենյաններից նա մեծ սեր տվել էր դեպի թատրոնը...

Դպրոցում մեր հանդեսների փայլն էր ավելացնում: Նրա մասնագիտությունը լինում է Շեքսպիրյան դպրոցը:

Ասեմ, որ չափից ավելի ջղային էր. մի կաթիլ ջրի մեջ փոթորիկ հանելու պատրաստ. դասերի մեջ էլ ծուլ էր: Մի անգամ Դանիել Զպուքյարյանը (Հայտնի Վարուժանը) ասել է. «Վահրամն ապագա ունի ո՛չ թե դասեր սովորելով, այլ արվեստին նվիրումով»:

Սակայն պետք է խոստովանել, թե նա չափից ավելի սիրում էր կրտսերներիս և միշտ էլ օգնում մեր գծվար դասերին:

1905 թվի ամռանը գտնվում էինք դպրոցի ամառանոց Ազոլո գյուղը, որը Վենետիկից մի օրվա ճանապարհով հեռու էր: Հուլիսի 15-ին լինում էր Ազոլոյի տոնավաճառը, որը համբավավոր էր: Վենետիկից գալիս է մի թատերական խումբ՝ ներկայացումներ տալու:

Այդ գիշերին խաղարկելու էին «Օթելլո»: Ասում էին, թե Օթելլոյի դերը կատարողը Հայտնի վարպետ էր արվեստի: Ազոլոյի և հարևան գյուղերի թատերասեր խտլացի ժողովուրդը խուժել էր թատրոն: Դու մի ասի,

դերասանը կարգին հարբած է լինում՝ չափից ավելի խմած լինելով համբավավոր Քիանթի Ռուֆինո գինիից... Ի՞նչ անել. իմպրեսարիոն չվարած մնում է, երբ տեսնում է, որ դերասանը չի կարողանում գլուխը վե՛ր իսկ բռնել:

Հանկարծ հայտնվում է Վալերամ Պառտին (հայերեն թարգմանությունը՝ Վահրամ Փափազյան). սիրահոժար ստանձնում է կատարել Օթելլոյի դերը հայերեն, իսկ մյուս արվեստագետները՝ խաղերեն:

Նա իր դերը կատարեց կատարյալ վարպետի նման. այն աստիճան, որ իտալացի ժողովուրդը, որը ճաշակի տեր և մանավանդ արվեստ հասկացող, այդ գիշեր, ներկայացումից վերջ նրան ուսամբարձ տանում են քեյֆ անելու: Երկու օր անց Վենետիկի թերթերը գովքն են հյուսում Փափազյանին: Նա աչքի լույսն էր իտալացի համբավավոր դրամատուրգ էրմեստե Նովելլիի, որը այսպես է արտահայտվել Փափազյանի մասին. «Վալերամ Պառտին XX դարու նույն ինքը՝ Շեքսպիրն է. ուշադրություն, նրան հավասարը չի լինելու»:

1909 թվին մեր՝ Վենետիկից բաժանվելուց երկու տարի անց նրան հանդիպում եմ Պոլիս: Նա 1907 թ. Եգիպտոսի Ադեքսանդրիա և Կահիրե քաղաքներում տալիս է <ներկայացումներ> չեքսպիրյան ռեպերտուարից: Հայ թատերասեր ժողովրդից զատ, օտար մամուլի թատերական քննադատները հիացումով գնահատանքի տողեր են գրում: Այն ժամանակ հազիվ թե նա լիներ քսաներեք տարիքի մեջ:

Պոլսում «Պլտի Շան» թատրոնը լիքն էր հայ ժողովրդի բազմությունով: Պոլսահայերը ծարավի՛ էին, քանի որ բռնապետությունից ժամանակ արգելված էին հայերեն ներկայացումներ... Թնդում է սրահը կեցցենների մեջ, Փափազյանին ուսամբարձ տանում են հյուրանոց:

Փափազյանն իր փառքի ապոթեոզն էր հյուսել... Հազիվ թե կարճ ժամանակ մնում է Պոլիս, գնում է Թիֆլիզ՝ ծառայելու արևելահայ բեմին, անվանի վաստակավոր արտիստների հետ խաղալու...

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում մասնակցում է պարտիզանական խմբերին և լինում է թիկնապահ հայ մեծ զորավարների...

1925 թվին գնում է Փարիզ, ուր կայանալու էր Շեքսպիրյան համաժողով: Աշխարհի չորս կողմերից գալիս են անվանի վարպետներ: Փափազյանը գնահատվում է սովետական կինոյի վաստակավոր և աշխարհահռչակ իվան Մուժիգինից և Բորիս Կառլովից: Փարիզում իսկ մի քանի ներկայացումներ է տալիս, և ֆրանսիական մամուլը գովքն է հյուսում ու գրում. «Շեքսպիրը հարուժյուն է առել նույն ստեղծագործող Փափազյանի մեջ»:

Հետևյալ դրվագն ինձ պատմել է լոնդոնաբնակ հայտնի առևտրական Սարաֆյանը:

Լոնդոնի ամենամեծ և հայտնի թատրոններից մեկի դերեկցիան հրավիրում է Փափազյանին՝ Լոնդոնում խաղալու Օթելլո՝ հայերեն կատարելու պայմանով իր դերը, որը անգիր գիտեր, առանց հուշարարի:

Փափազյանը մեկ-մեկ ծանոթանում է իր արվեստի նոր ընկերներին՝ բոլորն էլ անգլիացի. զարմանում են, թե ո՞նց մի հայ կարող է պիեսային հետևել, քանի որ նա խաղարկելու էր հայերեն:

Ներկայացնում են նրան այն չփացած անգլուհուն, որը կատարելու էր Դեզդեմոնայի դերը: Աղջիկը, երբ տեսնում է նրա խոշոր, սև աչքերն ու ոսկե օղերը ականջին, սարսափած ասում է դիրեկտորին.

— Սարսափում եմ խաղալ այս մարդու հետ:

Սակայն դիրեկտորը հանգստացնում է՝ ասելով.

— Մի՛ վախենա, նա համաշխարհային համբավի տիրացած Արևելքի աստղն է:

Անգլուհին հանգստանում է: Երբ Օթելլոն պատրաստվում է հարձակվել Դեզդեմոնայի մահճակալի վրա, ուր քնած է լինում նա, հանդիսատեսներն իսկ շունչները բռնում և սարսափում են նրա ահարկու դեմքից... Անգլուհին էլ, մետաքսե վերմակի տակից երբ դիտում է նրա աչքերի սևուցը, մանավանդ ձեռքում ունեցած պսպղուն

դաշույնը, սրտատրոփ սպասում է վախճանին: Հանկարծ անդլուհին աղաղակ է բարձրացնում, երբ Օթելլոն հարձակվում է իր վրա, բղավում է.

— Կորսվե՛լ եմ:

Օթելլոն մինչև երախակալը մխրճում է դաշույնը Դեզդեմոնայի սրտին և վար է ցատկում դիակի վրայից ձեռներն արյունոտ: Հանգիսատեսները հուզումի են մատնելվում, սարսափած կարծում են, թե այս արևելքցին իրական ոճիր է գործել:

Սակայն անդլուհին այդ հուզումի պահին կամաց վար է սահում մահճակալից, հիացմունքով զոլվում է մեր սիրելի Փափազյանին և ասում է.

— Կյանքումս հարյուր անգամից ավելի խաղացել եմ Դեզդեմոնայի դերը, սակայն ո՛չ մի անգամ այսքան իրական դեպքի չէի հանդիպել: Նա հանճար է, և ո՛չ մի անգլիացի արտիստ այսքան իրական չէ՛ կարողացել կատարել իր դերը: Պատի՛վ Փափազյանին, ցավում եմ, որ նա անգլիացի չէ ծնվել:

Եվ իր մատի արժեքավոր մատանին նվիրում է նրան...

Փա՛ռք իմ պաշտելի երեց ընկերին, մաղթում եմ, որ նա խլի նորանոր դափնիներ ա՛յս ճանապարհին:

---

ԲԱՌԱՐԱՆ

աբարտման — բնակարան, հարկաբաժին  
ագարեթլեր — շահաբեր կալվածքներ  
Ալաման — Գերմանիա  
ալլահու էքպեր — Աստված մեծ է (նամազի առաջին  
խոսքերը)  
աղձավոր — տանջալից  
աղնամի — տուրքեր  
անդոհանք — վրդովմունք, տրամուլթյուն  
անճիտվել — բնաջնջվել  
աշիրեթ — ցեղախումբ  
առաբաջը — կառապան  
ասլը — ազնվացեղ  
արմյանին — հայ  
արտորանք — աճապարանք, շտապում  
բայրամ — մահմեդականների կրոնական շարժական տոն  
բար — գինետուն, գարեջրատուն  
բիվա — գարեջուր  
գահրաման — թուրք. ցեղախումբ  
գայմաքամ — նահանգապետ  
գարթբլանչ — ազատ իրավունք  
Գըսմը սիասի — ոստիկանություն քաղաքական բաժան-  
մունքը  
գլել-անցնել — առաջ անցնել, գերազանցել  
գոմանտան — հրամանատար  
գոմեռս — առևտուր  
գոշմառ — մղձավանջ

գուռ — հնոց, փուռ  
 դելի — խենթ  
 դիտապաստ — սպանված, տապալված  
 եղինձ — ձավարով փլավ  
 եմենի — մուճակ, չուստ  
 ենիչերություն — իսլամացված քրիստոնյա պատանիներ  
 րից կազմված զինվորություն սուլթանական թուրքիայում  
 զուլում — աղետ, արհալիրք  
 էլվիա — սուրբ  
 էմիր — խոշոր ցեղապետերի տիտղոս  
 էյթամ — ուրբ  
 էրմեն — հայ  
 էֆենդի — պարոն  
 ըզզիր — փոքր, կրտսեր  
 ըսլըրգ լեգեն — լվացարան  
 թալաք ընել — ապահարգան տալ  
 թաղ քիլիսե — թաղամասի եկեղեցի  
 թեզպիհ — համրիչ, տերոդորմյա  
 թեսլիմ լինել — հանձնվել, անձնատուր լինել  
 թեքքե — մեկլեխների աղոթավայր  
 թըրթըր — եզերքի շրջանակի սղոցվածք  
 թիֆուս — տիֆ  
 թուրստ — տրեստ, արտադրական միավորում  
 Իթթիհատ վե թերաքքը — երիտթուրքական «Միու-  
 թյուն և առաջադիմություն» կուսակցությունը  
 իրատե — հրովարտակ, որոշում  
 լոթ — օթյակ  
 խալիճի — գորգագործ  
 խային — նենգ  
 խան — պանդոկ, իջևան  
 խաֆիե — մատնիչ  
 խենեշ — ցուփ, պիղծ  
 խոշ — հաճելի  
 խոչ — խոյ  
 խուռմա փախլավասը — արմավով քաղցրավենիք

խուրդա — մանրադրամ  
 խոֆած — զառամյալ  
 կանկստեր — գանգստեր  
 կյավուր (գյավուր) — անհավատ  
 կոնծած — չորացած, կծկված  
 հանգրիճեւ — քշտել, հավաքել  
 հանրմ — տիկին  
 հանկուցիչ — գրավիչ  
 հաջ — հաջի, մահտեսի  
 հաք դին — ճշմարիտ հավատ  
 հյուրիեթ — ազատություն  
 հուրի մելեք — չքնաղ հրեշտակ  
 դապուր — շիրիմ  
 դաֆլե — գաղթ  
 դուամ — ցեղապետի հպատակ, ծառա  
 դոնախ — ապարանք  
 ճանտարմա — ժանդարմ, ոստիկան  
 ճանտարմա դոմանտանի — ոստիկանապետ  
 ճեննեթ — դրախտ  
 ճիրիդ — ձիախաղ  
 ճյումհուրիեթ — հանրապետություն  
 ճնկել — կոնծել  
 մանդալ — ածուխի վառարան  
 մավզեր — մառազներ հրաձիգ  
 մարձում — մերսում, մասաթ  
 մարմանդ — հովասուն վայր  
 մեճիտիյե — Աբդուլ Մեջիդ սուլթանի օրոք հատված  
 արծաթադրամ. արժեքը՝ 20 դուրուշ  
 մեպուս — թուրք. երեսփոխան  
 մեպուսան — թուրք. պառլամենտ  
 մելեի — մուսուլմանական աղանդավոր  
 մերտություն — ազնվություն, խոսքին հավատարիմ լի-  
 նելը  
 միսքին — անպիտան, աղտոտ  
 յես — այո

նամազ — մուսուլմանական աղոթք  
 նեպի — մարգարե  
 նիքյահ — պսակադրություն  
 շեյխ — ցեղախմբի առաջնորդ  
 շերբեթ — օշարակ  
 շերբեր բայրամ — մուսուլմանական տաղավար տոներից  
 մեկը  
 Ուրֆա քեպապի — Ուրֆայի խորովու  
 չեթե — ավազակախումբ  
 չեթեճի — ավազակ  
 չեոլ — անապատ  
 պահը — տիկին  
 պելա — փորձանք, պատուհաս  
 պեյ (բեյ) — թուրքական պատվանուն  
 պեյիդ — բեյթ, երկտող  
 պետվին — բեդուին, արաբ վաչկատուն ցեղ  
 պուդրիյեռ — դիմափոշու տուփ  
 պրենս — արքայազն  
 ջուր — խումբ, բազմություն, հոտ  
 ռահվան — արադընթաց նժույգ  
 ռապորթ — զեկուցագիր  
 սահիպ — տեր  
 սանդ — հավանգ  
 սատրաղամ — մեծ վեզիր, ապա՝ առաջին մինիստր,  
 վարչապետ  
 սելեկտ — ընտիր  
 սեկյուլյու քարտեշիմ — սիրելի եղբայրս  
 սոմուն — բոքոն  
 սուսի — կանաչ փշատերև եղեգ  
 սուրահ — Ղուրանի գլուխների անվանումը  
 սպահի — ալժիրական գինվոր  
 վատշվեր — անզգամ, չար  
 տանեմարքացի — դանիացի  
 տար-յուլ-էյթում — որբանոց  
 տեոնմե — հավատափոխ, ազգափոխ, ուժացած

տյուրզիներ — դրուզներ, մահմեդական կրոնի շիա  
 ուղղության իսմայիլական աղանդի հետևորդ արաբներ  
 տոնտուրմա — պաղպաղակ  
 տուռնե — շրջադայություն, հյուրախաղ  
 րահաթ լոխում — արևելյան քաղցրավենիք  
 փաչա — խաչ  
 փաչաջի — խաչ պատրաստող  
 քարափ — նավահանգիստ  
 քեյֆ — խնջույք. քեյֆիդ նայե — անհոգ եղիր  
 քեչե քյուլազ — թաղիքե գլխարկ  
 քլիք — խմբակցություն  
 քյունիֆե — արևելյան քաղցրավենիք (ղատայիֆ)  
 օթո քառ — ավտոմեքենա  
 օպա — վրանաբնակ քոչվորների ժամանակավոր բնա-  
 կատեղի

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                            |     |
|----------------------------|-----|
| ԹԱՆԳԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ .....     | 5   |
| ԻՆՔՆԱԿԵՆ ՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ ..... | 7   |
| ԹԵԶՊԻՀԸ .....              | 9   |
| ՇԵՅԽԻ ՈՐԴԻՆ .....          | 23  |
| ԱՐՅՈՒՆՈՏ ԹԱՇԿԻՆԱԿԸ .....   | 85  |
| ՀՈՒՇԵՐ .....               | 109 |
| ԲԱՌԱՐԱՆ .....              | 166 |

ՎԱՂԻՆԱԿ ԲՅՈՒՐԱՏ  
ԸՆՏԻՐ ԷԶԵՐ

Էջադրումը՝ Մերի Խաչատրյանի  
Սրբազրիչ՝ Օֆելյա Միքայելյան

Գրականության և արվեստի թանգարան  
Երևան, Արամի 1

